

**ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԵՆ ԾՐԱԳԻՐ  
(PforR)**

**P179336**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄՍՀԳ) ՁԵԿՈՒՅՑԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ**

**Մարտ, 2024թ.**

**ՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ**

«Էներգետիկ անցման ապահովման արդյունքահեն ծրագրի» (P179336) Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատումը (ESSA) մշակվել է Բանկի թիմի կողմից, որը կազմված է Ալկադևի Պաթելից (Սոցիալական զարգացման ավագ մասնագետ), Լուսինե Գևորգյանից (Բնապահպանական մասնագետ) և Սոնյա Մարյանից (Սոցիալական զարգացման մասնագետ):

## Բովանդակություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ .....	6
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	14
1.1 Նպատակներ .....	15
1.2 Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) մոտեցումը .....	16
2 ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ .....	19
2.1 Ծրագրի ոլորտային և ինստիտուցիոնալ ենթատեքստը .....	19
2.2 Կառավարության ծրագիր .....	19
2.3 Արդյունքահեն ծրագիր .....	20
2.2.1 Արդյունքահեն ծրագրի շրջանակ .....	20
Ծրագրի զարգացման նպատակ (ԾՁՆ) և ԾՁՆ մակարդակի արդյունքային ցուցանիշներ .....	21
2.2.2 Իրականացման մեխանիզմներ .....	22
3 ԱԿՆԿԱԼԿՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	24
4 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ .....	27
4.1 Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգ: Ներդրումների ֆիզիկական ենթակառուցվածքում .....	27
4.1.1 ՀՀ կառավարության քաղաքականությունը, իրավական կանոնակարգային շրջանակները 28	
4.1.2 ԲԷՑ-ի շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգի գնահատում .....	36
4.2 Սակագնի մեթոդաբանության և սակագների փոփոխություններ .....	43
4.3 Շուկայի ազատականացման մասին հաղորդում և իրազեկման բարձրացում .....	44
5 ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ .....	46
6 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	49

## Հավելվածներ

Հավելված 1: Ծրագրի արդյունքային շրջանակ .....	53
Հավելված 2: Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների սքրինինգ .....	59
Հավելված 3. Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների և ՇՄՍՀԳ նախագծային տարբերակի հետ կապված աշխատաժողովի ամփոփագիր .....	63

## Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1: Իրականացման մեխանիզմներն՝ ըստ ՄԿՑ-ների .....	22
Աղյուսակ 2: Շրջակա միջավայրի և սոցիալական գործողությունների ծրագիր .....	49
Աղյուսակ 3. ՄԿՑ-ներ, ՄԿԱ-ներ, հատկացումներ և ՄԿՑ-ների ապահովման ինդիկատիվ ժամանակացույց .....	53

## Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1: Էներգետիկ ոլորտի զարգացման 2040թ. ռազմավարության (ESDS) իրականացման կառավարության ծրագրի և Արդյունքահեն ծրագրի սահմանները ..... 21

## Հապավումներ

Եզրույթ	Եզրույթ	Եզրույթի բացվածք/սահմանում
ADB	ԱԶԲ	Ասիական Չարգացման Բանկ
AMD	ՀՀԴ	ՀՀ դրամ
CEPA	ՀԸԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՄԿՑ	ՄԿՑ	Մասհանումների հետ կապված ցուցանիշ
ՄԿԱ	ՄԿԱ	Մասհանման հետ կապված արդյունք
E&S	ՇՄ և Ս	Շրջակա միջավայրի և սոցիալական
ECA	ԵԿԱ	Եվրոպա և Կենտրոնական Ասիա
ECARES	ECARES	ԵԿԱ վերականգնվող էներգիայի մասնաբաժնի ավելացման ծրագիր
ENA	ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանցեր
EPMO	ԷԷՇՕ	Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատոր
EPSO	ԷԷՀՕ	Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր
ESDS	ԷՈՉՈ	Էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարություն
ESF	ՇՄՍՇ	Շրջակա միջավայրի և սոցիալական շրջանակ
ESG	ՇՄՍԿ	Շրջակա միջավայր, սոցիալական և կառավարում
ESIA	ՇՄՍԱԳ	Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատում
ESMP	ՇՄՍԿՊ	Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլան
ESMS	ՇՄՍԿՀ	Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգեր
ESRP	ԷՄՀԾ	Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագիր
ESSA	ՇՄՍՀԳ	Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատում
EU	ԵՄ	Եվրոպական Միություն
GDP	ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
GoA	ՀՀ կառ.	ՀՀ կառավարություն
GRM	ԲՄ	Բողոքարկման մեխանիզմ
HVDC	ԲՀՀԷԳ	բարձր հաստատուն հոսանքի էլեկտրահաղորդման գիծ
HVEN	ԲԷՑ	Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր
IBRD	ՎԶՄԲ	Վերակառուցման և Չարգացման Միջազգային Բանկ
IFI	ՄՖՀ	Միջազգային ֆինանսական հաստատություն
IPF	ՆԾՖ	Ներդրումային ծրագրի ֆինանսավորում
ISO	ԻՍՕ	Ստանդարտացման միջազգային կազմակերպություն
kV	կՎ	կիլովոլտ
M&E	Մ և Գ	Մոնիթորինգ և գնահատում
MTAI	ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Mtoe	Մտնհ	Միլիոն տոննա նավթային համարժեք
ՄՎԱ	մՎԱ	Մեգավոլտ-ամպեր
MW	ՄՎտ	մեգավատ
NDC	ԱՍՆ	Ազգային մակարդակով սահմանված ներդրում/գործողություն
OHL	ԷՕԳ	Էլեկտրահաղորդման օդային գիծ
OHS	ԱԱԱՊ	Աշխատանքի անվտանգություն և առողջության պահպանում
PDO	ԾՉՆ	Ծրագրի զարգացման նպատակ ( արդյունքահեն ծրագրի համար)
PforR	ԱԾ	Արդյունքահեն ծրագիր
PSRC	ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
RE	ՎԷ	Վերականգնվող էներգիա
RoA	ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
SCADA	SCADA	Դիսպետչերական կառավարման և տվյալների հավաքագրման համակարգ
SOE	ՊԶ	Պետական ձեռնարկություն
TSO	ԷՀՀՕ	Էլեկտրահաղորդման համակարգի օպերատոր
TYNDP	ՑՉՏԾ	Ցանցի զարգացման տասնամյա ծրագիր
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային Չարգացման Գործակալություն
USD	ԱՄՆԴ	ԱՄՆ դոլար

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Ղեկավար սկզբունքներ:** Համաշխարհային Բանկի կողմից Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատումը (ESSA) նախաձեռնվել է Հայաստանում էներգետիկ անցում ապահովելու նպատակով Արդյունաբանական ծրագրի (PforR) նախապատրաստման շրջանակներում: Այն առաջնորդվում է Բանկի Արդյունաբանական ծրագրի ֆինանսավորման քաղաքականության շրջանակներում սահմանված հիմնական քաղաքականության տարրերով և երբ դրանք կիրառվում են ՀՀ կառավարության (ՀՀ կառ.) համակարգերը և շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցությունները կառավարելուն ուղղված արդյունավետ միջոցառումները պլանավորելու և իրականացնելու իմաստով համապատասխան գերատեսչությունների կարողությունները գնահատելիս: Քաղաքականության Կետ 9-ով նկարագրվում են շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման հիմնական սկզբունքները, որոնք կարող են համապատասխան կամ կիրառելի համարվել Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) շրջանակներում: Այն կենտրոնանում է համապատասխան համակարգերի ադեկվատության վրա, այդ թվում նաև դրանք իրագործելու և ՀՀ կառավարության կարողությունների վրա: Համակարգի ուսումնասիրմանը մոտենում են երկու կողմից՝ (i) Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատմանը (ESSA) վերաբերող համապատասխան քաղաքականության, իրավական, կանոնակարգային և ինստիտուցիոնալ շրջանակների որոշում և (ii) համակարգերի, այդ թվում նաև կարողությունների և որոշ Շրջակա միջավայրի և սոցիալական միջոցառումների իրականացման վերլուծություն: Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) համար տեղեկատվություն է տրամադրվել փաստաթղթերի վերլուծության, շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների և նախկինում Բարձրավոլտ էլեկտրական ցանցերի (ԲԷՑ) հետ աշխատելու փորձից ելնելով, որը նման ներդրումների իմաստով իրականացնող հիմնական գերատեսչությունն է հանդիսանում:

**Աշխարհագրական շրջանակ:** Քաղաքականության, պլանավորման և կանոնակարգային որոշումների, այդ թվում նաև սակագների բարեփոխումների իմաստով աջակցությունը համազգային բնույթ կկրի: Ծրագիրը նաև աջակցում է ենթակայանների հիմնանորոգմանը՝ Երևանում տեղակայված են «Շահումյան-2», «Մարաշ» և «Չովունի» ենթակայանները, Արարատի մարզում՝ «Արարատ-2», Կոտայքի մարզում՝ «Չարենցավան-3», Վայոց ձորի տարածքում՝ «Եղեգնաձոր» ենթակայանները:

**Սբրինինգ:** «Արդյունաբանական ծրագրի համար շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման համար» Բանկի ուղեցույցների համաձայն սբրինինգ է իրականացվել երկու քայլով: Նախ՝ առաջարկվող միջոցառումները սբրինինգ են անցել բացառման չափորոշիչների իմաստով՝ Արդյունաբանական ծրագրի ֆինանսավորման համար չթույլատրվող գործողությունները բացառելու նպատակով: Երկրորդ՝ նախաձեռնվել է ռիսկի նախնական սբրինինգի գործընթաց՝ ՇՄ և Ս պոտենցիալ ռիսկերը, ինչպես նաև հնարավորությունները որոշելու համար, որոնք կարող են կապված լինել և/կամ առաջանալ Արդյունաբանական ծրագրի միջոցով:

**Ռիսկեր և ազդեցություններ:** Շրջակա միջավայրի իմաստով ռիսկը դասակարգվում է որպես չափավոր, իսկ սոցիալական ռիսկը՝ որպես ցածր: Ընդհանուր ՇՄ և Ս ռիսկը չափավոր է: Ռիսկերը հիմնականում վերաբերում են ենթակայանների հիմնանորոգմանը, որոնց ծախսերը ներառում են.

- «Շահումյան-2», «Մարաշ» և «Եղեգնաձոր» ենթակայանների ամբողջական հիմնանորոգումը:
- «Չովունի», «Արարատ-2», «Չարենցավան-3» ենթակայանների ընթացող հիմնանորոգումը, որը մեկնարկել է Բանկի՝ Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման (IPF) միջոցով, և որը դեռևս չի ավարտվել: Այդ ենթակայաններում առկա են միջոցառումներ՝ ՇՄ և Ս ռիսկերը կառավարելու համար,

այդ թվում նաև առկա են Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլաններ (ՇՄՍԿ-ներ/ՇՄՍԿ-ներ):

Ծրագիրն աջակցում է արդյունքների ապահովմանը և որպես «նախնական արդյունք» որակվող ձեռքբերումների հետ կապված ծախսերին: Սա կիրառելի է «Ագարակ-2», «Լիճք», «Շինուհայր» ենթակայանների նկատմամբ, որտեղ աշխատանքները մեկնարկել են ինքնաֆինանսավորման կամ այլ ՄՖՅ-ների ֆինանսավորման հաշվին:

**Բնապահպանական:** Արդյունքահետ ծրագրի հետ կապված բնապահպանական ռիսկերի մեծ մասը կապված է թափոնների կառավարման հետ: Ակնկալվում է, որ ենթակայանների հիմնանորոգման արդյունքում կառաջանան մեծ ծավալի վտանգավոր թափոններ, ինչպես օրինակ՝ օգտագործված յուղ, հին մարտկոցներ, քսայուղեր, փոխարինված տրանսֆորմատորներ, որոնք խնդիր են ներկայացնում դրանց վերջնական ուտիլիզացիայի իմաստով: Ներկայումս երկրում բացակայում են վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման և անվտանգ ուտիլիզացիայի կարողությունները և համակարգերը, իսկ վերջնական հեռացման համար մասնագիտացված աղբավայրեր չկան: Իրավական պահանջներին բավարարելու համար ԲԷՏ-ը պետք է անցնի վտանգավոր թափոնների պետական գրանցման և «անձնագրավորման» գործընթացներ և ձեռք բերի անհրաժեշտ թույլտվությունները: Որոշ ենթակայանների հիմնանորոգումը կարող է ներառել նաև խորհրդային շինարարության ժառանգություն հանդիսացող, ասբեստ պարունակող տանիքների անվտանգ վերամշակումն ու ուտիլիզացիան: Ոչ վտանգավոր շինարարական թափոնների պատշաճ հեռացումը նույնպես խնդիր է՝ երկրում ժամանակակից չափանիշներին համապատասխանող սանիտարական աղբավայրերի բացակայությամբ պայմանավորված: Բացի այդ, ֆիզիկական ակտիվության ժամանակ տրանսֆորմատորներից թունավոր հեղուկի պատահական արտահոսքի վտանգ կա: Թեև ենթակայաններում առկա են կանխարգելիչ միջոցառումները, դրանք չեն կարող ամբողջությամբ վերացնել շրջակա միջավայրի աղտոտման հնարավորությունը:

**Սոցիալական:** Ենթակայանների հիմնանորոգման հետ կապված պոտենցիալ սոցիալական ռիսկերը կապված են աշխատանքային իրավունքների և աշխատանքային պայմանների, աշխատողների և հանրային առողջության և անվտանգության հետ: Ծառայությունների ընդհատումներ կարող են տեղի ունենալ վերջնական օգտագործողներին էլեկտրամատակարարման իմաստով, սակայն որոնք լավ կառավարվում են նմանատիպ հիմնանորոգման աշխատանքների դեպքում: Ակնկալվում է, որ աշխատանքները հողի օտարման հետ կապված ազդեցություններ չեն ունենա, քանի որ աշխատանքները կիրականացվեն գործող տարածքում՝ ԲԷՏ-ի հողի վրա: Աջակցություն է նախատեսվում սակագնի կառուցվածքը բարեփոխելու իմաստով, որի արդյունքում սակագինը կարող է բարձրանալ: Սոցիալապես խոցելի խմբերն արդեն իսկ օգտվում են իջեցված սակագներից, սակայն սակագնի ցանկացած բարձրացում կարող է անհամամասնորեն ազդել նրանց վրա կամ այլ տնային տնտեսությունների բերել այս կատեգորիա:

**Բացառումներ և գործառնական քաղաքականություններ (ԳՔ-ներ):** Ծրագիրը բացառում է ցանկացած գործողություն, որն ունի պոտենցիալ զգալի Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկ և ունի բազմազան, փոփոխական և անդառնալի և աննախադեպ բացասական ազդեցություններ: Ո՛չ Միջազգային ջրային ուղիների մասին OP 7.50-ը, ո՛չ էլ Վիճարկելի տարածքների մասին OP 7.60-ը կիրառելի չեն:

**Իրականացման մեխանիզմներ:** Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) պատասխանատու կլինի Ծրագրի ընդհանուր համակարգման համար և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) հետ միասին պատասխանատու

կլինի ՄԿՑ-ների շրջանակներում ներառված քաղաքականության և կանոնարագման հետ կապված որոշումների համար (օրինակ՝ սակագնի կառուցվածքի բարեփոխում, ԾՔ կառավարման բարեփոխում):

ԲԷՑ-ը կլինի իրականացնող հիմնական գերատեսչությունը: Իրականացնող մյուս գերատեսչությունները ներառում են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) և Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը (ԷՍՏՕ): Այս գերատեսչությունները կունենան Արդյունքահեն ծրագրի իրականացման հետ կապված չնախատեսված Էական ծախսեր, սակայն դրանք հիմնական դերակատարություն կունենան ՄԿՑ-ների շրջանակներում մի շարք միջոցառումները նախաձեռնելու համար: Համապատասխանաբար Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) համար գնահատվել են միայն ԲԷՑ-ի ՇՄ և Ս համակարգերը, քանի որ միայն ԲԷՑ-ի կողմից իրականացվող միջոցառումներն են ներառում ծախսեր կամ ֆիզիկական գործողություններ: Չնայած Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը (ԷՍՏՕ) և ՀԾԿՀ-ն չեն գնահատվել, սակայն սակագների բարեփոխման հետ կապված իրականացվել է անապահով խմբերի համար առկա սոցիալական պաշտպանության համակարգերի ուսումնասիրություն, այդ թվում նաև բողոքների լուծման համակարգի ուսումնասիրություն: Իրականացնող գերատեսչությունները առաջընթացի մասին հաշվետվություններ կներկայացնեն ՏԿԵԼ-ին և ՖԼ-ին՝ Արդյունքահեն ծրագրի մոնիթորինգի և վերահսկման համար, որոնք հանդես կգան որպես Արդյունքահեն ծրագրի համար Կառավարության անունից պատասխանատու ստորագրող կողմ:

**Գնահատման շրջանակ:** Գնահատումը նախաձեռնվել է հետևյալ կերպ.

- Համակարգը, որը վերաբերում է ԲԷՑ-ի միջոցով ենթակայանների հիմնանորոգմանը և ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման համակարգի և կորպորատիվ կառավարման ուժեղացմանը հետևյալ ՄԿՑ-ների մասով.
  - ՄԿՑ 1: Ավտոմատ կառավարման և թվային պաշտպանության համակարգերով հագեցած Էլեկտրահաղորդման ենթակայանների հզորությունների մասնաբաժնի ավելացում:
  - ՄԿՑ 2: Էլեկտրահաղորդման ենթակայանների ընդհանուր հզորությունների ավելացում:
  - ՄԿՑ 3: Էներգետիկ համակարգի պլանավորման, շահագործման և կարգավորման բարելավումներ:
  - ՄԿՑ 6: ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման համակարգերի արդիականացման իմաստով առաջընթաց:
  - ՄԿՑ 7: ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման արդիականացման ուղղությամբ առաջընթաց:
- Էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման հետ կապված առաջընթացի մասին ՄԿՑ 4-ի հետ կապված փոփոխությունների հաղորդակցության և իրազեկման գնահատում:
- Գոյություն ունեցող սոցիալական պաշտպանության համակարգերի գնահատում սակագների բարձրացման դեպքում՝ սակագների մեթոդաբանության փոփոխությունների և սակագների փոփոխության արդյունքում, որը որոշվում է ՄԿՑ 3-ի շրջանակներում, ինչպես նաև ՄԿՑ 5-ի շրջանակներում՝ Էլեկտրահաղորդման ցանցի ենթակառուցվածքի համար առևտրային կապիտալի մոբիլիզացման ավելացում:
- **Ազգային համակարգի գնահատում:** ՇՄ և Ս ռիսկերը և Ծրագրի աջակցությամբ ենթակառուցվածքային ներդրումների ազդեցությունները գնահատելու և կառավարելու համար ազգային իրավական և կանոնակարգային համակարգի ուսումնասիրություն իրականացվեց, որպեսզի ՀՀ օրենսդրական դաշտը և իրականացման պրակտիկաները մեծապես ներդաշնակեցվեն Շրջակա միջավայրի և սոցիալական կայունության իմաստով միջազգային լավագույն պրակտիկայի հետ, այնուամենայնիվ, օրենսդրական, քաղաքականության և ինստիտուցիոնալ համակարգերը դեռևս անհրաժեշտ է ուժեղացնել մի շարք կարևոր ոլորտներում, մասնավորապես՝



- o Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքը (EIAE)՝ վերջին փոփոխություններով, որոնք ուժի մեջ են մտել 2023թ-ի հունիսից, ընդհանուր առմամբ համապատասխանում է շրջակա միջավայրի հետ կապված հարցերի իմաստով միջազգային լավագույն պրակտիկային, սակայն սոցիալական հարցերի մասով ՇՄԱԳ օրենքը համապարփակ կերպով չի ներառում սոցիալական ռիսկերի և ազդեցությունների նույնականացումը և կառավարումը: ՇՄԱԳ չպահանջող ծրագրերի դեպքում օրենքում բացակայում են Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկի գնահատման սպեցիֆիկ գործիքները բնապահպանական պահանջներին համապատասխանության ուսումնասիրության համար: Սոցիալական հարցերի մասով Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքով (EIAE) բացահայտ կերպով չի պահանջվում խոցելի խմբերի վրա ազդեցությունների նույնականացում և կառավարում, ոչ էլ ներառում է հասանելիությունը օգուտներին:
- o Թափոնների կառավարման մասին օրենքների նպատակն է կարգավորել թափոնների, այդ թվում՝ նաև վտանգավոր թափոնների հեռացումը, դրանց հեռացման համար սեփականության սահմանման և վճարման համակարգի ներդրումը: Շրջանաձև տնտեսության խթանումը սահմանվում է որպես ազգային նպատակ՝ սահմանելով թափոնների տարանջատումը, վերականգնումը, վերամշակումը և վերաօգտագործումը: Այնուամենայնիվ, ուշադրությունը կենտրոնացված է թափոնների հավաքման և հեռացման վրա՝ առանց շրջանաձևության վերաբերյալ հստակ դրույթների: Վտանգավոր թափոնների պահեստավորումն ու կառավարումը վերահսկելու և կառավարելու ինստիտուցիոնալ կարողությունները սահմանափակ են, և չկան հատուկ աղբավայրեր:
- o Հայաստանն ունի համապարփակ Աշխատանքյին օրենսգիրք (2004թ.), որը նաև ներառում է Աշխատողների անվտանգության և առողջության պահպանման (OHS) պահանջներ, որոնք ներդաշնակեցված են միջազգային լավագույն պրակտիկաներին: Այնուամենայնիվ, Աշխատանքային օրենսգրքի կիրարկումը հետ է մնում, մասնավորապես պայմանավորված Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (HLIB) կողմից օրենքները կիրառելու կարողություններով, ինչպես նաև նախորդ տասնամյակի ընթացքում իրականացված օրենսդրական փոփոխությունների քանակով և ընթացքով: Աշխատանքային օրենսդրությունը չի նախատեսում աշխատողների համար բողոքարկման մեխանիզմներ գործատուի մակարդակում, որպեսզի աշխատողներն անմիջականորեն բարձրացնեն աշխատավայրի հետ կապված մտահոգությունները և լուծեն աշխատանքային առանձին վեճերը:
- o Ազգային օրենսդրական շրջանակը երաշխավորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց մասին տեղեկատվություն ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը: Իրավական ակտերը, որոնք ապահովում են հանրային մասնակցությունը և տեղեկատվության հասանելիության իրավունքը, ներառում են Տեղեկատվության ազատության մասին օրենքը (2003թ.), Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքը (EIAE) և Քաղաքաշինության մասին օրենքը (1998թ.):

**ԲԵՑ-ի Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգերի (ESMS) գնահատում:**

Գնահատման արդյունքում պարզվեց, որ չնայած նրանք ունեն Աշխատողների անվտանգության և առողջության պահպանման (OHS) ռիսկերի և ազդեցությունների գնահատման և կառավարման համար գործընթացներ և ընթացակարգեր, վերջիններս մյուս ՇՄ և Ս ռիսկերը և ազդեցությունները գնահատում և կառավարում են կամ երբ ազգային համակարգի շրջանակներում առկա է նման պահանջ, կամ ՄՖՀ-ների կողմից ֆինանսավորվելու դեպքում՝ վարկատուի պահանջների համաձայն:

**Շրջակա միջավայրի և սոցիալական գործողություններ:** Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) նպատակն է որոշել Ծրագրի նկատմամբ կիրառելի ՇՄ և Ս համակարգերի ուժեղ և թույլ կողմերը, որոշել այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են վերջինիս

կատարողականը բարելավելու նպատակով: Ֆիզիկական ենթակառուցվածքներում ներդրումների ցածրից միջին ռիսկերը և ազդեցությունները կառավարելու համար ԲԵՑ-ը կնախաձեռնի սերինինգ՝ ազդեցությունների և ռիսկերի բնույթը և մասշտաբը որոշելու համար և կառավարման միջոցառումներ կներդնի նախքան աշխատանքների մեկնարկը, դրանք լուծելու համար՝ ներառյալ ծրագրի և աշխատակցի բողոքարկման ընթացակարգերը և հիմնական աշխատակազմի վերապատրաստման ծրագիրը: Ծրագրի նախագծման շրջանակներում ՄԿՑ-ներ 6-ը և 7-ը կենտրոնանում է ԲԵՑ-ի կորպորատիվ կառավարման համակարգերի և կորպորատիվ կառավարման արդիականացման վրա: Խորհուրդ-առաջարկներ են ներկայացվել՝ ԲԵՑ-ի ՇՄՍԿՅ-ն քայլ առ քայլ բարելավելու համար՝ ԲԵՑ-ի հետ նախաձեռնված համակարգերի գնահատումից հետո, պարզելու համար, թե ինչպես են նրանք գնահատում և կառավարում իրենց բոլոր գործառնությունների շրջանակներում նախաձեռնվող միջոցառումների հետ կապված ռիսկերը և ազդեցությունները: Սա կաջակցի ՄԿՑ 6-ի ապահովմանը՝ ISO 14001: Բնապահպանական կառավարման համակարգերին համապատասխանության մասին ԲԵՑ-ի հավաստագրում: Գնահատվել են նաև ՄԿՑ 3-ի և 5-ի շրջանակներում սակագնային բարեփոխումներին աջակցության միջոցառումների պոտենցիալ սոցիալական ազդեցությունները: Ակնկալվում է, որ սակագնային բարեփոխումների արդյունքում սակագների հարաբերականորեն փոքր բարձրացում կլինի (գնաճի մակարդակից ցածր) և խոցելի խմբերի համար ավելի ցածր սակագներ տրամադրելու նպատակով գործում են սոցիալական պաշտպանության համակարգերը: Բացահայտված թույլ կողմերը կամ բացերը լրացնելու և Արդյունքահեն ծրագրի հիմնական սկզբունքներին համակարգը համապատասխանեցնելու համար սպեցիֆիկ միջոցառումներ են առաջարկվում Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) գործողությունների ծրագրում (տես ստորև), որը Ծրագրի Գործողությունների ծրագրի անբակտելի մաս է կազմում:

No	Միջոցառում	Ժամանակացույց
<b>Միջոցառումներ, որոնք վերաբերում են այն ենթակայաններին, որոնք նոր պետք է հիմնանորոգվեն («Մարաշ», «Շահումյան-2» և «Եղեգնաձոր»)</b>		
1	ԲԵՑ-ի կողմից ՇՄ և Ս սերինինգի նախաձեռնում այն միջոցառումների համար, որոնք վերաբերում են ենթակայանների հիմնանորոգմանը	Նախքան աշխատանքների մեկնարկը
2	ԲԵՑ-ի կողմից տեղամասի իմաստով սպեցիֆիկ ՇՄՍԿԿ-ների մշակում՝ սերինինգի ընթացքում որոշված ռիսկերի համաձայն, հրապարակում և խորհրդակցում և ներդրում և իրականացում:	Մշակել և ընդունել մինչև աշխատանքների մեկնարկը և այնուհետև իրականացնել Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:
3	ԲԵՑ-ի կողմից աշխատողների համար բողոքարկման մեխանիզմի ներդրում, որը կներառի հիմնական (direct) և պայմանագրային աշխատողներին:	Մշակել և ընդունել մինչև աշխատանքների մեկնարկը և այնուհետև իրականացնել Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:
4	ԲԵՑ-ի կողմից աշխատողների և համայնքների առողջության և անվտանգության, այդ թվում վտանգավոր թափոնների հետ անվտանգ վարվելու վերաբերյալ ուսումնական պլանի մշակում, ինչպես նաև ուսուցում բոլոր հիմնական (direct) և պայմանագրային աշխատողների համար:	Մշակել և ընդունել մինչև աշխատանքների մեկնարկը և այնուհետև իրականացնել Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:
5	ԲԵՑ-ի կողմից հանրային բողոքարկման մեխանիզմի ներդրման, վերջինիս մասին հաղորդման և գործարկման ապահովում:	Նախքան աշխատանքների մեկնարկը և այնուհետև իրականացնել Ծրագրի ողջ ընթացքում:

No	Միջոցառում	Ժամանակացույց
<b>Միջոցառումներ, որոնք վերաբերում են այն ենթակայաներին, որոնց հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել են Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ Ներդրումային ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում («Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր» (ETNIP) և «Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագիր» (ESRP)), որոնք սակայն չեն ավարտվել Ներդրումային ծրագրի ֆինանսավորման (IPF) ժամանակաշրջանում («Վրարատ -2», «Չարենցավան - 3» և «Չովունի»)</b>		
6	Այնտեղ, որտեղ հիմնանորոգման աշխատանքները դադարեցվել են և դեռ պետք է վերսկսվեն, ԲԵՏ-ը պետք է թարմացնի ՇՄՍԿԴ-ն, այնուհետև հաստատի և իրականացի:	ՇՄՍԿԴ-ի թարմացում և ներդրում և այնուհետև իրականացում՝ Ծրագրի իրականացման ընթացքում:
7	Այնտեղ, որտեղ հիմնանորոգման աշխատանքներն ընթացքում են, ԲԵՏ-ը շարունակում է ՇՄՍԿԴ-ների իրականացումն՝ առանց փոփոխությունների:	Ենթակայանների համար ՇՄՍԿԴ-ների իրականացում Ծրագրի իրականացման ընթացքում:
<b>Միջոցառումներ, որոնք վերաբերում են ենթակայաններին, որտեղ հիմնարորդական աշխատանքները մեկնարկել են ինքնաֆինանսավորման հաշվին կամ այլ ՄՖՀ-ների ֆինանսավորմամբ («Շինուհայր», «Ագարակ-2» և «Լիճք»)</b>		
8	ԲԵՏ-ի կողմից ուժեղացված ՇՄԿՄ-ի կիրառում:	Միջոցառումներ և ժամանակացույց՝ ՇՄԿՄ 9-20 միջոցառումների համաձայն:
<b>ԲԵՏ-ի կորպորատիվ ՇՄԿՄ-ի ուժեղացմանը և ISO 14001: 2015 Բնապահպանական կառավարման համակարգերին համապատասխանության համար հավաստագրում ստանալուն ուղղված միջոցառումներ</b>		
9	ԲԵՏ-ի կողմից ՇՄ և Ս քաղաքականության հայտարարության և գործադիր տնօրենի հանձնառությունների նամակի մշակում և ներդրում, որով քաղաքականության մասին հաղորդվում է բոլոր աշխատակիցներին:	Տարի 1
10	ԲԵՏ-ը պետք է ներառի շրջակա միջավայրի, սոցիալական և կառավարման (ՇՄՍԿ) արժեքների իր ավելի լայն համակարգի սահմանումը, որը սովորական պրակտիկա է դառնում համաշխարհային կորպորատիվ կառավարման ասպարեզում, և հատկապես կարևոր է այն ընկերությունների համար, որոնք ձգտում են ֆինանսավորում ներգրավել միջազգային բանկերից և կապիտալի շուկաներից:	Տարի 1
11	ԲԵՏ-ը պետք է մշակի և ներդնի աշխատավայրում խտրականության և սեռական ոտնձգությունների դեմ քաղաքականություն և այդ քաղաքականությունը հաղորդի ղեկավարներին, վերահսկիչներին և աշխատողներին, ովքեր հավատարիմ են գոյական հանդուրժողականության քաղաքականությանը սեռական ոտնձգությունների և խտրականության ցանկացած դրսևորման (վերբալ կամ ֆիզիկական) նկատմամբ:	Տարի 1
12	ԲԵՏ-ը պետք է մշակի և ներդնի ընթացակարգեր՝ հիմնական բոլոր գործողությունների շրջանակներում ՇՄ և Ս ռիսկերը և ազդեցությունները բացահայտելու նպատակով: ԲԵՏ-ը պետք է խորհրդակցի հիմնական խմբերի հետ՝ ռիսկերի գնահատման գործընթացի շրջանակներում, և փաստաթղթավորի և հետևի	Տարի 1

No	Միջոցառում	Ժամանակացույց
	Ներգրավման ջանքերին և հիմնական քննարկումների արդյունքներին:	
13	ԲԷՑ-ը պետք է մշակի հիմնական շահագրգիռ կողմերի քարտեզը՝ ներառելով այն խմբերին, որոնք վերջիններիս գործառնությունների ազդակիրն են և ունենա քաղաքականություն և ընթացակարգ, որը կպատասխանի շահագրգիռ կողմերի կարիքներին:	Տարի 1
14	ԲԷՑ-ը կմշակի և կիրականացնի ՇՄ և Ս ծրագրերի և ընթացակարգերի համար Գործողությունների ծրագիր, որը պետք է ներդրվի և պարտականություններ պատվիրակի՝ հիմնական բոլոր միջոցառումների համար ՇՄ և Ս ռիսկերը և ազդեցությունները լուծելու և մեղմելու համար:	Տարի 2
15	ԲԷՑ-ը կմշակի և կիրականացնի վերապատրաստման ծրագիր՝ նոր ստեղծված վարչության և հիմնական այլ աշխատակազմի կարողություններն ուժեղացնելու համար, որպեսզի արդյունավետ ՇՄՍԿՀ-ի համար քաղաքականություններ և ընթացակարգեր ներդրվեն:	Տարի 2
16	ԲԷՑ-ի կողմից ընթացակարգի մշակում և աշխատակազմի պատվիրակում՝ հիմնական ռիսկերի և գործողությունների ծրագրերի վերաբերյալ ազդակիր համայնքներին ներկայացնելու համար:	Տարի 1
17	Արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման համար ԲԷՑ-ը համայնքի հետ կիրականացնի պարբերական խորհրդակցություններ՝ որոշելու համար տեղամասում (on-site) և տեղամասից դուրս (off-site) արտակարգ իրավիճակների սցենարները:	Տարի 2
18	Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման համար (OHS) ԲԷՑ-ը կապահովի նույն ծածկույթը պայմանագրային աշխատողների համար, այդ թվում՝ ծրագրերի և ընթացակարգերի ուսումնասիրության և կապալառու և ենթակապալառու աշխատողների վերապատրաստմանն աջակցելու միջոցով:	Տարի 2
19	ԲԷՑ-ը կապահովի աշխատողների համար բողոքարկման արդյունավետ մեխանիզմի ներդրումը և գործարկումը բոլոր աշխատողների համար:	Տարի 2
20	ԲԷՑ-ը կմշակի ՇՄ և Ս ցանկացած զգալի ռիսկի, ինչպես նաև ամենահավանական ռիսկերի մոնիթորինգի ընթացակարգ և կպատվիրակի աշխատակիցներ, որոնք պատասխանատու կլինեն վերջինիս գործառնությունների շրջանակներում այդ ռիսկերի մոնիթորինգի համար:	Տարի 3

**ՇՄՍԿՀ-ի հաշվետվության նախագծային տարբերակի հրապարակում և խորհրդակցություն** : Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) հաշվետվությունը կիրապարակվի

անգլերեն և հայերեն լեզուներով Բանկի արտաքին կայք-էջի միջոցով և Համաշխարհային Բանկի հայաստանյան գրասենյակի կայք-էջի միջոցով: Բանկը շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններ կնխագծեն Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) հաշվետվության նախագծային տարբերակի շուրջ թիրախային հանդիպումների շրջանակներում: Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) հաշվետվության նախագծային տարբերակը, այդ թվում նաև Ամփոփագիրը՝ անգլերեն և հայերեն լեզուներով, կշրջանառվի հանդիպումներից առաջ: Աշխատաժողովների շրջանակներում կատարված դիտարկումները, ինչպես նաև մասնակիցների ամբողջական ցանկը և վերջիններիս դիտարկումները կներառվեն Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) վերջնական զեկույցում:

**Բողոքների կարգավորում:** Համայնքները և անհատները, ովքեր հավատացած են, որ վերջիններս բացասական ազդեցություն են կրում Բանկի աջակցությամբ Արդյունքահեն ծրագրի աջակցությամբ գործառնության արդյունքում, ինչպես սահմանվում է կիրառվող քաղաքականության և ընթացակարգերի միջոցով, կարող են բողոքներ ներկայացնել ծրագրի բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի բողոքների լուծման ծառայության (GRS) միջոցով: Բանկի բողոքների լուծման ծառայությունը (GRS) ապահովում է, որպեսզի ստացվող բողոքները քննության առնվեն հավուր պատշաճի՝ համապատասխան մտահոգությունները հաշվի առնելու համար: Ծրագրի ազդակիր համայնքները և անհատները կարող են իրենց բողոքը ներկայացնել Բանկի անկախ Հաշվետվողականության մեխանիզմին (AM): Հաշվետվողականության մեխանիզմն (AM) ունի Տեսչական խումբ, որը որոշում է, թե արդյոք վնաս պատճառվել է կամ կարող էր առաջանալ Բանկի կողմից իր քաղաքականություններին և ընթացակարգերին համապատասխանություն չապահովելու հետևանքով, և Վեճերի լուծման ծառայությունը, որը համայնքներին և վարկառուներին հնարավորություն է տալիս վեճերի լուծման միջոցով կարգավորել բողոքները: Բողոքները կարող են ներկայացվել ցանկացած պահի այն բանից հետո, երբ մտահոգությունները անմիջականորեն ներկայացվել են Բանկի ուշադրությանը, և Բանկի ղեկավարությանը արձագանքելու հնարավորություն է տրվել: Բանկի բողոքների լուծման ծառայությանը (GRS) բողոքներ ներկայացնելու մասին տեղեկությունների համար այցելե՛ք <http://www.worldbank.org/GRS> հղումով: Բանկի հաշվետվողականության մեխանիզմին բողոքներ ներկայացնելու մասին տեղեկությունների համար այցելե՛ք <https://accountability.worldbank.org> :

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առաջարկվող Արդյունքահեն ծրագրի (PforR) միջոցով Համաշխարհային Բանկը նպատակ ունի աջակցել ՀՀ կառավարությանը՝ վերականգնվող էներգետիկայի ընդլայնման և ինտեգրման համար վերջինիս երկարաժամկետ ռազմավարական նպատակներին հասնելու իմաստով: Մասնավորապես առաջարկվող Արդյունքահեն ծրագիրը կաջակցի մինչև 2040թ-ը էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարությանը (ESDS)՝ մինչև 2030թ-ը 1000 ՄՎտ արևային ֆՎ հզորության ներդրմանը և մինչև 2040թ. 500 մՎտ հողմային էներգիայի հզորության ներդրմանը՝ միջամտությունների միջոցով, որոնք կենտրոնանում են. (i) էլեկտրահաղորդման ենթակառուցվածքի ուժեղացման և (ii) ֆինանսական կենսունակության և էլեկտրահաղորդման ընկերության կատարողականի բարելավման վրա:

Էլեկտրամատակարարման անվտանգությունը և հուսալիությունը բարելավելու, ինչպես նաև ՎԷ ինտեգրման համար անհրաժեշտ է որպեսզի Հայաստանը շարունակի ներդրումներ կատարել էլեկտրահաղորդման ցանցի արդիականացման և պետական ֆինանսավորումից կախվածությունը նվազեցնելու համար և երաշխավի ներդրումների ֆինանսավորումը էներգետիկ բնագավառի պետական ձեռնարկություններում (ՊԶ): Վերականգնվող էներգետիկայի ինտեգրման համար էլեկտրահաղորդման ենթակառուցվածքի արդյունավետության և հուսալիության ապահովմանն ուղղված անհրաժեշտ ներդրումները հաջողությամբ իրականացնելու, ինչպես նաև այս ներդրումները կատարելու համար երկրի համակարգերին աստիճանաբար անցնելու համար կպահանջվի էլեկտրահաղորդման ՊԶ կառավարման, համակարգերի և ընթացակարգերի ուժեղացումը: Էլեկտրահաղորդման ցանցը պատկանում և շահագործվում է պետական «Հայաստանի բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» (ԲԷՏ) ընկերության կողմից: Վերջին տարիների ընթացքում ԲԷՏ-ը զգալի փորձ է ձեռք բերել էլեկտրահաղորդման ենթակառուցվածքներում ներդրումների համար կապալառուների և գնումների կառավարման իմաստով, որը Համաշխարհային Բանկի և միջազգային ֆինանսական այլ կառույցների ֆինանսավորմամբ ծրագրեր է իրականացրել: Այնուամենայնիվ, վերջինիս գնումների, աուդիտի և բյուջեի կառավարման ընթացակարգերը (*այդ թվում նաև Շրջակա միջավայրի և սոցիալական հարցերի իմաստով*) լրացուցիչ ուժեղացման կարիք ունեն: Ավելին, ԲԷՏ-ը պետք է շարունակի ցանցի մոնիթորինգի և օպերացիոն համակարգերի արդիականացմանը և ցանցի ընդլայնման պլանավորման բարելավմանն ուղղված իր ջանքերը:

Բացի այդ, անհրաժեշտ են ոլորտային բարեփոխումներ, որոնք նպաստում են էներգետիկ ոլորտի պետական ձեռնարկությունների ֆինանսական կենսունակությանն ու արդյունավետությանը՝ վերականգնվող էներգիային երկրի հավակնոտ անցմանն աջակցելու համար: Թեև Հայաստանում էլեկտրաէներգիայի սակագինը լիարժեքորեն ծածկում է համակարգի ֆինանսական ծախսերը, անհրաժեշտ են բարեփոխումներ, որպեսզի էներգետիկ ոլորտում ՊԶ-ներին հնարավորություն ընձեռվի ներգրավել առևտրային ֆինանսավորում, հատկապես արտարժույթով, քանի որ սակագների սահմանման ներկայիս մեթոդաբանությունը ձևավորված է պետական երաշխիքով ՊԶ-ներին տրամադրվող փոխառությունների համաձայն: Էներգետիկ շուկայի ազատականացման ճանապարհային բարտեզի իրականացումը, որը հանդիսանում է ՀՀ կառավարության «2040թ-ի էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարության» (ESDS) հիմնական ռազմավարական առաջնահերթություններից մեկը, լրացուցիչ կերպով կխթանի ծառայությունների մատուցման ծախսարդյունավետությունը՝ խոշոր մատակարարների և սպառողների համար մրցակցությունը ներդնելու և հաշվեկշռման պարտադիր պարտականությունը ներդնելու միջոցով: Ավելին, բարեփոխումներ են անհրաժեշտ՝ էլեկտրահաղորդման ցանցի ներդրումների պլանավորումն ուժեղացնելու, ինչպես նաև ցանցի շահագործման կարգավորման համար՝ վերականգնվող էներգիայի ինտեգրումը բարելավելու նպատակով: Ի վերջո, անհրաժեշտ է բարելավել էներգետիկ բնագավառում

ՊԶ-ի կորպորատիվ կառավարումը՝ հաշվետվողականությունը և գործառնական արդյունավետությունը բարելավելու համար:

## 1.1 Նպատակներ

Հայաստանում էներգետիկ անցումն ապահովելու նպատակով Արդյունքահեն ծրագրի Նախապատրաստման շրջանակներում ՀԲ-ն նախաձեռնել է Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատում (ESSA):

Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատումն (ESSA) առաջնորդվում է քաղաքականության հիմնական տարրերով, որոնք սահմանված են Արդյունքահեն ծրագրի ֆինանսավորման<sup>1</sup> համար Բանկի քաղաքականությամբ, և որոնք կիրառվում են՝ գնահատելու համար շրջակա միջավայրի և սոցիալական (E&S) ազդեցությունները կառավարելու համար արդյունավետ միջոցառումներ պլանավորելու և իրականացնելու ՀՀ կառավարության համակարգերը և համապատասխան գերատեսչությունների կարողությունները: Քաղաքականության 9-րդ պարբերությունը նկարագրում է Շրջակա միջավայրի և սոցիալական (E&S) կառավարման հիմնական սկզբունքները, որոնք կարող են համապատասխան կամ կիրառելի համարվել Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) շրջանակներում:

Այս հիմնական սկզբունքները հետևյալն են.

- a. Արդյունքահեն ֆինանսավորման ծրագրի նախագծման շրջանակներում Շրջակա միջավայրի և սոցիալական կայունության խթանում, վնասակար ազդեցություններից խուսափում, մինիմիզացում կամ մեղմացում և Արդյունքահեն ծրագրի Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցությունների հետ կապված տեղեկացված որոշումների ընդունման խթանում:
- b. Արդյունքահեն ծրագրի արդյունքում բնական միջավայրերի և ֆիզիկական մշակութային ռեսուրսների վրա բացասական ազդեցություններից խուսափում, նվազագույնի հասցում կամ մեղմացում:
- c. Հանրության և աշխատակցի անվտանգության պաշտպանություն պոտենցիալ ռիսկերից, որոնք կապված են. (i) Արդյունքահեն ծրագրի շրջանակներում օբյեկտների կառուցման և/կամ շահագործման և գործառնական այլ պրակտիկաների հետ, (ii) Արդյունքահեն ծրագրի շրջանակներում թունավոր քիմիական նյութերի, վտանգավոր թափոնների և վտանգավոր այլ նյութերի ազդեցության, և (iii) բնական վտանգներին հակված տարածքներում գտնվող ենթակառուցվածքների վերակառուցման կամ վերականգնման հետ:
- d. Հողի օտարման և բնական ռեսուրսների հասանելիության կորստի կարգավորում՝ խուսափելու կամ մինիմիզացնելու տեղահանումը և աջակցելու ազդակիր անձանց՝ կենսապահովման իրենց պայմանները բարելավելու կամ առնվազն վերականգնելու հարցում:
- e. Մշակութային նպատակահարմարության և Արդյունքահեն ծրագրի օգուտներին արդարացի հասանելիության հավուր պատշաճի դիտարկում՝ հատուկ ուշադրություն դարձնելով տեղաբնիկների իրավունքներին ու շահերին, ինչպես նաև խոցելի խմբերի կարիքներին կամ մտահոգություններին:
- f. Խուսափում սոցիալական կոնֆլիկտների սրացումից, մասնավորապես «փխրուն» պետություններում (fragile states), հետկոնֆլիկտային տարածքներում կամ այն տարածքներում, որոնք տարածքային վեճերի առարկա են հանդիսանում:

Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատումը (ESSA) կենտրոնանում է համապատասխան համակարգերի ադեկվատության վրա, այդ թվում նաև իրականացման և ՀՀ

---

<sup>1</sup> Արդյունքահեն ծրագրի ֆինանսավորման բանկի քաղաքականություն, որը հրապարակվել է 2022թ-ի մարտի 25-ին, վերջին վերանայումը 2022թ-ի մարտի 22-ին, թողարկված է փոխնախագահի կողմից, OPSVP

կառավարության իրագործելու կարողությունների վրա: Համակարգի ուսումնասիրությունը երկու մասից է կազմված.

- a. Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) հետ կապված համապատասխան քաղաքականության, իրավական, կանոնակարգային և ինստիտուցիոնալ շրջանակների համակարգերի որոշում:
- b. Համակարգերի իրականացման վերլուծություն, այդ թվում նաև կարողությունների և որոշակի շրջակա միջավայրի և սոցիալական միջոցառումների իրականացում:

Ծրագիրը չի ներառում որևէ միջոցառում, որը պոտենցիալ, զգալի ՇՄ և Ս ռիսկ է պարունակում և բացասական, փոփոխական, անդառնալի և աննախադեպ բացասական ազդեցություններ ունի:

Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) նպատակն է որոշել ՇՄ և Ս համակարգերի ուժեղ և թույլ կողմերը, որոնք կիրառելի են Ծրագրի նկատմամբ՝ որոշելու համար այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են կատարողականը բարելավելու համար: Որոշված թույլ կողմերը կամ բացերը լրացնելու, ինչպես նաև համակարգը Արդյունքահեն ծրագրի հիմնարար սկզբունքներին համահունչ դարձնելու համար սպեցիֆիկ միջոցառումներն առաջարկվում են Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) Գործողությունների ծրագրի շրջանակներում, որը Ծրագրի Գործողությունների ծրագրի անբակտելի մասն է կազմում:

## 1.2 Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) մոտեցումը

Սերինինգ է նախաձեռնվել երկու քայլով՝ Արդյունքահեն ծրագրի շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման համար՝ Բանկի ուղեցույցներով առաջնորդվելով: Նախ՝ առաջարկվող միջոցառումների սերինինգ է իրականացվել բացառաբան չափորոշիչների նկատմամբ՝ բացառելու համար այն միջոցառումները, որոնք չեն հավակնում Արդյունքահեն ծրագրի ֆինանսավորման համար: Երկրորդ՝ նախաձեռնվել է ռիսկի նախնական սերինինգի գործընթաց, որի նպատակն էր որոշել պոտենցիալ ՇՄ և Ս ռիսկերը, ինչպես նաև հնարավորությունները, որոնք կարող են կապված լինել կամ առաջանալ Արդյունքահեն ծրագրի միջոցով:

Ենթատեքստից բխող սպեցիֆիկ ՇՄ և Ս ռիսկի սերինինգը բացահայտում է հավանական ՇՄ և Ս ազդեցությունները և ներառում է Ծրագրի՝ կարևոր կոնտեքստուալ, ինստիտուցիոնալ, կարողությունների և ռեպուտացիոն ռիսկի հետ կապված հարցերի նախնական գնահատումը: Այս սերինինգի նպատակն է որոշել Ծրագրին առնչվող պոտենցիալ ռիսկերը և հնարավորությունները, որը երաշխավորում է հետագա վերլուծությունը՝ Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) միջոցով:

Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցությունների շրջանակը գնահատելու համար օգտագործվող չափանիշները հետևյալն են.

- Հիմնական օգուտները, անբարենպաստ ազդեցությունները և ռիսկերը, որոնք կարող են կապված լինել ծրագրային միջոցառումների հետ:
- Ծրագրի տարածքում ՇՄ և Ս պայմանները, որոնք կարող են էական նշանակություն ունենալ Ծրագրի մշակման և իրականացման իմաստով:
- Վարկառուի կազմակերպչական, վարչական և կարգավորող կառույցներն ու գործելակարգերը, որոնք կապված են Ծրագրի Շրջակա միջավայրի և սոցիալական գնահատման, պլանավորման և կառավարման հետ:



- Շրջակա միջավայրի և սոցիալական խնդիրներ, միտումներ կամ այլ գործոններ, որոնք կարող են վարկառուի (երկրին), Ծրագրի կամ Համաշխարհային Բանկի համար զգալի ռեպուտացիոն կամ քաղաքական ռիսկեր առաջացնել:

Սբրինինգային վարժության հիման վրա (Հավելված 2) ՇՄ և Ս ընդհանուր ռիսկը գնահատվել է որպես «Չափավոր» և կապված է ենթակայանների հիմնանորոգման հետ: Թափոնների կառավարումը խնդիր է, որը պայմանավորված է կանոնակարգային և ենթակառուցվածքային անբավարար համակարգերով, որոնք սպեցիֆիկ միջոցառումներ են պահանջում՝ վտանգավոր թափոնների հետ պատշաճ վարվելու, վերամշակման և վերջնական ուտիլիզացիայի իմաստով: Մյուս ռիսկերը վերաբերում են համայնքի և աշխատակիցների առողջության և անվտանգության հարցերին՝ պայմանավորված ենթակայաններում հիմնանորոգման աշխատանքներով և հիմնանորոգման աշխատանքների ընթացքում վերջնական սպառողներին էլեկտրամատակարարման խաթարումներով:

Բացառման չափանիշների համեմատ գնահատման իմաստով, չնայած որոշ միջոցառումների արդյունքում առողջության և անձնական անվտանգության ռիսկեր կառաջացնեն աշխատակիցների և համայնքների համար, դրանք չեն դիտարկվում որպես Էական ռիսկեր:

Արդյունքահետ ծրագիրը նաև կաջակցի ցանցի զարգացման տասնամյա ծրագրի ներդրմանը և թարմացումներին: Այս ծրագրերի շրջանակներում միջոցառումները կսկսվեն Արդյունքահետ ծրագրի ընթացքում, դրանց շրջանակներում ցանկացած ներդրման համար, ներդրումներից յուրաքանչյուրի համար կնախաձեռնվեն տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրություններ, սակայն դրանք չեն նախաձեռնվի նախքան ծրագրերի ամփոփումը: Արդյունքահետ ծրագիրը նաև կաջակցի էլեկտրաէներգիայի մասին Նոր օրենքի ընդունմանը և Էներգաարդյունավետության Նոր օրենքի համապատասխանեցմանը Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրին (CEPA): Իրավական և կանոնակարգային շրջանակի փոփոխությունները կիրականացվեն Նորմատիվ իրավական ակտերի մասին ազգային օրենքի համաձայն, որով նախատեսվում է օրենսդրական նախագծերի ազդեցությունների գնահատում և փորձաքննություն, եթե առաջարկվող փոփոխությունները կարող են Էական ազդեցություններ ունենալ մասնավոր և պետական հատվածի վրա: Արդյունքահետ ծրագրի ֆինանսավորման քաղաքականության համաձայն կբացառվի աջակցությունը ցանկացած այնպիսի ներդրումներին, որոնք կարող են հավանական բացասական ազդեցություններ ունենալ, որոնք զգայուն, բազմազան կամ աննախադեպ են շրջակա միջավայրի և/կամ ազդակիր անձանց վրա:

Ի լրումն սբրինինգին, որը տեղեկատվություն տրամադրեց Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) շրջանակի համար, Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) նախաձեռնելու գործընթացը ներառում էր Ծրագրի հիմքում ընկած ՇՄ և Ս համակարգերի մասին համապատասխան տեղեկատվության ուսումնասիրությունը, խորհրդակցությունը և ներգրավումը՝ հասկանալու համար այդ համակարգերի գործարկումը, այդ թվում նաև գործարկմանն աջակցող, գոյություն ունեցող ենթակառուցվածքը:

**Գրասենյակային ուսումնասիրություն:** Ուսումնասիրությունը ներառեց Հայաստանի ՇՄ և Ս ընդհանուր գնահատումը (2023թ.)՝ ՀՀ ազգային օրենսդրության և ՀԲ շրջակա միջավայրի և սոցիալական շրջանակի (ՇՄՍՇ), Թափոնների մասին օրենքի (2004թ.) և թափոնների կառավարման մասին իրավական ակտերի ու կանոնակարգերի միջև, Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքի (2014թ.), Էներգետիկայի մասին օրենքի (2001թ.), Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին օրենքի (2003թ.) և մի շարք կառավարության որոշումների համատեքստում: Շրջակա միջավայրի և սոցիալական պոտենցիալ ազդեցությունները գնահատելու համար մանրակրկիտ ուսումնասիրվել են

«Կովկասյան Էներգացանցի ծրագրի» (2020թ.) Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄՍԱԳ) հաշվետվությունները, ինչպես նաև ընթացիկ ծրագրի կոնկրետ օբյեկտի համար Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլանը (ՇՄՍԿՊ) («Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր» (P146199)) և ավարտված («Էլեկտրականության հուսալիության ծրագիր» (P116748)) Էներգետիկ ծրագրերը: Ուսումնասիրությունը ներառում էր նաև ԲԵՑ-ի առողջության, անվտանգության և բնապահպանական պրակտիկաները և փաստաթղթերը՝ Ոլորտային առաջատար միջազգային ստանդարտներին համապատասխանությունը գնահատելու համար:

**Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) մշակման համար տեղեկատվություն տրամադրելու համար խորհրդակցություններ և ներգրավում:** Իրականացման քաղաքականությունների, ընթացակարգերի, ստանդարտների և Ծրագրի նկատմամբ համապատասխան մոտեցման մասին ավելի լավ ընկալում ձևավորելու համար Բանկի թիմը հանդիպումներ անցկացրեց տարբեր շահագրգիռ կողմերի հետ, այդ թվում նաև Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ), Ֆինանսների նախարարության (ՖՆ), Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ), ԲԵՑ-ի, Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի (EPSO) և Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի (EPMO) հետ: Ընդգրկուն խորհրդակցություններ են անցկացվել ԲԵՑ-ի տեխնիկական աշխատակազմի հետ՝ ԲԵՑ-ի Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգի (ESMS) գնահատում իրականացնելու համար: Այս շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցական բնույթի հանդիպումները տեղեկատվություն տրամադրեցին Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատում (ESSA) հիմնական բացահայտումների շուրջ, օժանդակեցին Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) Գործողությունների ծրագրի ձևակերպմանը և տեղեկատվություն տրամադրեցին նաև Ծրագրի նախագծման համար:

**Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) զեկույցի նախագծային տարբերակի հրապարակում և խորհրդակցություններ:** Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) զեկույցը կիրառարակվի անգլերեն և հայերեն՝ Բանկի արտաքին կայք-էջի միջոցով և Համաշխարհային Բանկի հայաստանյան գրասենյակի կայք-էջի միջոցով : Մի շարք թիրախային հանդիպումների համատեքստում Բանկը խորհրդակցություններ կստանձնի շահագրգիռ կողմերի հետ շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) զեկույցի նախագծային տարբերակի շուրջ: Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) զեկույցի նախագծային տարբերակը, այդ թվում նաև ամփոփագիրը՝ թե՛ անգլերենով և թե՛ հայերենով, կշրջանառվեն հանդիպումներից առաջ: Աշխատաժողովների շրջանակներում իրականացվող դիտարկումները կներառվեն Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) վերջնական զեկույցում, մասնակիցների վերջնական ցանկը և վերջիններիս դիտողություն-առաջարկությունների ամփոփագիրը կներառվի Հավելված 3-ում:

## 2 ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1 Ծրագրի ոլորտային և ինստիտուցիոնալ ենթատեքստը

Հայաստանի Էներգետիկ համակարգը մեծապես կախված է ներկրվող վառելիքից (մասնավորապես բնական գազից)՝ առաջացնելով Էներգետիկ անվտանգության Եական ռիսկեր, որոնք վատանում են համաշխարհային Էներգետիկ ճգնաժամով պայմանավորված: 2021թ-ին Հայաստանի ընդհանուր Էներգամատակարարման 62 տոկոսը եղել է բնական գազի հաշվին, այնուհետև նավթի (16 տոկոս), ատոմային (14 տոկոս) և հիդրոլոգիական (5 տոկոս) ռեսուրսների հաշվին: Ի հակադրություն դրան, ոչ ավանդական վերականգնվող Էներգետիկ աղբյուրները (հողմային և արևային) կազմում են մոտ 1 տոկոսը:<sup>2</sup> Այս Էներգետիկ խառնուրդով պայմանավորված՝ Հայաստանը կանգնում է Էներգետիկ անվտանգության Եական ռիսկերի առջև քանի որ վերջինիս բնական գազը, նավթը և ատոմային վառելիքը ներկրվում են, մասնավորապես Ռուսաստանից և Իրանից: Էներգետիկ ոլորտի զարգացման Կառավարության տեսլականի նպատակը Հայաստանի Էներգետիկ անվտանգության բարձրացումն է՝ նվազեցնելով երկրի ջերմային գազերի արտանետումները:

Հայաստանում Էլեկտրաամատակարարման որակը վատանում է և հետ է մնում ԵԿԱ տարածաշրջանի համանման այլ երկրներից, որը փաստում է այն մասին, որ անհրաժեշտ է շարունակել ներդրումներ կատարել ցանցում և արդիականացնել ցանցը, այդ թվում նաև Էլեկտրական ենթակայանները և ցանցի թվայնացումը: Էլեկտրահաղորդման ցանցը պատկանում է և շահագործվում է պետական սեփականություն հանդիսացող ԲԷՑ-ի կողմից: ԲԷՑ-ի ենթակայանների մեծ մասը կամ զգալիորեն հիմնանորոգվել են, կամ այդ գործընթացում են: Վերջին տարիներին ԲԷՑ-ը զգալի փորձ է ձեռք բերել կապալառուների հետ աշխատանքի և Էլեկտրահաղորդման ենթակառուցվածքային ներդրումների հետ կապված գնումների առումով՝ ծրագրեր իրականացնելով, որոնք ֆինանսավորվել են Համաշխարհային Բանկի և միջազգային ֆինանսական այլ կառույցների կողմից:

### 2.2 Կառավարության ծրագիր

Առաջարկվող Արդյունքահեն ծրագիրն աջակցում է Կառավարության ծրագրին, որը սահմանվում է 2040թ-ի Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարության շրջանակներում, որը ՀՀ կառավարության կողմից հրապարակվել է 2021թ-ին: Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարությունը սահմանում է Էներգետիկ բնագավառի զարգացման 5 հիմնական առաջնահերթությունները. (i) Էլեկտրահաղորդման ենթակառուցվածքում ներդրումների իրականացում, (ii) Էներգետիկ շուկայի աստիճանաբար ազատականացում, (iii) Հայաստանի ատոմակայանի կյանքի երկարացում, (iv) վերականգնվող Էներգիայի պոտենցիալի օգտագործում և (v) բոլոր ոլորտներում Էներգաարդյունավետության բարձրացում: ՀՀ կառավարությունը մշակել է Գործողությունների ծրագիր՝ միջամտությունների, գնահատված ներդրումների, ժամանակացույցի և պատասխանատու գերատեսչությունների մանրամասներով:

Վերականգնվող Էներգետիկայի (ՎԷ) ինտեգրման համար Էլեկտրահաղորդման ենթակառուցվածքի ուժեղացումը Էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարության (ESDS) հիմնական առաջնահերթությունն է հանդիսանում: ԲԷՑ-ի համար Էլեկտրահաղորդման ուղղությամբ հիմնական ներդրումները կներառեն. (i) ենթակայանի հիմնանորոգման ծրագրի ավարտումը և (ii) SCADA հաղորդակցության և ավտոմատացման համակարգի ամբողջական իրականացումը:

<sup>2</sup> ՀՀ վիճակագրական կոմիտե (ՎիճԿոմ), Հայաստանի 2021թ-ի Էներգետիկ հաշվեկշիռը:

Էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարությունն (ESDS) աջակցում է Էներգետիկայի շուկայի ազատականացմանը՝ տեղական շուկայում արդյունավետությունը բարձրացնելու և մրցունակություն ապահովելու համար: Սա ներառում է մրցակցության և հաշվեկշռման պարտականության աստիճանաբար ներդրումը Էներգետիկ շուկայում՝ բազմամյա բարեփոխման ծրագրի իրականացման միջոցով: Հետագա բարեփոխումները կներառեն Էներգետիկայի մասին նոր օրենքի մշակումը, համապատասխանեցումը ԵՄ դիրեկտիվի պահանջներին և ավելի մրցունակ շուկա ձևավորելու համար հնարավորությունների դիտարկմանը: Սպասվում է, որ վերականգնվող Էներգակայանները էլեկտրաէներգիա կվաճառեն մրցակցային պայմաններով, առանց էլեկտրաէներգիայի երաշխիքի և պետական-մասնավոր փոխգործակցության (PPP) համաձայնագրերի:

Էներգետիկ ոլորտի զարգացման ռազմավարության (ESDS) նպատակն օգտագործել Հայաստանի վերականգնվող Էներգիայի աղբյուրների ներուժը՝ բնապահպանական ստանդարտներին համապատասխան: Այս ներդրումները կներառեն մոտ 520 ՄՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ յոթ արևային ֆոտովոլտային կայանների կառուցումը առաջիկա մի քանի տարիների ընթացքում: Ակնկալվում է, որ մինչև 2024 թվականը փոքր, ավտոնոմ արևային ՖՎ համակարգերի դրվածքային հզորությունը կհասնի 100 ՄՎտ-ի: Կենցաղային սպառման համար վերականգնվող Էներգետիկ ներդրումների գնումն իրականացվում է մրցակցային հիմունքներով՝ պետական-մասնավոր փոխգործակցության (PPP) օրենսդրության շրջանակներում, մինչդեռ բաշխման մակարդակի վերականգնվող Էներգետիկայի ներդրումները խթանվում են աջակցության ավելի պարզ սխեմաների շրջանակներում, այդ թվում նաև կարգավորվող սակագների միջոցով կամ զուտ հաշվառումով: Վերականգնվող Էներգիայի այս ներդրումների հաջող իրականացումը պահանջում է պլանավորում, շահագործում և ներդրումներ հաղորդման ցանցերում:

Կառավարության ռազմավարության նպատակն է բարելավել Էներգետիկ ոլորտի պետական ձեռնարկությունների (ՊԶ) կառավարումը՝ դրանց կառավարումը և կատարողականի պրակտիկաները համապատասխանեցնելով միջազգային ստանդարտներին: Բարեփոխումները ներառում են սակագների կարգավորման գործիքներում փոփոխությունները, տարեկանից բազմամյա ցիկլերի անցումը և խրախուսման վրա հիմնված սակագնային կարգավորումներին անցումը: ՊԶ-ները նաև պետք է բարելավեն գործառնական կատարողականը, պլանավորեն պահպանման ծախսերը և ստանան միջազգային հավաստագրեր, ինչպիսիք են ISO 9001, ISO 37001, ISO 50001 և ISO 14001:


## 2.3 Արդյունքահեն ծրագիր

### 2.2.1 Արդյունքահեն ծրագրի շրջանակ

Առաջարկվող արդյունքահեն ծրագիրն («Ծրագիր») աջակցում է միջամտությունների համապարփակ փաթեթին, որոնք կենտրոնանում են ԲԵՑ-ի էլեկտրահաղորդման կայանների հիմնանորոգման, ԲԵՑ-ի ֆինանսական կենսունակության և կատարողականի, Էներգետիկ ոլորտի բարեփոխումների և արդիականացման առաջխաղացման և Էներգետիկ տարածաշրջանային համագործակցության աջակցության վրա: **Error! Reference source not found.** Ցույց է տալիս, թե ինչպես են Արդյունքահեն ծրագրի աջակցությամբ միջամտությունները տեղավորվում ավելի ընդգրկուն կառավարության ծրագրում, որը մշակվել է Էներգետիկայի բնագավառի զարգացման 2040թ-ի ռազմավարությունն իրականացնելու համար: Կառավարության ծրագրի ընդհանուր արժեքը գնահատվում է, որ կգերազանցի 2.1 մլրդ ԱՄՆ դոլարը, 2022-2040թթ.: Առաջարկվող Արդյունքահեն ծրագիրը կիրականացվի 2024-2029թթ-ի ընթացքում և կարժենա 60 մլն ԱՄՆ դոլար, որից 40 մլն ԱՄՆ դոլարը կֆինանսավորվի ՎՁՄԲ վարկային միջոցների հաշվին, իսկ մնացած մասը՝ ԲԵՑ-ի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

**Գծապատկեր 1: Էներգետիկ ոլորտի զարգացման 2040թ. ռազմավարության (ESDS) իրականացման կառավարության ծրագրի և Արդյունքահեն ծրագրի սահմանները**

**Կառավարության ծրագրի (Էներգետիկայի բնագավառի մինչև 2040թ. զարգացման ռազմավարություն) և ՀԲ-ի կողմից առաջարկված «Էներգետիկ վերափոխման խթանում» արդյունքահեն ծրագրի միջև կապը**



Արդյունքահեն ծրագրի շրջանակներում առաջարկվող միջամտությունները կնպաստեն. (i) Հայաստանի էլեկտրահաղորդման ենթակառուցվածքի ուժեղացմանը, (ii) ԲԵՏ-ի ֆինանսական կենսունակության և կատարողականի բարելավմանը և (iii) ցանցին ավելի մեծ թվով վերականգնվող էներգետիկ ներուժի ինտեգրմանը: Սա իր հերթին կնպաստի Էներգետիկ ոլորտի զարգացման 2040թ-ի ռազմավարության (ESDS) շրջանակներում սահմանված ավելի բարձր մակարդակի նպատակների ապահովմանը, մասնավորապես. (i) Հայաստանի էներգետիկ անվտանգության բարձրացմանը, (ii) էներգետիկ ոլորտի ֆինակալ բեռի նվազեցմանը և (iii) երկրի ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը:

**Ծրագրի զարգացման նպատակ (ԾՁՆ) և ԾՁՆ մակարդակի արդյունքային ցուցանիշեր**

Ծրագրի զարգացման նպատակն է (ԾՁՆ) հնարավորություն ընձեռել վերականգնվող էներգիայի ավելացված հզորությունների ինտեգրմանը էլեկտրահաղորդման ցանցին և բարձրացնել էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակությունը (ՄԿՑ-ներ):

Ծրագրի շրջանակներում միջոցների մասհանումը կկառավարվի Մասհանումների հետ կապված 7 ցուցանիշերի (ՄԿՑ-ներ) միջոցով: ՄԿՑ-ները մշակվել են, որպեսզի խթանեն ներդրումները և բարեփոխումները, որոնք ուղղված են Հայաստանի էլեկտրահաղորդման ենթակառուցվածքի ուժեղացմանը, բարելավեն ԲԵՏ-ի գործառնական և ֆինանսական կատարողականը և հնարավորություն ընձեռեն ցանցին ինտեգրել վերականգնվող էներգիայի ավելացված կարողությունները:

ՄԿՑ 1-ը և 2-ը (մասշտաբը մեծացող ՄԿՑ-ներ) աջակցում է ավտոմատացված վերահսկման և թվային պաշտպանության համակարգերով հագեցած հաղորդման ենթակայանների հզորության տոկոսային ավելացմանը, ինչը կամրապնդի ցանցի ունակությունը՝ ինտեգրելու փոփոխական վերականգնվող

Ըներգիան: ՄԿՑ 3-ը կենտրոնանում է ավելի Ըներգախնայող համակարգի հասնելուն՝ պլանավորման բարելավման միջոցով, Ըներգիայի պահուստավորման միջոցառումները սահմանելով, ԲԷՑ-ը և ԷլեկտրաԸներգետիկական համակարգի օպերատորը (EPSO) միավորելով Էլեկտրահաղորդման համակարգի օպերատորի (TSO) և Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) շրջանակներում Հայաստանի հանձնառությունները կատարելով: ՄԿՑ 4-ն աջակցում է ԷլեկտրաԸներգիայի մեծածախ շուկայի աստիճանական և հետագա ազատականացմանը՝ վերականգնվող Ըներգիայի արտադրության ներդրողների համար նոր բիզնես մոդելների հնարավորություններ ապահովելու նպատակով: ՄԿՑ 5-ը ներառում է ԲԷՑ-ի համար վարկային վարկանիշ ձեռք բերելու և միջնաժամկետ հեռանկարում իր առևտրային կապիտալի հավաքագրման առաջին փուլի փորձնական քայլերը: ՄԿՑ 6-ը և 7-ը կենտրոնանում է ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման և կառավարման արդիականացման վրա (ներառյալ կանանց ներկայացվածությունը հորիզոնում<sup>3</sup>), որը որպես հիմնական նախապայման է որոշվել ԲԷՑ-ի համար բարենպաստ վարկային վարկանիշ ստանալու և առևտրային կապիտալ ներգրավելու համար: Հավելված 1-ի Աղյուսակ 3-ը ցույց է տալիս ՄԿՑ-ների բացվածքն՝ ըստ մասհանումների հետ կապված արդյունքների (ՄԿՎ-ներ), որի համար մասհանումների գումարները և իրականացման ինդիկատիվ ժամանակացույցը ներկայացվում են:

**2.2.2 Իրականացման մեխանիզմներ**

Ծրագրի ընդհանուր համակարգման համար պատասխանատու կլինի Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը՝ ՀԾԿՀ-ի հետ միասին, որը պատասխանատու կլինի քաղաքականության և կանոնակարգման որոշումների համար, որոնք ներառված են ՄԿՑ-ներում (սակագնի կառուցվածքի բարեփոխում, ՊՁ կառավարման բարեփոխում):

ԲԷՑ-ը կլինի իրականացնող հիմնական գերատեսչությունը: ԲԷՑ-ը ծանոթ է ՎՁՄԲ գործառնություններին, այդ թվում նաև վերջերս ավարտված «Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրին» (P116748), ինչպես նաև իրականացվող «Էլեկտրահաղորդման և ցանցի բարելավման ծրագրին» (P146199): Իրականացնող մյուս գործակալությունները ներառում են ՀԾԿՀ-ն, ՏԿԵՆ-ը և ԷլեկտրաԸներգետիկական համակարգի օպերատորը (EPSO): Այս գերատեսչությունները չեն առաջացնի զգալի չնախատեսված ծախսեր՝ Արդյունքահեն ծրագրի իրականացման համար<sup>4</sup>, սակայն դրանք կենտրոնական դերակատարություն կունենան ՄԿՑ-ների շրջանակներում մի շարք միջոցառումներ նախաձեռնելու համար: Իրականացնող գերատեսչությունները առաջընթացի հաշվետվություններ կներկայացնեն Արդյունքահեն ծրագրի մոնիթորինգի և վերահսկման համար ՏԿԵՆ-ին և ՖՆ-ին, որը կլինի կառավարության կողմից ընդհանուր Արդյունքահեն ծրագրի համար պատասխանատու ստորագրող կողմը:

Ստորև ամփոփ ներկայացվում է տարբեր ՄԿՑ-ների համար իրականացնող գերատեսչությունների բաշխումը:

**Աղյուսակ 1: Իրականացման մեխանիզմներն՝ ըստ ՄԿՑ-ների**

Մասհանման հետ կապված ցուցանիշ	Իրականացնող գերատեսչություն			
	ԲԷՑ	ՀԾԿՀ	ՏԿԵՆ	ԷԷՀՕ
<b>Արդյունքային ոլորտ 1: Ապահովում վերականգնվող Ըներգիայի ավելացված հզորության ինտեգրումը ցանցին:</b>				

<sup>3</sup> Մի շարք փաստարկներ կան՝ ի աջակցություն ընկերության ղեկավար պաշտոններում կանանց ներկայացվածության: Տե՛ս օրինակ, Համաշխարհային Բանկ, “Exploring Opportunities for Gender Diversity in the Mining and Energy Sector in Serbia” (2022թ.), որ հասանելի է հետևյալ հղումով՝ <https://openknowledge.worldbank.org/server/api/core/bitstreams/6669c192-c4ad-58bc-9071-93a9fca92788/content>

<sup>4</sup> Սրա պատճառով Ֆիդուցիար համակարգերի գնահատումը և Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատումը, որոնք իրականացվում են Արդյունքահեն ծրագրի շրջանակներում, կենտրոնանում են միայն ԲԷՑ-ի վրա:

ՄԿՑ 1: Ավտոմատացված վերահսկման և թվային պաշտպանության համակարգերով հագեցած հաղորդման ենթակայանների հզորության տոկոսային ավելացում:	X			
ՄԿՑ 2: Հաղորդման ենթակայանների ընդհանուր կարողության ավելացում:	X			
ՄԿՑ 3: Էներգախնայող համակարգի պլանավորման, գործարկման և կարգավորման բարելավման իմաստով առաջընթացի գրանցում:		X	X	X
ՄԿՑ 4: Էլեկտրաէներգիայի շուկայի ազատակա- նացման ուղղությամբ առաջընթաց:	X	X		
<b>Արդյունքային ոլորտ 2: Էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակության բարձրացում</b>				
ՄԿՑ 5: Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի ենթակառուցվածքների համար առևտրային կապիտալի հավաքագրման ավելացում:	X	X		
ՄԿՑ 6: Առաջընթաց ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման համակարգերի արդիականացման ուղղությամբ:	X			
ՄԿՑ 7: ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման արդիականացման ուղղությամբ առաջընթաց:	X			

### 3 ԱՎՆԿԱԿՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագրի հետ կապված ընդհանուր բացասական ՇՄ և Ս ռիսկերը և ազդեցությունները գնահատվում են որպես «Զափավոր»:

**Սոցիալական** – Պոտենցիալ սոցիալական ռիսկերը կապված են ենթակայանների հիմնանորոգման հետ և հիմնականում վերաբերում են աշխատանքին և աշխատանքային պայմաններին, աշխատողների և հանրային առողջությանն ու անվտանգությանը: Կարող են նաև տեղի ունենալ ծառայությունների խաթարումներ, ենթակայանների հիմնանորոգման դեպքում սա կվերաբերի վերջնական օգտագործողներին էլեկտրամատակարարման ընդհատումներին: Հիմնանորոգման աշխատանքները չեն ենթադրում հողի օտարման հետ կապված ազդեցություններ ունենալ, քանի որ բոլոր աշխատանքները կիրականացվեն գոյություն ունեցող տեղամասում: Սեռական շահագործման և չարաշահման և սեռական ոտնձգության ռիսկերը, որոնք կապված են շինարարական աշխատանքների հետ կապված համայնքի և աշխատողների հետ փոխգործակցության հետ, համարվում են ցածր: Թեև նախատեսվում է աջակցություն սակագների կառուցվածքի բարեփոխումների համար, դա կարող է հանգեցնել սպառողների համար սակագնի բարձրացման և կնպաստի էլեկտրաէներգիայի ավելի արդյունավետ օգտագործմանը: Սոցիալապես անապահով խմբերն արդեն օգտվում են իջեցված սակագներից, սակայն ցանկացած բարձրացում կարող է հետագայում անհամաչափ ազդել նրանց վրա կամ այլ տնային տնտեսություններին մղել այս կատեգորիայի մեջ:

**Բնապահպանական** – Արդյունքահեն ծրագրի հետ կապված բնապահպանական ռիսկերի մեծ մասը կապված է թափոնների կառավարման հետ: Ակնկալվում է, որ ենթակայանների հիմնանորոգման արդյունքում կառաջանան զգալի քանակությամբ վտանգավոր թափոններ, որոնք խնդիր են ներկայացնում դրանց վերջնական հեռացման համար: Ակնկալվում է, որ կառաջանան այնպիսի թափոններ, ինչպիսիք են օգտագործված յուղը, հին մարտկոցները, քսայուղերը և փոխարինված տրանսֆորմատորները, ինչպես նաև հին սարքավորումները, ինչպիսիք են անջատիչները, կերամիկական մասերը և պողպատը: Ավարտված և ընթացիկ էներգետիկ ծրագրերի շրջանակներում այս նյութերը պահվել են տեղամասում՝ ԲԷՏ-ի հաշվեկշռում: Երկիրը ներկայումս չունի վտանգավոր թափոնների վերամշակման, չեզոքացման և անվտանգ հեռացման կարողություններ և համակարգեր, և չունի նաև վերջնական հեռացման համար մասնագիտացված աղբավայրեր:

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) թափոններ կառավարումը ղեկավարվում է Թափոնների մասին օրենքով՝ մի շարք ենթաօրենսդրական ակտերով և իրավական ակտերով: Իրավական պահանջներին բավարարելու համար վտանգավոր թափոնների համար ընթացակարգերը պետք է պետական գրանցման և անձնագրավորման գործընթացներ անցնեն, ինչպես նաև անհրաժեշտ թույլտվություններ ձեռք բերեն: Տասնյակից ավելի մասնավոր ընկերություններ մասնագիտացված են վտանգավոր թափոնների հավաքման, կայունացման և անվտանգ երկարաժամկետ պահուստավորման համար, գործում են պետական լիազորությամբ և պահանջվող թույլտվությունների հիման վրա: Այնուամենայնիվ, այս ծառայությունների հետ կապված բարձր արժեքով պայմանավորված՝ շատ վտանգավոր թափոններ առաջացնողներ նախընտրում են թափոնները պահել իրենց սեփական տարածքում: Բացի այդ, որոշ ենթակայանների հիմնանորոգումը կարող է ներառել ասբեստ պարունակող տանիքի թիթեղների պահպանումը, կառավարումը և անվտանգ հեռացումը, որոնք լայնորեն կիրառվում էին խորհրդային տարիներին շինարարության մեջ: Ոչ վտանգավոր շինարարական թափոնների պատշաճ հեռացումը նույնպես խնդրահարույց է՝ ժամանակակից չափանիշներին համապատասխանող սանիտարական աղբավայրերի համազգային պակասով պայմանավորված: Ֆիզիկական աշխատանքի դեպքում առկա է



տրանսֆորմատորներից թունավոր հեղուկ նյութերի պատահական արտահոսքի ռիսկը: Թեև ենթակայանները հագեցված են արտահոսքերը սահմանափակելու և շրջակա միջավայր արտանետումը կանխելու համար հարմարություններով, հողի և ստորգետնյա ջրերի աղտոտման հավանականությունը հնարավոր չէ ամբողջությամբ վերացնել:

Բացառման չափանիշները գնահատելիս, չնայած որոշ գործողություններ աշխատողներին և համայնքներին ենթարկում են առողջության և անձնական անվտանգության ռիսկերի, դրանք չեն համարվում էական ռիսկեր:

Արդյունքահեն ծրագիրը նաև կաջակցի ցանցի զարգացման տասնամյա ծրագրի ներդրմանը և թարմացումներին: Հնարավոր է, որ այս ծրագրերի շրջանակներում գործունեությունը կսկսվի Արդյունքահեն ծրագրի գործողության ընթացքում, դրանց շրջանակներում ցանկացած ներդրման համար կնախաձեռնվեն տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրություններ, սակայն տվյալ ծրագրերի ամփոփումից հետո: Արդյունքահեն ծրագիրը նաև կաջակցի «Էլեկտրաէներգիայի մասին Նոր օրենքի» և «Էներգաարդյունավետության մասին Նոր օրենքի» ընդունմանը, որը համապատասխանեցված է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրին (CEPA): Իրավական և կանոնակարգային շրջանակում փոփոխությունները կկատարվեն Նորմատիվ իրավական ակտերի մասին ազգային օրենքի համաձայն, որը նախատեսում է ազդեցության գնահատում և նախագծերի փորձաքննություն, եթե առաջարկվող փոփոխությունները կարող են էական ազդեցություններ ունենալ մասնավոր կամ ընդհանուր պետական հատվածի համար: Արդյունքահեն ծրագրի ֆինանսավորման քաղաքականության համաձայն՝ կբացառվի ցանկացած այնպիսի ներդրման աջակցությունը, որը դատողությունների համաձայն կարող է էական բացասական ազդեցություններ ունենալ, որոնք զգայուն, բազմազան կամ աննախադեպ են շրջակա միջավայրի և/կամ ազդակի անձանց վրա:

Կորպորատիվ մակարդակի կառավարման համակարգի շրջանակներում ԲԷՑ-ը կուժեղացնի իր կորպորատիվ Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգերը (ESMS), այդ թվում՝ նաև ստանալով ISO 14001 հավաստագրում: Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգերի (ESMS) ուժեղացումը կապահովի, որպեսզի ԲԷՑ-ն ունենա հստակ քաղաքականության հայտարարություն և փաստաթղթավորված ընթացակարգեր, որոնք վերջինս հետևողականորեն կիրառում է իր բոլոր գործողություններում՝ ռիսկերը գնահատելու, ռիսկերի նվազեցման միջոցառումներ իրականացնելու և շարունակական բարելավման գործընթացները վերահսկելու համար: Այս գործընթացի առանցքային բաղադրիչը կլինի թափոնների կառավարման գործելակերպի կատարելագործումը, որը հատուկ ուշադրություն կպահանջի Ծրագրի շրջանակներում ակնկալվող վտանգավոր թափոնների կառավարմանը, ահդ թվում նաև՝ արդեն իսկ ստեղծված և ԲԷՑ-ի օբյեկտներում պահվող թափոնների կառավարմանը: Սա կներառի նաև վտանգավոր թափոնների կառավարման տարբերակների և պոտենցիալ լուծումների ուսումնասիրությունն ինչպես ներքին, այնպես էլ միջազգային մակարդակում:

Առաջարկվող Արդյունքահեն ծրագիրը համահունչ է Փարիզյան համաձայնագրի և՛ մեղմացման, և՛ հարմարվողականության նպատակներին: Մեղմացման առումով, հուսալիությունը բարելավելու նպատակով Էլեկտրահաղորդման ենթակառուցվածքների ամրապնդումն ու վերակառուցումը համարվում է համընդհանուր և չի ակնկալվում, որ ազդեցություն կունենա Հայաստանի ցածր ածխածնային զարգացման ուղու վրա: Հարմարվողականության իմաստով հիմնվելով Արդյունքահեն ծրագրի համար իրականացված կլիմայի և աղետների ռիսկի գնման վրա՝ ակնկալվում է, որ կլիմայական հնարավոր իրադարձությունների ազդեցությունը ծրագրային միջոցառումների վրա կլինի չափավոր և հիմնականում կապված կլինի հեղեղումների, սողանքների և ջերմային ալիքների հետ: Կլիմայական

ռիսկերն ընդունելի մակարդակների հասցնելու համար Ծրագրի աջակցությամբ ԲԷՑ-ի Էլեկտրահաղորդման ենթակայանների հիմնանորոգումը կալանավորվի և կիրականացվի՝ հաշվի առնելով մի շարք բացասական պայմաններ, որոնք կարող են վատանալ կլիմայի փոփոխության արդյունքում: Օրինակ՝ բարձր տեղադրված սարքավորումները նվազագույնի կհասցնեն հեղեղումների վտանգը, մինչդեռ օդափոխության և հովացման առաջադեմ տեխնոլոգիաները կօգնեն պահպանել օպտիմալ աշխատանքային պայմանները ծայրահեղ շոգի ժամանակ: Հատուկ միջոցներ (օրինակ՝ *ջրահեռացման բարելավում և պաշտպանիչ պատերի կառուցում՝ անհրաժեշտության դեպքում ավելի ցածր լանջերն ամրացնելու համար*) կձեռնարկվեն՝ սողանքների վտանգը նվազեցնելու համար այն ենթակայաններում, որոնք հայտնի է, որ հակված են այս վտանգին (օրինակ՝ «Մարաշ», «Եղեգնաձոր»): Այսպիսով, առաջարկվող գործառնությունը համարվում է Փարիզյան համաձայնագրի հարմարվողականության նպատակներին համահունչ, և ակնկալվում է, որ կնպաստի Ազգային մակարդակով սահմանված ներդրման/գործողության շրջանակներում Հայաստանի հարմարվողականության նպատակների իրականացմանը՝ բարելավելով Էներգետիկ ոլորտի կլիմայական դիմակայությանը:

## 4 ԲՆԱՊԱՅՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Այս բաժինը նկարագրում է վարկառուի կողմից կիրառվող համակարգերի հիմնական բաղադրիչները և տրամադրում է այս համակարգերի ընդունելի լինելու մասին վերլուծություն՝ հաշվի առնելով ռիսկի մակարդակը և այն, թե որքանով են վարկառուի համակարգերը և պրակտիկաները համապատասխանեցված հիմնական սկզբունքներին: Գնահատման շրջանակներում սահմանվում են այն ուղիները, որոնցով Ծրագրի կիրառելի համակարգերը տարբերվում են համապատասխան հիմնական սկզբունքներից, և գնահատում է այդ տարբերությունների գործառնական նշանակությունը: Այն նաև փորձում է գնահատել այս հիմնական տարբերությունները լուծելու հետ կապված հաճախորդի կարողությունը:

Այս բաժինը բաժանված է երեք մասի.

Բաժին 4.1-ում քննարկվում է համակարգը, որը կապված է ԲԵՏ-ի միջոցով ֆիզիկական ենթակառուցվածքում ներդրումներին և ԲԵՏ-ի կորպորատիվ կառավարման համակարգի և կորպորատիվ կառավարման ուժեղացմանը՝ հետևյալ ՄԿՑ-ների մասով.

ՄԿՑ 1: Ավտոմատացված վերահսկման և թվային պաշտպանության համակարգերով հագեցած հաղորդման ենթակայանների հզորության տոկոսային ավելացում:

ՄԿՑ 2: Հաղորդման ենթակայանների ընդհանուր կարողության ավելացում:

ՄԿՑ 3: Էներգախնայող համակարգի պլանավորման, գործարկման և կարգավորման բարելավում:

ՄԿՑ 6: Առաջընթաց ԲԵՏ-ի կորպորատիվ կառավարման համակարգերի արդիականացման ուղղությամբ:

ՄԿՑ 7: ԲԵՏ-ի կորպորատիվ կառավարման արդիականացման առաջընթաց:

Վերոնշյալ Բաժին 4.2-ը վերաբերում է սակագների մեթոդաբանության պոտենցիալ փոփոխություններին և արդյունքում փոփոխությանը, որը որոշվել է ՄԿՑ 3-ի շրջանակներում, նաև ՄԿՑ 5-ի շրջանակներում Էլեկտրահաղորդման ցանցի ենթակառուցվածքի համար առևտրային կապիտալի մոբիլիզացման ավելացմանը:

Բաժին 4.3-ը վերաբերում է Էներգետիկ շուկայի ազատականացման ուղղությամբ առաջընթացի ՄԿՑ 4-ի հետ կապված փոփոխությունների մասին հաղորդակցությանը և իրագրական բարձրացմանը:

ՇՄՍՀԳ-ի նկատառումներից ելնելով՝ միայն ԲԵՏ-ի ՇՄ և Ս համակարգերը կգնահատվեն, քանի որ միայն ԲԵՏ-ի կողմից իրականացված գործունեությունը ենթադրում է ծախսեր կամ ֆիզիկական միջոցառումներ: Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը (EPSO) և ՀԾԿՀ-ն չեն գնահատվում ՇՄՍՀԳ-ի շրջանակներում և ոչ էլ ֆիդուցիար համակարգերի գնահատման շրջանակներում:

### 4.1 Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգ: Ներդրումների ֆիզիկական ենթակառուցվածքում

Ֆիզիկական ենթակառուցվածքում ներդրումների նպատակն է Էլեկտրական ենթակայանների հիմնանորոգումը: Ծախսերը կներառեն հետևյալ ենթակայանների ամբողջական հիմնանորոգումը:

«Շահումյան -2» ենթակայան - 220/110/10 կՎ լարման տակ աշխատող այս ենթակայանը մասամբ հիմնանորոգվել է 2003-2004 թվականներին և գտնվում է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում:

«Մարաշ» ենթակայան - 220/110/10 կՎ լարման տակ աշխատող այս ենթակայանը մասամբ հիմնանորոգվել է 2004թ-ին և տեղակայված է Երևանի Նորթ-Մարաշ վարչական շրջանում:

«Եղեգնաձոր» ենթակայան - 220/110/35 կՎ լարման տակ աշխատող այս ենթակայանը չի հիմնանորոգվել 1966թ-ին շահագործման հանձնվելուց ի վեր:

Ծախսերը կներառեն նաև այլ ենթակայաններում իրականացվող հիմնանորոգման ծախսեր, այդ թվում նաև նրանք, որոնք մեկնարկել են Երրորդումային ծագրերի ֆինանսավորման շրջանակներում, սակայն չեն ավարտվել: Դրանք ներառում են հետևյալը.

- «Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր» P116748 – «Չարենցավան-3» ենթակայան, Չարենցավան համայնք և «Չովունի» ենթակայան, Երևան համայնք:
- «Էլեկտրահաղորդման և ցանցի բարելավման ծրագիր» P146199 - «Արարատ-2» ենթակայան, որը տեղակայված է Արարատի համայնքում:

Հաղորդման ենթակայանների հիմնանորոգումը սովորաբար ներառում է գոյություն ունեցող տրանսֆորմատորների կատարելագործումը և կամ փոխարինումը և ակնկալվում է, որ Էապես կբարելավի Էլեկտրամատակարարման հուսալիությունը և արդյունավտությունն այն տարածքներում, որոնց ծառայություն են մատուցում:

#### ***4.1.1 ԴՅ կառավարության քաղաքականությունը, իրավական կանոնակարգային շրջանակները***

2023թ. փետրվար-հունիս ամիսներին իրականացվել է Հայաստանի ազգային իրավական և կարգավորող դաշտի և Համաշխարհային Բանկի Շրջակա միջավայրի և սոցիալական շրջանակի (ESF) խզվածքի վերլուծություն, որի արդյունքում գնահատվել է Հայաստանի ազգային համակարգի և Շրջակա միջավայրի և սոցիալական շրջանակի (ESF) միջև իրավական, իրականացման և կիրարկման հիմնական բացերը/խզվածքը<sup>5</sup>: Սկզբունքները, որոնք ուղղորդում են Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատումը (ESSA), իրենց բովանդակությամբ և նպատակով նման են նրանց, որոնք ուղղորդում են ստադարտ Ներդրումային ծրագրի ֆինանսավորման (IPF) Բ և Ս հարցերը և նպատակ ունեն հասնելու համանման արդյունքների: Ֆիզիկական ենթակառուցվածքի ներդրումների համար կանոնակարգային համակարգերի գնահատման նպատակով Շրջակա միջավայրի և սոցիալական շրջանակի (ESF) բացերի վերլուծության հիմնական բացահայտումները ներկայացվում են ստորև՝ Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատումն (ESSA) ուղղորդող հիմնական սկզբունքների համեմատ:

#### **Շրջակա միջավայրի և սոցիալական կայունության խթանում**

*Արդյունքահեն ծրագրի նախագծման շրջանակներում Շրջակա միջավայրի և սոցիալական կայունության խթանում, հակառակ ազդեցություններից խուսափում, մինիմիզացնում կամ մեղմացում և Արդյունքահեն ծրագրի Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկացված որոշումների կայացման խթանում:*

ԴՅ օրենսդրությունը և իրականացման պրակտիկաներն ընդհանուր առմամբ համապատասխանեցված են Շրջակա միջավայրի և սոցիալական կայունության միջազգային լավ պրակտիկաներին, այնուամենայնիվ, օրենսդրությունը, քաղաքականությունը և ինստիտուցիոնալ համակարգերը դեռևս ուժեղացման կարիք ունեն մի շարք կարևոր ուղղություններում: Թեև նման բացերի լրացումը կարող է

<sup>5</sup> Այստեղ հղումն ավելացնել:

կարճաժամկետ ծախսեր առաջացնել, միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՇՄ և Ս ռիսկի կառավարման ավելի ուժեղ ազգային համակարգերը երկարաժամկետ զարգացման օգուտներ են ապահովում մարդկանց և տնտեսության համար: Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքը (ՇՄԱԳ օրենք), վերջին փոփոխություններով, որոնք ուժի մեջ են մտել 2023թ-ի հունիս ամսից, ընդհանուր առմամբ համապատասխանում են միջազգային լավ պրակտիկային, սակայն որոշ վիճարկելի դրույթներ ունեն:

Ինչ վերաբերում է սոցիալական խնդիրներին, ՇՄԱԳ մասին օրենքն ամբողջությամբ չի լուսաբանում սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բացահայտումն ու կառավարումը: **Ենթակայանների հիմնանորոգման արդյունքում ակնկալվող սոցիալական հետևանքները հիմնականում վերաբերում են աշխատանքին և աշխատանքային պայմաններին, ինչպես նաև հիմնանորոգման աշխատանքների ընթացքում վերջնական սպառողներին էլեկտրամատակարարման ընդհատումներին:** Գործնականում ենթակայաններում հիմնանորոգման աշխատանքների պատճառով հոսանքազրկումները նվազագույն են՝ ԲԷՑ-ի և «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի (ՀԷՑ) լավ համակարգման շնորհիվ: Հնարավոր խափանումների մասին տեղեկատվությունը հանրությանը նախապես հաղորդվում է հեռուստատեսության միջոցով:

Ենթակայանի վերականգնման դեպքում աշխատանքի և աշխատանքային պայմանների հետ կապված հարցերը լավ են կառավարվում: Աշխատողները անցնում են անվտանգության և արտակարգ իրավիճակներին պատրաստվածության ուսուցում, կրում են անձնական պաշտպանիչ սարքավորումներ և պահպանում են անվտանգության կանոնները ենթակայաններում աշխատելիս: Այնուամենայնիվ, աշխատատեղի և աշխատանքների կառավարումը հիմնականում վատ է կառավարվում շինարարական աշխատանքների շրջանակներում երկրի մակարդակով, և ռիսկերի գնահատումն ու մանրակրկիտ մշտադիտարկում է պահանջվում՝ ազդեցությունները մեղմելու նպատակով:

Չնայած բոլոր ենթակայանները ցանկապատված են ու լիազորություն չունեցող անձանց մուտքը խստիվ արգելվում է, սա շարունակում է լինել համայնքի առողջության և անվտանգության ռիսկ՝ շինհրապարակի վատ կառավարման արդյունքում:

**Հիմնանորոգման աշխատանքները տեղի կունենան ենթակայանների գոյություն ունեցող տարածքում, ուստի որպես այդպիսին, հողի օտարման հետ կապված ազդեցություններ չեն նախատեսվում և կստուգվեն նախապատրաստման ընթացքում: Սեռական շահագործման և բռնության հետ կապված ռիսկերը շինարարական աշխատանքների հետ կապված հանրային աշխատողների հետ շփումների արդյունքում, ցածր են համարվում:**

ՇՄՍԿ-ների մշակումը պարտադիր է, սակայն օրենքը անհասկանալի է ծրագրի հարմարվողական կառավարման համար մոնիթորինգի տվյալների օգտագործման մասով: Ակնհայտ է, որ ՇՄԱԳ օրենքի վերջին Էական փոփոխությունը պահանջում է մի շարք օժանդակ ենթաօրենսդրական ակտերի փոփոխություն կամ մշակում, որոնք մանրամասն կներկայացնեն օրենքի կիրառման վերաբերյալ ուղեցույցները և կհեշտացնեն դրա կիրարկումը: Ընդհանուր առմամբ, ՇՄԱԳ-ի մասին օրենքի պատշաճ իրականացումը պահանջում է առաջնահերթություն տալ լավ բնապահպանական կառավարմանը և մեծացնել նյութական և մարդկային ռեսուրսների բաշխումը:

Ենթակառուցվածքային ծրագրերի համար ՇՄԱԳ օրենքը լիազորում է Ծրջակա միջավայրի ազդեցության համապարփակ գնահատումը: Այնուամենայնիվ, ՇՄԱԳ չպահանջող ծրագրերի դեպքում օրենքը չի նախատեսում ՇՄ և Ս ռիսկի գնահատման սպեցիֆիկ գործիքներ բնապահպանական պահանջներին համապատասխանության ուսումնասիրության շրջանակներում: Արդյունքում ամենօրյա կտրվածքով

ՇՄ և Ս ազդեցությունների գնահատման և կառավարման պատասխանատվությունը նման ծրագրերի դեպքում կրում են ծրագիրն իրականացնող մարմինները:

Հիմնական օրենքները, որոնք նախատեսում են ռեսուրսների արդյունավետ օգտագործում և աղտոտման կառավարում, հանդիսանում է Ջրային օրենսգիրքը (2002թ.), Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին օրենքը (2005թ.), Էներգախնայողության և վերականգնվող Էներգետիկայի մասին օրենքը (2004թ.), ինչպես նաև Ընդերքի մասին օրենսգիրքը (2011թ.), Թափոնների մասին օրենքը (2004թ.), Աղբահանության և սանիտարական մաքրման մասին օրենքը (2011թ.) և Մթնոլորտային օդի պաշտպանության մասին օրենքը (1994թ.):

Թափոնների մասին օրենքը (2004թ.) և Աղբահանության և սանիտարական մաքրման մասին օրենքը (2011թ.) վերացնում են թափոնների ապօրինի թափումը և անվճար այրումը, արգելում են վտանգավոր թափոնների թափումը քաղաքային աղբավայրերում, սահմանում են թափոնների սեփականության իրավունքը և դրանց հեռացման համար վճարման համակարգը: Ծրջանաձև տնտեսության խթանումը սահմանվում է որպես ազգային նպատակ, և սահմանվում են թափոնների տարանջատումը, վերականգնումը, վերամշակումը և վերաօգտագործումը: Թափոնների տարանջատումն առաջարկվում է հնարավոր վերաօգտագործման համար և խրախուսվում համայնքի մակարդակով, և տնտեսական խթաններ են առաջարկվում թափոնները նվազեցնելու և վերամշակելու համար: Ընդհանուր առմամբ, թափոնների հավաքումն ու հեռացումը շատ ավելի խիստ են կարգավորվում օրենքով, մինչդեռ շրջանաձևության հետ կապված դրույթներն ավելի ընդհանրական և անարդյունավետ են: Ընդհանուր առմամբ, թափոնների կառավարման հիերարխիան ամբողջությամբ սահմանված չէ՝ կրճատումից մինչև հեռացում առաջնահերթությունների հստակ հաջորդականությամբ:

Թափոնների մասին օրենքը պահանջում է գրանցումներ վարել բոլոր տիպի թափոնների առաջացման, վերամշակման և հեռացման համար, սակայն միայն վտանգավոր թափոնների մասին տեղեկատվությունն է հավաքագրվում, և սա չի կանխարգելում վտանգավոր թափոնների սխալ կառավարումը: Վտանգավոր թափոնների համար աղբավայրի չկա և միայն վերջինիս վերջնական հեռացման միակ պաշտոնական ճանապարհը կամ այրումն է, կամ արտահանումը: Տասից ավելի մասնավոր ընկերություններ մասնագիտացված են վտանգավոր թափոններ ստանալու, կայունացնելու և երկարաժամկետ պահուստավորման համար: Դրանց գործունեությունը պաշտոնական է և թույլատրվում է: Այնուամենայնիվ, նման ընկերությունների ծառայությունները թանկ են և շատ ընկերություններ, որոնք վտանգավոր թափոններ են առաջացնում, թափոնները պահում են իրենց սեփական տարածքներում, որի համար ևս թույլտվություն է պահանջվում: Այնուամենայնիվ, բազմաթիվ պետական և մասնավոր վայրերում վտանգավոր թափոնների պահեստավորումը վերահսկելու և հսկողության ինստիտուցիոնալ կարողությունների բացակայությունը վտանգ է ներկայացնում մարդու առողջության և շրջակա միջավայրի համար: Մյուս կողմից, Շրջակա միջավայրի և հանքարդյունաբերության տեսչությանը լիազորված է ամբողջ երկրում կիրառել բնապահպանական ազգային օրենսդրության բոլոր ասպեկտները, այդ թվում նաև տրամադրված բնապահպանական թույլտվությունների պայմաններին համապատասխանությունը, և պիտանի չէ ծրագրի մակարդակով բնապահպանական կատարողականը վերահսկելու համար:

**Ենթակայաններում և համապատասխան ենթակառուցվածքում ներդրումները կհանգեցնեն թե՛ վտանգավոր և թե՛ ոչ վտանգավոր շինարարական թափոնների առաջացման: Սա ներառում է մի շարք նյութեր, ինչպիսիք են՝ յուղը, պիտանելիության ժամկետն անցած մարտկոցները, քայուղերը և հին տրանսֆորմատորները, ինչպես նաև այնպիսի պահեստամասերն, ինչպիսիք են անջատիչները, կերամիկական բաղկացուցիչները, մետաղի ջարդոնները՝ խոշոր եզրաչափերի աղբի և հողային նյութերի հետ միասին: Ենթակայանի շենքերի տանիքները ևս կարող են առաջացնել սովետական**

**Ժամանաշրջանից ժառանգություն հասած ասբեստի թիթեղների տեսքով թափոններ, որոնք առկա են ենթակայաններում:** ԲԷՏ-ում թափոնների կառավարման նախկին պրախտիկաներից հետո, այդ թվում նաև արդեն իսկ փակված և իրականացվող էներգետիկ ծրագրերի շրջանակներում, վտանգավոր թափոնները հաջողությամբ պահպանվել են ԲԷՏ-ի կառույցներում՝ Շրջակա միջավայրի նախարարության համաձայնության/հաստատման պարագայում: Ազգային պահանջների համաձայն կներդրվի կանոնակարգված գործընթաց, որը կներառի վտանգավոր թափոնների յուրաքանչյուր խմբաքանակի պետական գրանցումը: Այս գործընթացը նաև կուսումնասիրի լիցենզավորված ընկերությունների ներկայիս հնարավորությունները վտանգավոր թափոնների հետ աշխատելու և չեզոքացնելու համար: Վերամշակվող նյութերը, ինչպիսիք են մետաղի ջարդոնը, կհավաքվեն և կուղարկվեն վերամշակման մասնագիտացված կենտրոններ: **Անհրաժեշտ է ունենալ թափոնների կառավարման ընթացակարգ վտանգավոր և ոչ վտանգավոր թափոնների հոսքերի համար, որոնք առաջանում են ֆիզիկական ենթակառուցվածքային ներդրումներից՝ տեղանքին հատուկ ՇՄՍԿՊ-ներում:**

**Բնապահպանական այլ խնդիրները ներառում են տրանսֆորմատորներից յուղի արտահոսքի հավանականությունը, որը, չնայած ենթակայաններում արտահոսքի կանխարգելման համակարգերին, դեռևս վտանգ է ներկայացնում հողի և ստորգետնյա ջրերի համար: Ենթակառուցվածքային շինարարական աշխատանքների շնորհիվ ակնկալվում է նաև փոշու և աղմուկի առաջացում:**

**Անբարենպաստ ազդեցություններից խուսափում, մինիմիզացում և մեղմացում**

*Բնական միջավայրերի և ֆիզիկական մշակութային ռեսուրսների վրա Արդյունքահեն ծրագրի արդյունքում անբարենպաստ ազդեցություններից խուսափում, ազդեցությունների մինիմիզացում և մեղմում:*

Կենսաբազմազանության և կենդանի բնական ռեսուրսների կառավարումը կարգավորվում է մի շարք օրենքներով, որոնցից կարևորագույններն են «Հատուկ պահպանվող բնական տարածքների մասին» օրենքը (2004 թ.), «Բուսական աշխարհի մասին» օրենքը (1999 թ.), «Կենդանական աշխարհի մասին» օրենքը (2000 թ.) և «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին օրենքը» (2007 թ.): ՇՄԱԳ օրենքը (2014թ.), Բնապահպանական վերահսկողության մասին օրենքը (2005թ.) և «Անտառային օրենսգիրքը» (2005թ.) նույնպես ունեն մի շարք ուղղակի հետևանքներ կենսաբազմազանության պաշտպանության և կառավարման համար: Օրենքները կենտրոնանում են վայրի բնության պոպուլյացիաների և տեսակների պաշտպանության վրա, մինչդեռ նրանց բնակավայրերի պաշտպանությանը բավարար ուշադրություն չի դարձվում: Չկա բնական միջավայրերի բաժանում փոխակերպված, բնական և կրիտիկական միջավայրերի, ինչպես նաև միասնական կենսաֆիզիկական դասակարգում: Կենսաբազմազանության հետևողական ազգային մոնիթորինգի բացակայությունը ելակետային տեղեկատվության հիմնական բացն է, որն ազդում է մեղմացման հիերարխիայի կիրառման և կենդանի բնական ռեսուրսների օգտագործման վերաբերյալ որոշումների կայացման վրա: Բուսական և կենդանական աշխարհի մասին օրենքները կենտրոնանում են վայրի բնության պոպուլյացիաների և տեսակների պաշտպանության վրա, մինչդեռ նրանց բնակավայրերի պաշտպանությանը բավարար ուշադրություն չի դարձվում:

**Կենսաբազմազանության իմաստով որևէ ռիսկ կամ ազդեցություն չի ակնկալվում, քանի որ ֆիզիկական ենթակառուցվածքային աշխատանքները կիրականացվեն ենթակայանի տեղամասերում և ոչ մի կրիտիկական կենսաբազմազանության տարածքներ չեն նույնականացվել ենթակայանի**

տարածքների անմիջական հարևանությամբ: Ռիսկերն առաջանում են թափառող կենդանիների՝ անորակ ցանկապատի պատճառով բարձր լարման տարածքներ մուտք գործելու կամ հին ցանկապատերի փոխարինման պատճառով: Պահանջվում է փուլային մոտեցում՝ մուտքը դեպի տարածք պատշաճ կերպով սահմանափակելու համար, և կենդանիների մուտքը կանխարգելելու համար:

Փոքրամասշտաբ ենթակառուցվածքային աշխատանքները, ինչպես օրինակ՝ հողային աշխատանքները, ներառում են նոր հիմքերի իրականացում, ենթակայանի հին շենքերի և այլնի հիմնանորոգումը, կիրականացվի բնական ռեսուրսների կիրառմամբ, ինչպես օրինակ՝ հումքի և շինարարական նյութերի օգտագործմամբ, որոնք ձեռք կբերվեն լիցենզավորված մատակարարներից կամ որոնց համար կպահանջվի գնումներով ներգրավված կապալառուներից արդյունահանման թույլտվություններ:

«Պատմության, մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» (1998թ.) և «Մշակութային արժեքների ներմուծման և արտահանման մասին» (2004թ.) օրենքները կարգավորում են Հայաստանի ֆիզիկական մշակութային ռեսուրսների պահպանությունն ու օգտագործումը, իսկ «Ոչ նյութական մշակութային արժեքների մասին» ՀՀ օրենքը պաշտպանում է ոչ նյութական արժեքները: Մշակութային ժառանգությունը (2009) պաշտպանում է ոչ նյութական արժեքները: Չկան մշակութային արժեքների առևտրային օգտագործումը կարգավորող հատուկ կանոններ, չկան հստակ պահանջներ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելու և մշակութային ռեսուրսների օգտագործումից օգուտների արդար բաշխման համար: Տարածական և քաղաքաշինական ընթացակարգերը ներառում են պատմական հուշարձանների և քաղաքային ժառանգության պահպանման դրույթներ: Այնուամենայնիվ, համակարգված կառավարումն ու կիրարկումը մարտահրավեր են, քանի որ ակտիվների մի մասը պատկանում է Հայ Առաքելական եկեղեցուն և մասնավոր կազմակերպություններին: Տնտեսական շահերը հաճախ գերակայում են հուշարձանների գեղագիտական արժեքն ու իսկությունը պահպանելու համար անհրաժեշտ սահմանափակումներին:

**Նյութական և ոչ նյութական մշակութային ռեսուրսների վրա աորևէ ազդեցություն չի ակնկալվում ենթակառուցվածքային աշխատանքների արդյունքում, որոնք կսահմանափակվեն ենթակայանների գոյություն ունեցող տարածքում:**

**Հանրության և աշխատակիցների անվտանգության պաշտպանություն**

Հանրության և աշխատակիցների անվտանգության պաշտպանությունը հնարավոր ռիսկերից, որոնք կապված են (i) Արդյունքահեն ծրագրի շրջանակներում օբյեկտների կառուցման և/կամ գործունեության կամ գործառնական այլ պրակտիկաների հետ, (ii) թունավոր քիմիական նյութերի, վտանգավոր թափոնների և այլ վտանգավոր նյութերի ազդեցությունը Արդյունքահեն ծրագրի շրջանակներում, և (iii) բնական աղետների վտանգներին ենթակա տարածքներում գտնվող ենթակառուցվածքների վերակառուցում կամ հիմնանորոգում:

Ֆիզիկական ենթակառուցվածքներում կատարված ներդրումները վտանգներ են ներկայացնում աշխատուժի առողջության և անվտանգության համար: Աշխատողները կարող են գործ ունենալ վտանգավոր նյութերի հետ, որոնք պետք է անվտանգ կերպով մշակում անցնեն՝ առողջության ռիսկերը մեղմելու համար: Առկա է նաև դժբախտ պատահարների և վնասվածքների հավանականություն, հատկապես այն իրավիճակներում, երբ բարձրությունից ընկնելու վտանգ կա, օրինակ՝ էլեկտրասյունների վրա աշխատելիս: Բացի այդ, ենթակայաններում բարձրավոլտ գոտիները, որոնք ֆիզիկական ենթակառուցվածքային աշխատանքների ընթացքում մասամբ գործում են, հոսանքահարման վտանգ են ներկայացնում:



**Մտակա համայնքների համար առողջության և անվտանգության ռիսկը սահմանափակված են, քանի որ շինարարական բոլոր միջոցառումները կիրականացվեն նախանշված տարածքներում: Բոլոր ենթակայանները ցանկապատված են և պաշտպանված են՝ որպես ռազմավարական կարևորության օբյեկտներ: Չթույլատրված անձանց մուտքը խստորեն արգելված է: Այնուամենայնիվ, շինհրապարակի վատ կառավարման արդյունքում մնում է ռիսկը համայնքի առողջության և անվտանգության համար: Շինարարական աշխատանքների հետ կապված հանրային աշխատողների փոխազդեցության հետ կապված SES/SH ռիսկերը ցածր են համարվում:**

Քաղաքացիների և հասարակության առողջության և անվտանգության պաշտպանության ընդհանուր սկզբունքները ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ, որը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու առողջության համար ոչ վնասակար բնական միջավայրում: Մարդկանց փոխգործակցությունը վնասակար միջավայրի հետ սահմանափակվում է մի շարք ֆիզիկական, քիմիական և կենսաբանական չափորոշիչների սահմանային արժեքների սահմանումով, որոնք ներառում են աշխատավայրում թրթռումների ազդեցությունը, մարդու վրա աղմուկի ազդեցության թույլատրելի մակարդակը և մթնոլորտում աղտոտիչների առավելագույն թույլատրելի մակարդակները, էլեկտրամագնիսական դաշտերի թույլատրելի ազդեցությունը մարդու վրա, խմելու ջրի անվտանգությունը, վտանգավոր նյութերի ազդեցությունը բնակչության վրա և այլն:

Արտակարգ իրավիճակներին պարաստվածությունը նախատեսվում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին օրենքում» (1998թ.), «Հրդեհային անվտանգության մասին օրենքում» (2001թ.), «Սեյսմիկ պաշտպանության մասին օրենքում» (2002թ.), «Քաղաքացիական պաշտպանության մասին օրենքում» (2002թ.) և լրացուցիչ ենթաօրենսդրական ակտերում: «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության շինարարական նորմերը հաստատելու մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 78-Ն (2014թ.) հրամանը սահմանում է նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում շենք-շինությունների, այդ թվում նաև բնակելի և հասարակական շենքերի համար ներկայացվող ընդհանուր տեխնիկական պահանջները:

Անվտանգության ուժերի կիրառման վերաբերյալ ազգային կանոնակարգային շրջանակը հստակ է: Ոստիկանության Պետական պահպանության վարչությունը իրավական մարմին է Ներքին գործերի նախարարության ներքո, որն ունի ենթակառուցվածքային կարևոր օբյեկտների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց (ինչպես օրինակ՝ առևտրային բանկերի) անձնական անվտանգության և գույքի պաշտպանության մանդատ: Ոստիկանության Պետական պահպանության վարչության անձնակազմն իրավունք ունի կրել և օգտագործել զենք և այլ հատուկ տեխնիկա՝ խստորեն սահմանափակվելով սույն ստորաբաժանման կանոնադրությամբ սահմանված սահմաններով: «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքը (2012թ.) պահանջում է պահպանության և անվտանգության ծառայություններ մատուցողների պարտադիր լիցենզավորում, պայմանագրերի պայմանները, որոնք նրանք կարող են կնքել հաճախորդների հետ, ուժային գործողությունների և զենքի և սարքավորումների տեղադրման կանոններ և այլն, ինչպես նաև սահմանում է պետական վերահսկողություն մասնավոր անվտանգության ծառայությունների նկատմամբ, ուժային գործողությունների, զինամթերքի և տեխնիկայի և այլնի տեղակայման կանոնները, ինչպես նաև մասնավոր պահնորդական ծառայությունների նկատմամբ սահմանում է պետական վերահսկողություն:

Հայաստանն ունի համապարփակ Աշխատանքային օրենսգիրք (2004թ.), որը ներառում է աշխատանքային առողջության և անվտանգության (OHS) պահանջները: Հայաստանը նաև վավերացրել է Աշխատանքի Միջազգային Կազմակերպության (ILO) աշխատանքային հիմնական միջազգային

պայմանագրերը: Աշխատանքային օրենսգիրքը կիրառելի է ՀՀ քաղաքացիների, օտարերկրացիների, ՀՀ-ում աշխատող, քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ: Այնուամենայնիվ, միայն օրինական աշխատանքային պայմանագիր ունեցող աշխատողներն են պաշտպանված, որը վերաբերում թե՛ պետական և թե՛ մասնավոր ոլորտում աշխատողներին:

Աշխատանքային օրենսգիրքը մեծապես հաշվի է առնում նաև աշխատանքային առողջության և անվտանգության հիմնական պահանջները: Աշխատանքային օրենսգիրքը գործատուներից պահանջում է ապահովել անվտանգ և առողջ աշխատանքային պայմաններ, գնահատել և պլանավորել աշխատանքի անվտանգության ռիսկերը, ապահովել աշխատողներին անվտանգության մասին ուսուցում և տրամադրել անձնական պաշտպանիչ սարքավորումներ, սանիտարական և հանգստի հարմարություններ: Աշխատանքի անվտանգության չափանիշները կարգավորվում են նաև հատուկ որոշումներով և ակտերով: Աշխատանքային օրենսգիրքը գործատուներից պահանջում է սահմանել աշխատանքի պաշտպանության պահանջներին համապատասխանության մոնիթորինգի ընթացակարգեր, հաստատել աշխատանքի պաշտպանության ներքին կանոնակարգերը և կանոնները և նշանակել աշխատանքի պաշտպանության հատուկ փորձագետ: Այն նաև պահանջում է գործատուներից տեղեկացնել և խորհուրդ տալ աշխատողներին աշխատանքի առողջության և անվտանգության հարցերի վերաբերյալ և նախատեսում է առողջության և անվտանգության հանձնաժողովներ ստեղծել:

Այն աշխատողները, ովքեր հավատացած են, որ իրենց աշխատանքային իրավունքները խախտվել են, կարող են տարբեր իրավական մեխանիզմների միջոցով լուծումներ ստանալ, սակայն աշխատանքային օրենսդրությունը չի նախատեսում բողոքարկման մեխանիզմներ գործատուի մակարդակում այն աշխատողների համար, ովքեր հնչեցնում են աշխատավայրի հետ կապված ցանկացած մտահոգություններ և լուծում են առանձին աշխատանքային վեճեր: Աշխատանքային վեճերը լուծվում են դատարանի կողմից Քաղաքացիական դատավարության մասին օրենսգրքի համաձայն (2018թ.): Աշխատանքային օրենսգիրքը նախատեսում է կոլեկտիվ վեճերի լուծման կարգը կոլեկտիվ բանակցությունների շրջանակներում: Այնուամենայնիվ, Աշխատանքային օրենսգրքի կիրարկումը ուշանում է, հիմնականում պայմանավորված է Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի (ԱՍՏՍ) կողմից օրենքները կիրառելու կարողությամբ և վերջին տասնամյակում օրենսդրական փոփոխությունների քանակով և տեմպերով:

**Կպահանջվի ներդնել աշխատողների բողոքարկման ընթացակարգ՝ ֆիզիկական ենթակառուցվածքի աշխատանքի հետ կապված աշխատանքի ընդունված և պայմանագրային աշխատողների համար:**

**Յոդի օտարման և բնական ռեսուրսների հասանելիության կորստի կառավարում**

*Յոդի օտարման և բնական ռեսուրսների հասանելիության կորստի կառավարում՝ խոստովելու կամ մինիմիզանելու համար տեղահանումը և աջակցելու համար ազդակիր անձնաց՝ բարելավելու, կամ առնվազն վերականգնելու իրենց կենսապահովման պայմանները և կենսամակարդակը:*

«Հասարակության և պետության կարիքների համար գույքի օտարման մասին օրենքը» (2006թ.) կառավարում է հողի օտարումը և տարաբնակեցումը և նկարագրում վերջինիս ընթացակարգերը: ՀՀ Սահմանադրությունը, Յոդային օրենսգիրքը, Քաղաքացիական օրենսգիրքը ևս նշում են, որ հողը կարող է օտարվել հասարակության և պետության կարիքների համար: Օրենքի համաձայն էներգետիկ ոլորտի ծրագրերն այնպիսի ծրագրերից են, որոնց դեպքում արդարացվում է գերակա շահ ճանաչելու կիրառումը: Օրենքը պահանջում է, որպեսզի գերակա շահն օգտագործվի միայն «բացառիկ» դեպքերում, և որպեսզի գույքի օտարումը չհիմնավորված վնաս չհասցնի գույքի սեփականատիրոջը:

Օրենքի և միջազգային լավագույն փորձի, այդ թվում՝ ESS5-ի միջև կան որոշ առանցքային բացեր: Օրենքը չի պահանջում հանրային խորհրդակցություն կամ բողոքարկման մեխանիզմ հողի օտարման գործընթացում, չի ներառում տնտեսական և սոցիալական հետևանքների կամ ապրուստի միջոցների կորստի դիմաց փոխհատուցումը, չի ներառում ապօրինի հողօգտագործողներին՝ որպես փոխհատուցման համար հավակնող, և չունի որևէ դրույթ անապահով և խոցելի անձանց օգնության կամ աջակցության համար: Բացի այդ, տարաբնակեցման պլանավորումն ու իրականացումը տուժում է երկրում Ծրագրի իրականացման գրասենյակի (ԾԻԳ) որակավորված և փորձառու անձնակազմի և խորհրդատուների սահմանափակ թվով պայմանավորված: Կադաստրային սխալ տվյալները նույնպես կարող են խնդիրներ առաջացնել, թեև բարեփոխումներն ու կադաստրի արդիականացման և միավորմանն ուղղված ջանքերը շարունակվում են:

Անհրաժեշտ է ազգային օրենսդրությունը ներդաշնակեցնել միջազգային լավագույն պրակտիկայի հետ՝ ներդնելով հանրային խորհրդակցական հանդիպումներ անցկացնելու պահանջներ, բողոքարկման մեխանիզմներ, գնահատելով և փոխհատուցելով տնտեսական և սոցիալական ազդեցությունների և կորուստների դիմաց և ներդնելով կենսապահովման պայմանների վերականգնման պրակտիկաներ: Լրացուցիչ դրույթները կարող են նաև ներառել խոցելի խմբերի վրա ազդեցությունների գնահատումը:

**Յողի օտարման և բնական ռեսուրսներին հասանելիության կորստի հետ կապված ոչ մի ռիսկ կամ ազդեցություն չի ակնկալվում ֆիզիկական ենթակառուցվածքում ներդրումների արդյունքում: Բոլոր աշխատանքները կնախաձեռնվեն ԲԷՏ-ի հողի վրա ենթակայանի առկա տարածքում:**

**Ներգրավում, հասանելիություն և օգուտներ**

*Պատշաճ ուշադրություն դարձնել մշակութային համապատասխանությանը և հավասար հասանելիությանը Արդյունքահեն ծրագրի առավելություններին՝ հատուկ ուշադրություն դարձնելով տեղաբնակ անձանց իրավունքներին և հետաքրքրություններին և խոցելի անձանց մտահոգություններին:*

Սոցիալական հարցերի հետ կապված Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության օրենքով չկա հստակ պահանջ՝ խոցելի խմբերի վրա ազդեցությունները որոշելու կամ կառավարելու համար: Ոչ էլ այն ներառում է օգուտների հասանելիությունը:

Ազգային օրենսդրական շրջանակը երաշխավորում է տեղեկատվություն ստանալու և պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը: Իրավական ակտերը, որոնք ապահովում են հանրային մասնակցությունը և տեղեկատվության հասանելիության իրավունքը, ներառում է «Տեղեկատվության ազատության մասին օրենքը» (2003թ.), «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքը» (2014թ.), «Քաղաքաշինության մասին օրենքը» (1998թ.):

Հայաստանը նաև վավերացրել է «Շրջակա միջավայրի հարցերի առչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիան (Օրիուսի կոնվենցիա, 1998թ., վավերացված 2011թ.): Հայաստանը միացել է Բաց կառավարման գործընկերության (OGP) գլոբալ նախաձեռնությանը, որի նպատակն է կառավարման համակարգերը դարձնել ավելի թափանցիկ, հաշվետվողական և մասնակցային: Մինչ այժմ Հայաստանն իրականացրել է չոր գործողությունների ծրագրեր՝ ամենախոցելի քաղաքացիների համար հանրային կառավարման և ծառայությունների

հասանելիությունը բարելավելու համար (5-րդ ծրագիրն ընթացքում է, 2022-24թթ.): 2022թ-ի մայիսին Հայաստանը վավերացրել է «Պաշտոնական փաստաթղթերին հասանելիության մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան»: 2019-2023թթ-ի համար Հայաստանի Հանրապետության Հակակոռուպցիոն ռազմավարությունը նաև ներառում է գործողություններ, որոնց նպատակն է կատարելագործել գոյություն ունեցող Էլեկտրոնային համակարգերը և հանրության հետ կապված տեղեկատվությունը հրապարակել:

**Հայաստանում չկան տեղաբնակներ, ովքեր համապատասխանում են Համաշխարհային Բանկի սահմանմանը: Չնայած խոցելի անձանց վրա ոչ մի ազդեցություն չի սպասվում և ենթակայանների հարևանությամբ համայնքների վրա ազդեցություններ կլինեն մինիմալ, պետք է լինի հետադարձ կապի և բողոքարկման մեխանիզմ:**

### Սոցիալական կոնֆլիկտների խորացումից խուսափում

*Սոցիալական կոնֆլիկտների խորացումից խուսափում, հատկապես փխրուն երկրներում, հետկոնֆլիկտային շրջաններում կամ տարածքային վեճերի առարկա հանդիսացող տարածքներում:*

**Ֆիզիկական ենթակառուցվածքը, որի համար աջակցություն է տրամադրվելու, չի լինի հետկոնֆլիկտային շրջաններում կամ այնպիսի շրջաններում, որոնք տարածքային վեճի առարկա են հանդիսանում: Ոչ էլ այն կհանգեցնի սոցիալական կոնֆլիկտների խորացմանը: Տեղահանված անձանց վրա ազդեցություն չի լինի:**

#### **4.1.2 ԲԷՑ-ի շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգի գնահատում**

ԲԷՑ-ը կլինի իրականացնող հիմնական գերատեսչությունը: Չնայած մյուս իրականացնող գերատեսչությունները ներառում են ՀԾԿՀ-ն, ՏԿԵՆ-ը և Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը (ԷՍՏՕ), միայն ԲԷՑ-ի կողմից իրականացված միջոցառումներն են ներառում ծախսեր կամ ֆիզիկական գործողություններ և հետևաբար Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը և ՀԾԿՀ-ն չեն գնահատվում այս Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման շրջանակներում:

Գնահատման համար ելակետը ձևավորելու նպատակով ԲԷՑ-ին խնդրել են իրականացնել իրենց Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգերի ինքնագնահատում:<sup>6</sup> ԲԷՑ-ը ծանոթ է ՎՉՄԲ-ի գործառնություններին, այդ թվում նաև վերջերս փակված «Էլեկտրամատակարարման հոսսալիության ծրագրի» (P116748) և իրականացվող «Էլեկտրահաղորդման և ցանցի բարելավման ծրագրի» (P146199) շրջանակներում: Թե՛ ինքնագնահատումը և թե՛ այս ծրագրերի իրականացումից քաղված դասերն օգտագործվել են՝ փաստելու համար այն ասպեկտները, որոնք առկա են և նաև այն ասպեկտները, որոնք ուժեղացման կարիք ունեն:

### Քաղաքականություն

ԲԷՑ-ը չունի որևէ սպեցիֆիկ քաղաքականություն, որով սահմանում է շրջակա միջավայրի և սոցիալական նպատակները և սկզբունքները: Միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից

<sup>6</sup> Իրենց շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգի ինքնագնահատում, ՄՏԿ, տարբերակ 2.3, հոկտեմբեր, 2015թ.

Ֆինանսավորվելու դեպքում այդ միջոցառումները ղեկավարվում է ֆինանսավորող ՄՖԿ-ի քաղաքականություններով և ստանդարտներով:

Արդյունքահեն ծրագրի համար տեխնիկական գնահատումը տրամադրում է ԲԵՑ-ի կորպորատիվ կառավարման և կանոնակարգային շրջանակի և Հայաստանի Էներգետիկ հատվածի ամփոփ գնահատականը:

«Կորպորատիվ կառավարման ուսումնասիրությունն ընդգծեց, որ անհրաժեշտ է, որպեսզի ԲԵՑ-ը վերագնահատի իր Տնօրենների խորհրդի դերը և կազմը: Ընկերության Տնօրենների խորհուրդը կազմված է 6 անդամներից, որոնցից մեկն ի պաշտոնե հանդիսանում է գլխավոր տնօրենը, երեքը նշանակվում են ՏԿԵԼ-ի կողմից, մեկը՝ Էներգետիկ հատվածի մասնավոր շահագրգիռ կողմից և մեկը՝ Էներգետիկ հատվածի գիտական հաստատություններից: Արդյունքում գործադիրի բոլոր խոշոր որոշումները և քաղաքականությունները (այդ թվում նաև ծրագրային նախաձեռնությունները և երկարաժամկետ վարկերի ներգրավումը) ԲԵՑ-ում արդյունավետ վերահսկվում են կառավարության կողմից: Ավելին, չնայած խորհուրդը բավարարում է օրենքով սահմանված իրավական պահանջները, վերջինիս գործնական իրականացումը կենտրոնանում է ֆորմալ պարտավորությունների վրա, այլ ոչ թե ամբողջությամբ կիրառելու վերջինիս կարողությունների և պոտենցիալի վրա: ԲԵՑ-ը պետք է ապահովի, որպեսզի վերջինիս գործառույթները և ուժերը բավարար կերպով, լավ սահմանված լինեն և հավուր պատշաճի համապատասխանեցվեն ռազմավարության հետ՝ սահմանելով կորպորատիվ առաջնահերթությունները և կառավարման վերահսկողությունը: Ավելին, խորհուրդը պետք է անդամներ ունենա, որոնք կունենան փոխլրացնող հմտություններ և գեներային բազմազանություն (վերջինիս անդամները ներկայումս բոլորը արական սեռի ներկայացուցիչներ են): ԲԵՑ-ը պետք է նաև ստեղծի Աուդիտի և ռիսկի կոմիտեներ՝ խորհրդին աջակցելու նպատակով: Սա պետք է ներդնի ռիսկի կառավարման պատշաճ ռազմավարություններ և պետք է խորհրդին թույլ տա ավելի արդյունավետ կերպով վերահսկել ընկերության հսկողության համակարգերը:

Ի լրումն դրան ԲԵՑ-ը պետք է հետագա լայնածավալ միջոցառումներ նախաձեռնի՝ իր կորպորատիվ կառավարումը բարելավելու համար: Ընկերությունը բազմիցս ընդգծել է Հայաստանի կորպորատիվ կառավարման օրենսգրքի պահանջներին համապատասխանության հետ կապված բացերի մասին (օրինակ՝ անկախ տնօրենների բացակայություն), սակայն դեռևս ծրագիր չի մշակել՝ բացերը լրացնելու համար: ԲԵՑ-ը պետք է նաև մշակի, ներդնի ներքին քաղաքականություններ, որոնք լուծում են շահերի բախման որոշման, հաստատման և հրապարակման հարցերը: Այս առնչությամբ թեև չի պահանջվում ՀՀ օրենսդրությամբ, սակայն խորհուրդ կտրվի ներդնել Էթիկայի կանոններ՝ միջազգային լավագույն պրակտիկային համահունչ: Կառավարման այլ փաստաթղթերը, որոնք ընկերությունը պետք է ներդնի, ներառում են Վարձատրության քաղաքականությունը, Տեղեկատվության հրապարակման քաղաքականությունը և ընկերության մակարդակի կորպորատիվ կառավարման օրենսգիրքը»:

**Խորհուրդ է տրվում, որպեսզի ԲԵՑ-ը մշակի և ներդնի ՇՄ և Ս քաղաքականության հայտարարություն և Հանձնառության նամակ գործադիր տնօրենից, որով քաղաքականության մասին կհաղորդի իր բոլոր աշխատակիցներին: ԲԵՑ-ը պետք է ներառի իր ընդգրկուն Բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) արժեքների ավելի լայն համակարգի սահմանումը, որն ընդհանուր պրակտիկա է դառնում զլոբալ կորպորատիվ կառավարման իմաստով և մասնավորապես կարևոր է այն ընկերությունների համար, որոնք փորձում են ֆինանսավորում ստանալ միջազգային բանկերից և կապիտալի շուկաներից:**

## Ռիսկի և ազդեցությունների որոշում

ԲԵՑ-ը ազգային պահանջներ է կիրառում՝ ՇՄ և Ս ռիսկերը, ինչպես նաև ազդեցություններ գնահատելու համար, կամ երբ ՄՖՅ-ները կիրառում են իրենց ստանդարտները և պահանջները: Սա նշանակում է, որ քանի դեռ չկա ազգային պահանջ կամ ՄՖԿ ֆինանսավորողների պահանջ՝ ռիսկերը և ազդեցությունները գնահատելու համար, ապա դա բոլոր գործառնությունների համար ընթացիկ չի նախաձեռնվում: Բացառություն է OHS-ի դեպքում, երբ նման ռիսկերը գնահատելու և դրանք լուծելու համար գործընթացներ կան:

ՄԿՑ 6-ի շրջանակներում ԲԵՑ-ը հետևյալը կներդնի՝ վերջինիս կորպորատիվ կառավարման համակարգի արդիականացման շրջանակներում՝

ISO 9001: 2015 Որակի կառավարում,

ISO 37001: Կաշառակերության դեմ պայքարի կառավարման համակարգ,

ISO 27001: Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգեր,

ISO 14001: 2015 Շրջակա միջավայրի կառավարման համակարգեր:

**ՇՄԿՅ-ի վերաբերյալ ISO 14001 սոցիալական ռիսկերի և ազդեցությունների հետ կապված այս բացերը լուծելու համար և լավագույն միջազգային պրակտիկային համապատասխանությունն ապահովելու նպատակով խորհուրդ է տրվում, որպեսզի ԲԵՑ-ը մշակի և ներդնի ընթացակարգեր ՇՄ և Ս ռիսկերը և ազդեցությունները նույնականացնելու համար հիմնական բոլոր միջոցառումների շրջանակներում: ԲԵՑ-ը պետք է մշակի և իրականացնի հիմնական ՇՄ և Ս ռիսկերի ստուգացանկ՝ լավ միջազգային պրակտիկաների համաձայն, իրականացնի գործընթացի քարտեզագրում և մշակի և իրականացնի մատրից՝ ՇՄ և Ս ռիսկերի առաջնահերթությունները սահմանելու համար բոլոր հիմնական գործառնությունների համատեքստում:**

## Կառավարման ծրագրեր

Կառավարման ծրագրերը, որոնք ներառում են մեղմացման հիերարխիա, առանցքային դերակատարություն ունեն Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի բացահայտման և գնահատման համար: Նման ծրագրերը պարտադիր են միայն շրջակա միջավայրի վրա ազդեցության ազգային գնահատման (ՇՄԱԳ) ենթակա գործողությունների կամ ՄՖՅ-ների կողմից իրականացվող գործողությունների համար, որոնք պահանջում են Շրջակա միջավայրի և սոցիալական խնդիրների գործիքների մշակում և ներդրում: ՇՄԱԳ-ի վերանայված օրենքը և ՄՖՅ-ի Շրջակա միջավայրի և սոցիալական քաղաքականությունը պահանջում են մեղմացման հիերարխիայի ինտեգրում՝ Շրջակա միջավայրի և սոցիալական զարգացման ծրագրերում Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերն ու ազդեցությունները կառավարելու համար: Այնուամենայնիվ, բացի շրջակա միջավայրի պաշտպանության և սոցիալական զարգացման այս պլաններից, ԲԵՑ-ի ընկերությունները չունեն լրացուցիչ ընթացակարգեր և ծրագրեր: Սա ներառում է կառավարման ծրագրերի վերանայման և շրջակա միջավայրի և սոցիալական գործունեության բարելավման համար հարմարվողական մոտեցման գործընթացի բացակայությունը: ԲԵՑ-ն իր աշխատողների առողջության և անվտանգության հետ կապված որոշ համակարգեր (կանոններ և կանոնակարգեր) ունի (գնահատումները տրամադրվում են որպես արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման մաս): ԲԵՑ-ը կարող է մշակել գործողությունների ծրագրեր՝ բնապահպանական, սոցիալական, մասնագիտական և առողջապահական խնդիրները շտկելու համար՝ ի պատասխան տեղամասեր այցելությունների և էներգետիկ նախագծերի ավարտից հետո հայտնաբերված խնդիրների, և դա իրականացվում է բացառապես Շրջակա միջավայրի և սոցիալական հարցերի մասնագետների կողմից՝ առանց աշխատակիցների և բարձրագույն ղեկավարության մասնակցության:

Ավելին, չկա ստանդարտացված ձևաչափ գործողությունների ծրագրի համար, որը ներառում է գործառնական ընթացակարգեր, սպեցիֆիկ նպատակներ/ցուցանիշեր, ժամանակացույցեր, պարտականություններ և ռեսուրսների հատկացում: ԲԷՑ-ում չկա ներդրված ընթացակարգ՝ առաջընթացի և ուղղիչ գործողությունների ծրագրերի իրականացման մոնիթորինգի համար:

Չնայած ղեկավարների և/կամ անվտանգության աշխատակազմի մեծ մասը արական սեռի ներկայացուցիչներ են, ԲԷՑ-ում բացակայում են խտրականության բացառման և ոտնձգությունների դեմ պայքարի քաղաքականություններ, այդ թվում նաև խտրականության քաղաքականություններ՝ աշխատողների տարբեր խմբերի աշխատանքի ներգրավման, խթանման և փոխհատուցման համար, այդ թվում նաև երկու սեռերի, խտրականության դեմ պայքարի քաղաքականությունների համար, որոնց նպատակն է ապահովել աշխատավայրում սեռական շահագործման և գեղեցիկության բռնության կանխարգելումը: Աշխատանքային ռիսկերը, որոնք կապված են աշխատակցի տարիքի, սեռի, էթնիկ պատկանելության հետ, գնահատված չեն: Չկա գեղեցիկության բռնության համար ընթացակարգ աշխատողների համար, որպեսզի վերջիններս իրենց բողոքներն արտահայտեն (բողոքարկման մեխանիզմ):

**Յիմնական ռիսկերի բացահայտման հիման վրա՝ ԲԷՑ-ը որոշում է միջոցառումներ, որոնք պետք է իրականացվեն պլանների և ընթացակարգերի առումով: ԲԷՑ-ը պետք է մշակի և իրականացնի գործողությունների ծրագիր՝ այն պլանների և ընթացակարգերի համար, որոնք պետք է իրականացվեն և պատասխանատվություն ստանձնեն՝ բոլոր հիմնական գործողությունների ընթացքում ՇՄ և Ս ռիսկերն ու ազդեցությունները լուծելու և մեղմելու համար: Գործողությունների ծրագիրը պետք է ներառի գործունեությունը, վերջնաժամկետը և պատասխանատու անձին: ԲԷՑ-ը պետք է նշանակի մեկին, ով պատասխանատու կլինի ծրագրի կազմակերպման և թարմացման համար:**

ԲԷՑ-ը պետք է մշակի և ներդնի քաղաքականություններ՝ աշխատավայրում խտրականության և սեռական ոտնձգության վերաբերյալ և այդ քաղաքականությունները հաղորդի կառավարիչներին, վերահսկողներին և աշխատողներին՝ ապահովելու, որպեսզի աշխատողները հետևեն գրոյական հանդուրժողականության քաղաքականությանը սեռական ոտնձգության և խտրականության ցանկացած ձևի (բանավոր կամ ֆիզիկական) նկատմամբ:

### Կազմակերպչական կարողություններ և ձեռնահասություն

ԲԷՑ-ում ՇՄ և Ս հարցերը կառավարվում են նորաստեղծ Շրջակա միջավայրի պաշտպանության և սոցիոլոգիայի վարչության կողմից: Վարչությունը ներառում է բաժնի ղեկավարի, բնապահպանական հարցերով մասնագետի, սոցիալական հարցերով մասնագետի: Չնայած Շրջակա միջավայրի և սոցիալական հարցերով մասնագետներն աշխատել են ԲԷՑ-ում երկար տարիների ընթացքում, նրանք ԲԷՑ-ի ՇՄ և Ս բաժնի մաս չեն կազմել: Այս պահին մասնագետների քանակը բավարար է՝ գործող ծրագրերի շրջանակներում աշխատանքների համար, և նոր աշխատակազմ կարող է վարձվել, եթե ծրագրերի քանակն ավելանա:

Երկու այլ վարչությունները պատասխանատու են աշխատավայրում առողջության, անվտանգության և ապահովության համար, մասնավորապես Տեխնիկական վերահսկողության և աշխատանքային անվտանգության և ապահովության վարչությունը: Ի լրումն դրան, ԲԷՑ-ի Գործունեության կայունության բարելավման հանձնաժողովը (Activity Stability Enhancement Commission) մշակում և իրականացնում է տարեկան ծրագրեր, որոնց նպատակն է կանխարգելել արտակարգ իրավիճակները և պատահարները, կամ արտակարգ իրավիճակներին պատրաստել աշխատակիցներին, աշխատանքներ իրականացնել արտակարգ իրավիճակների ընթացքում և արտակարգ իրավիճակների դեպքում ապահովել կառավարման համակարգի կայուն շահագործումը:

Բոլոր վերոնշյալ վարչությունները, այդ թվում՝ նաև Բնապահպանության և սոցիոլոգիայի բաժինը հաշվետու են ԲԵՏ-ի Գլխավոր տնօրենին:

**Անհրաժեշտ է ուժեղացնել նորաստեղծ վարչությունը՝ համակարգերի ուժեղացման համար գիտելիքների և կարողությունների բարելավման իմաստով՝ ապահովելու համար ավագ ղեկավար կազմից աջակցությունը՝ քաղաքականությունների և ընթացակարգերի մշակման, որոշումների կյացման, ինչպես նաև անհրաժեշտ վերապատրաստման համար քաղաքականություններ և ընթացակարգեր մշակելու համար: Սրանք պետք է ներառեն.**

**Թիմի ղեկավարին պատվիրակում և վերապատրաստում՝ Գործողությունների ծրագրեր մշակելու և իրականացնելու համար:**

Սահմանել ՇՄ և Ս ռիսկերի կառավարման համար դերերը և պարտականությունները բոլոր ոլորտներում, այդ թվում՝ նաև որոշումների կայացման իմաստով:  
Հիմնական ողջ աշխատակազմի համար վերապատրաստան ծրագիր, որը կօգնի իրենց քաղաքականություններ և ընթացակարգեր ներդնել արդյունավետ ՇՄՍԿՀ-ի համար:

**ՇՄ և Ս մոնիթորինգի համար հիմնական ղեկավարների պատվիրակում և վերապատրաստում հիմնական ոլորտներում:**

**Նոր աշխատակիցներին վերապատրաստման ընդլայնում՝ հասկանալու համար ռիսկերի որոշումը, գործողությունների ծրագրերը և բողոքարկման մեխանիզմները:**

**Նշանակել և վերապատրաստել աշխատակազմին և աշխատողների ներկայացուցիչներին:**

**Բոլոր աշխատակիցների համար որակավորման բարձրացման վերապատրաստման իրականացում:**

### **Արտակարգ իրավիճակին պատրաստվածություն և արձագանք**

Այս բաժինը ներառում է Աշխատողների անվտանգության և առողջության պահպանումը (OHS) և արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը և արձագանքը, որի համար պատասխանատու են Տեխնիկական հսկողության և աշխատանքի անվտանգության բաժինը և Գործունեության կայունության բարելավման հանձնաժողովը ԲԵՏ-ում:

ԲԵՏ-ն ունի արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման համար լավ համակարգ: ԲԵՏ-ը մշակում և իրականացնում է արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և քաղաքաշտպանության ծրագրեր՝ Ներքին գործերի նախարարության Փրկարար ծառայության հետ և ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի հետ սերտ համագործակցության պայմաններում: Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը ներառում է, թե՛ աշխատակազմի վերապատրաստումը, թե՛ վարժանքները և թե՛ վարժությունները: Այդ ծրագրերի նպատակն է թե՛ կանխարգելել արտակարգ իրավիճակների և պատահարների ռիսկերը, ինչպես օրինակ՝ հակահրդեհային համակարգի ապահովումը ենթակայաններում, սարքավորումների և շենք-շինությունների փորձաքննությունը և ենթակայանների և հաղորդման գծերի սահուն շահագործումը, ինչպես նաև ԲԵՏ-ի կառավարումը արտակարգ իրավիճակներում:

**Արտակարգ իրավիճակներին պատրաստվածության և արձագանքման համար աշխատանքների իրականացում մասնագետի հետ՝ բարելավելու նպատակով գործող համակարգերը և ծրագրերը**



**Քննության առնելու համար: Պարբերական խորհրդակցությունների անցկացում համայնքի/-ների հետ, իրենց տեղամասերի հարևանությամբ՝ որոշելու համար տեղամասում և դրանից դուրս արտակարգ իրավիճակների սցենարները:**

ԲԵՏ-ն ունի ներքին կանոններ և կանոնակարգեր, որոնք վերաբերում են աշխատավայրում առողջությանը և անվտանգությանը և համապատասխանում է տեխնիկական նորմատիվների ակտերին, որոնք սահմանում է կառավարությունը: Աշխատավայրում առողջության և անվտանգության (OHS) ռիսկերը դասակարգվում են որպես ցածր, չափավոր կամ բարձր, իսկ կանոնները և պարտականությունները կարող են կախված լինել աշխատանքի բարդությունից և դրա հետ կապված վտանգներից: Այս կարգավորումները սահմանում են, որ ԲԵՏ-ի աշխատողների համար անհրաժեշտ է աշխատավայրում առողջության և անվտանգության թեմայով վերապատրաստում, ինչպես նաև արտակարգ իրավիճակների համար վարժանքներ և վարժություններ, ի թիվս այլոց: Այնուամենայնիվ, այս կարգավորումները կիրառվում են միայն ԲԵՏ-ի աշխատակազմի նկատմամբ, չեն ներառում կապալառուներին, ենթակապալառուներին և մատակարարներին: Կապալառուները և ենթակապալառուներն իրենք պատասխանատու են աշխատավայրում իրենց ենթակայաններում կամ բարձր ռիսկային վայրերում աշխատող աշխատակիցների անվտանգության և առողջության թեմայով վերապատրաստումների համար, ուստի նրանք վերապատրաստում և ցուցումներ են ստանում ԲԵՏ-ից:

**Աշխատավայրում անվտանգության և առողջության համար ԲԵՏ-ը պետք է ապահովի պայմանագրային աշխատողների համար ծածկույթի միևնույն մակարդակը, այդ թվում նաև ծրագրերը և ընթացակարգերն ուսումնասիրելու միջոցով և պայմանագրով և ենթապայմանագրային հիմունքներով ներգրավված աշխատողների վերապատրաստմանն աջակցելով: Անհրաժեշտ է նաև ներդնել և գործարկել բոլոր աշխատողների համար բողոքարկման արդյունավետ մեխանիզմ:**

### **Շահագրգիռ կողմերի ներգրավում**

Որպես կանոն, ԲԵՏ-Ը-ը լուծում է ներքին խնդիրները և համագործակցում է շահագրգիռ կողմերի հետ, եթե արտաքին ներդրողների կամ ազգային օրենսդրության շրջանակներում առկա է նման պահանջ: Նմանապես, շահագրգիռ կողմերը ներգրավված են Շրջակա միջավայրի և սոցիալական հարցերի կառավարման մեջ, եթե պահանջվում է ՄՖՅ-ով կամ ազգային օրենսդրությամբ: ԲԵՏ-ի՝ որպես կազմակերպության համար շահագրգիռ կողմերի համապարփակ քարտեզագրում չկա, սակայն այն իրականացվում է ՄՖՅ-ների կողմից ֆինանսավորվող առանձին ծրագրերի համար: Նմանապես, ընկերությունը չունի շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիր, եթե դա չի պահանջվում արտաքին ֆինանսավորողների կողմից: Շահագրգիռ կողմերի հետ փոխգործակցությունն իրականացվում է ըստ անհրաժեշտության տարբեր նախագծերի իրականացման ընթացքում: ԲԵՏ-Ը-ը սովորաբար չի համագործակցում արտաքին շահագրգիռ կողմերի հետ՝ բարելավելու Շրջակա միջավայրի և սոցիալական կատարողականը, եթե դա չի պահանջվում արտաքին ֆինանսավորողների կողմից:

**ԲԵՏ-ը պետք է ձևավորի հիմնական հաշագրգիռ կողմերի, այդ թվում նաև վերջիններիս գործողությունների արդյունքում ազդակիր խմբերի քարտեզ և շահագրգիռ կողմերին արձագանքելու քաղաքականություն և ընթացակարգեր: ԲԵՏ-ը պետք է խորհրդակցի հիմնական խմբերի հետ՝ ռիսկի գնահատման իրենց գործընթացի շրջանակներում և փաստաթղթավորի և հետևի ներգրավման քանքերին և քննարկումների հիմնական արդյունքներին:**

### **Արտաքին հաղորդակցություն և բողոքարկման մեխանիզմ**

Գործող պրակտիկայի համաձայն, երբ տեղական համայնքներից ստացվում են բնապահպանական և/կամ սոցիալական ազդեցությունների մասին բողոքներ, ԲԵՏ-ը սովորաբար մանրամասներ է խնդրում

բողոքատուներից և ներքին կարգով լուծում է խնդիրները: Տեղական համայնքները նույնպես կարող են ներգրավվել բողոքներ ներկայացնելու և դրանց լուծման գործում: Բոլոր բողոքները ներքին կարգով փոխանցվում են տնօրենին, որն այնուհետև դրանք պատվիրակում է համապատասխան ստորաբաժանումներին և սահմանում լուծման ժամկետներ: Այս ժամկետները կարող են տարբեր լինել՝ կախված դեպքից: Որոշ դեպքերում բողոքների լուծման հետ կապված քննարկումները կարող են ներառել կապալառուներին և/կամ տեղական համայնքներին:

Բողոքի քննության ընթացակարգը \$որմալ տեսք է ստանում, և բողոքի լուծման հետ կապված ողջ նամակագրությունը պահպանվում է հինգ տարի ժամկետով: Այնուամենայնիվ, մեկ միասնական գրանցամատյան չկա: Միջազգային ֆինանսական հաստատությունների (ՄՖՀ) կողմից ֆինանսավորվող ծրագրերի համար ԲԵՑ-ի սոցիալական հարցերի մասնագետը պատասխանատու է արտաքին շահագրգիռ կողմերի հարցումների, մտահոգությունների կամ պաշտոնական բողոքների քննարկման համար: Այլ դեպքերում, յուրաքանչյուր ստորաբաժանում պատասխանատու է իրեն վերագրված հարցումների, մտահոգությունների կամ պաշտոնական բողոքների լուծման համար:

ԲԵՑ-ը ստեղծել է կապի ուղիներ՝ արտաքին շահագրգիռ կողմերից բողոքներ և հարցումներ ստանալու համար: Մասնավորապես, ԲԵՑ-ի կայքում տրամադրվում են կոնտակտային տվյալներ (փոստի հասցե, հեռախոսահամար, Էլ. փոստի հասցե) և հարցումն անմիջականորեն ներկայացնելու ձևանմուշ: ԲԵՑ-ի վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ուղարկված բողոքները նույնպես ուղարկվում են ընկերություն և պահպանվում է օրենքով սահմանված լուծման վերջնաժամկետը: Այնուամենայնիվ, հաղորդակցության այս ուղիները և բողոքների լուծման ընթացակարգերը ակտիվորեն չեն ներկայացվում հասարակությանը: Սովորաբար հաղորդակցման ուղիները խթանվում են միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից ֆինանսավորվող նախագծերի համար:

**Արտաքին հաղորդակցության ուղիների և կառավարման համակարգի մշակում և իրականացում: Բոլոր գործառնությունների շրջանակներում արդյունավետ կերպով բողոքների լուծման համար ԲԵՑ-ը պետք է ունենա կենտրոնական համակարգ՝ արտաքին հաղորդակցության և բողոքների մասին տեղեկատվությունը պահելու համար և ապահովելու համար, որպեսզի.**

**Բոլոր աշխատակիցները վերապատրաստվեն ընթացակարգի և համակարգի մասով:**  
**Ընդլայնվի համակարգը՝ բոլոր կապալառուներին ընդգրկելու համար:**  
**Վերլուծվի ներգրավվածությունը, հետադարձ կապը և բողոքները՝ ռիսկերի, այդ թվում՝ նաև ծրագրերի կառավարման բարելավման նպատակով:**  
**Բողոքները և լուծումները ներառվեն հանրային հաշվետվողականության շրջանակներում:**

### *Ազդակիր համայնքներին կանոնավոր հաշվետվողականություն*

Եթե ազդակիր համայնքները մտահոգություններ են հայտնում կամ բողոքներ են ներկայացնում Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների վերաբերյալ, ԲԵՑ-ը պատասխանում է, երբ դիմում են տեղեկատվության տրամադրման սպեցիֆիկ հարցումով: ԲԵՑ-ը ազդակիր համայնքներին ներկայացնում է հաշվետվություններ՝ մանրամասնելով հայտնաբերված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված գործողությունները: Հանգամանքներով պայմանավորված՝ հաշվետվության ուղիները կարող են ներառել ազդակիր համայնքների հետ հանդիպումները, տեղեկատվության հրապարակումը ԲԵՑ-ի կայքում, գրավոր հաշվետվությունները և այլ համապատասխան միջոցները:

**ԲԵՑ-ը պետք է, առնվազն, մշակի ընթացակարգ և անձնակազմ նշանակի՝ հիմնական ռիսկերի և գործողությունների ծրագրերի մասին ազդակիր համայնքներին հաշվետվողականության ապահովման համար:**

### Մոնիթորինգ և ուսումնասիրություն

ԲԵՑ-ը չունի առանձին մոնիթորինգային ծրագիր՝ ՇՄ և Ս (այն է՝ աշխատավայրում անվտանգության և առողջության, աշխատանքի, համայնքի) մոնիթորինգի համար: Որպես կանոն մոնիթորինգն իրականացվում է այն դեպքում, երբ կան սպեցիֆիկ խնդիրներ: ՇՄ և Ս կատարողականին հետևում են ՄՖՅ-ների կողմից ֆինանսավորվող ծրագրի համար:

**ԲԵՑ-ը պետք է մշակի ընթացակարգ՝ ցանկացած ՇՄ և Ս-ին առնչվող էական ռիսկերի, ինչպես նաև ամենահավանական ռիսկերի մոնիթորինգի համար և աշխատակազմ նշանակի, որը պատասխանատու կլինի իր բոլոր գործառնությունների շրջանակներում այդ ռիսկերի մոնիթորինգի համար:**

## 4.2 Սակագնի մեթոդաբանության և սակագների փոփոխություններ

Սակագնի բարեփոխումները կարող են կարևոր դերակատարություն ունենալ շրջակա միջավայրի վիճակի (SOE) բարեփոխման գործընթացում: Չնայած էլեկտրաէներգիայի սակագները Հայաստանում ծածկում են համակարգի բոլոր ծախսերը, ավելի շատ բան պետք է արվի՝ սակագնի կառուցվածքը փոփոխելու համար, որպեսզի էներգետիկ ոլորտի ընկերությունները ավելացնեն ներդրումների ֆինանսավորումը և ապահովեն սակագնի արդյունավետություն:

Արդյունքահեն ծրագրի շրջանակներում ՊՅԱԾ-ից կպահանջվի ներդնել սակագնի նոր մեթոդաբանություն, որը (i) ներառում է էներգիայի ռեակտիվ գնանշումը (ՄԿԱ 3.3) և (ii) ապահովում է բազմամյա կանխատեսելիություն կարգավորվող վերադարձելիության իմաստով, ապահովում է ադեկվատ վերադարձելիություն պարտքի՝ արտարժույթով առևտրային ֆինանսավորման համար, և ֆիդուցիար և ՇՄ և Ս գործառնությունների համար ադեկվատ աշխատակազմ է ապահովում (ՄԿԱ 5.2): Սակագնի այս բարեփոխումն ազդեցություն կունենա սակագնի՝ միայն հաղորդման բաղադրիչի վրա, որը հարաբերականորեն փոքր մասն է կազմում սակագնի ընդհանուր կառուցվածքի (ամենամեծը կլինի էլեկտրականության արժեքը): Այնուամենայնիվ, սակագները անխուսափելիորեն մի փոքր կբարձրանան:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին օրենքը» (2003թ.), ինչպես նաև «Էներգետիկայի մասին օրենքը» (2001թ.) կարգավորում է էներգետիկ ոլորտում հիմնական հարաբերությունները, այդ թվում՝ նաև սպառողների և ծառայություն մատուցողների միջև:

«Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասին օրենքի համաձայն» ՀԾԿՀ-ն հանդիսանում է կանոնակարգող, անկախ մարմին, որը պատասխանատու է սակագների սահմանման և էներգետիկ ոլորտի համար: Օրենքը սահմանում է հանրային ծառայությունների մատուցման ոլորտում կարգավորման սկզբունքները, կարգավորող մարմնի գործունեության սկզբունքները, վարչարարական ընթացակարգերը, որոնք նախաձեռնվում են Հանձնաժողովի կողմից: «Էներգետիկայի մասին օրենքը» (2001թ.) սահմանում է պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և կարգավորումները էներգետիկ ոլորտում, կարգավորվող սակագները և ծառայությունների վճարները և ոլորտի խաղացողների հետ պայմանագրերի կնքման սկզբունքները, պարտավորությունները և սպառողներին էներգամատակարարման համար երաշխիքները:

Օրենքի համաձայն էներգետիկ սակագները հանդիսանում են կարգավորման միջոցներից մեկը, և Հանձնաժողովի կողմից սահմանվելուց հետո դրանք ուժի մեջ են մտնում հաջորդիվ 6 ամսիների ընթացքում, բացառություն են կազմում Օրենքով նախատեսվող դեպքերը:

2016թ-ի նոյեմբերի 3-ով թվագրված կառավարության որոշմամբ, որով բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագները նվազեցվում են սոցիալապես անապահով ընտանիքների համար, առաջարկվում է, որպեսզի ՀԾԿՀ-ն սոցիալապես անապահով ընտանիքներին դիտարկի որպեսզի առանձին խումբ և նրանց համար սահմանի հնարավոր նվազագույն սակագներ: Հետևաբար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները հետագայում ավելացվեցին ցանկին: Սոցիալապես անապահով ընտանիքները սահմանվում են կառավարության որոշմամբ անապահովության միավորի համաձայն, որը հաշվարկվում է ընտանիքի անապահովության գնահատման համակարգով (որը հայտնի նաև որպես ընտանեկան նպաստների համակարգ):<sup>7</sup> Որոշումը չի սահմանում սակագները և դրանք հաշվարկվում են և սահմանվում ՀԾԿՀ-ի կողմից: Վերջին սակագների համաձայն սոցիալապես անապահով ընտանիքները ցերեկը վճարում են 29.99 ՀՀ դրամ/կվտժ և 19.99 ՀՀ դրամ/կվտժ գիշերային ժամերին՝ ի հակադրություն մնացած բնակչության, որը համապատասխանաբար վճարում է 46.48 ՀՀ դրամ և 36.48 ՀՀ դրամ:

Սոցիալապես անապահով խմբերն արդեն իսկ շահում են Հայաստանում իջեցված սակագներից, սակայն բարձրացումը կարող է անհամամասնորեն ազդել դրանց վրա կամ այլ տնային տնտեսություններին մղել այս կատեգորիա: Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ սակագների բարեփոխումները կհանգեցնեն սակագների միայն փոքր ավելացումների (գնաճի մակարդակներից ցածր):

ՀԾԿՀ-ն ունի բողոքարկման լավ համակարգ, որը ներառում է քաղաքացիների ընդունելությունը: Կոմիտեի յուրաքանչյուր անդամ ամսական մեկ անգամ նախանշված ժամ ունի՝ քաղաքացիներին ստանալու համար: Ծառայություն մատուցողների թե՛ գծի համարները հասանելի են Կոմիտեի կայք-էջում: Լրացուցիչ կերպով կայք-էջը հրապարակում է ազդարարման համար պատասխանատու անձնակազմի հեռախոսահամարներ, տեղեկատվության ազատության վերահսկման համար պաշտոնատար անձի, հակակոռուպցիոն ծրագրերի կառավարման համար իրավաբանի և կոմիտեի անդամների և աշխատակազմի հեռախոսահամարները:

Դիմումատուները տարբեր ուղիներով կարող են կապ հաստատել ՀԾԿՀ-ի հետ, այդ թվում նաև հեռախոսով, էլ. փոստի հասցեով, կայք-էջում ձևախմբված լրացնելու միջոցով, փոստով նամակ ներկայացնելու միջոցով կամ բողոքները ներկայացնելով [www.e-request.am](http://www.e-request.am) միասնական էլեկտրոնային պորտալի միջոցով: Կոմիտեն նաև հրապարակում է ստացված դիմումների և դրանց լուծումների վիճակագրությունը:

ՀԾԿՀ-ն լրացուցիչ կերպով ներգրավված կլինի Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) հիմնական բացահայտումների հետ կապված խորհրդակցություններում, և սակագնային կարգավորումների, ինչպես նաև ՀԾԿՀ բողոքարկման մեխանիզմների հետ կապված հետագա մանրամասները կտրամադրվեն հետագա փուլերում:

### 4.3 Շուկայի ազատականացման մասին հաղորդում և իրազեկման բարձրացում

ՄԿՑ 4-ը, որը վերաբերում է էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման առաջընթացին և Հայաստանի էներգետիկ ոլորտում անկախ կարգավորմանը, որը հնարավորություն է ընձեռում վերականգնվող էներգիայի արտադրության նոր բիզնես մոդելներ ունենալ վերականգնվող էներգիայի ներդրողների համար, թիրախավորում է էներգետիկ շուկայի ազատականացումը: Բարեփոխումների արդյունավետ և սահուն իրականացումը կախված է պատշաճ հանրային հաղորդակցությունից և իրազեկման բարձրացումից, որը ծածկվում է ԱՄՆ ՄԶԳ «Շուկայի ազատականացման և էլեկտրաէներգիայի առևտրի ծրագրի» (Market Liberalization and Electricity Trade) շրջանակներում, որը

<sup>7</sup> ՀՀ կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ին ընդունված որոշմամբ 20 միավորը գերազանցող անձինք ճանաչվում են սոցիալապես անապահով և օգտվում են արտոնյալ սակագներից:

մեկնարկել է 2018թ-ին: ԱՄՆ ՄԶԳ-ի 2023թ-ի ծրագրի շրջանակներում իրականացվել են հաղորդակցության արշավներ, որոնց նպատակն է հանրային իրազեկում ձևավորել բարեփոխումների մասին, հեռուստահեռարձակումների, կարճ տեսահոլովակների, ինֆոգրաֆիկայի և լրագրողների վերապատրաստումների միջոցով: Որոշ մասը ներառում էր Հանրային ծառայության մասին հայտարարությունը (ՀԾՀ-ներ) բարեփոխումների հիմունքների մասին և էներգետիկ ոլորտի բարձրաստիճան փորձագետների հետ հարցազրույցները, որոնք հեռարձակվեցին Հանրային հեռուստատեսությամբ և մեդիա մրցույթը, որով վերապատրաստված լրագրողներն էին մրցանակ ստանում, ովքեր հոդվածներ էին գրել շուկայի և էներգետիկ ոլորտի մասին:

ԱՄՆ ՄԶԳ ծրագիրը նաև տեխնիկական աջակցություն և կարողությունների զարգացում է ապահովել, որոնք ապահովել են, որպեսզի համապատասխան պետական ընկերությունները և շուկայի մասնակիցներն արդյունավետ կերպով շահագործեն շուկայի կառուցվածքը և որպեսզի ապահովվի արդարացի և թափանցիկ պահպանումը: Միջոցառումները ներառում էին ՀԾՀ-ին աջակցությունը՝ շուկայի կանոնները թարմացնելու համար, +40 անհատների վերապատրաստումը (օրինակ՝ ՀԾՀ, ԲԵՑ, Ատոմային էլեկտրակայան, Մրցակցության պաշտպանությա կոմիտե և առաջիկա շուկայի մասնակիցներ)՝ շուկայական կանոնների և առցանց ծրագրային ապահովման թեմայով, որը հնարավորություն է ընձեռում գործառնություններ ունենալ և աջակցել էլեկտրաէներգիայի շուկայի օպերատորին՝ արդիականացնելու ծրագրային ապահովումը՝ շուկայի զարգացմանը զուգընթաց:

Քանի որ ԱՄՆ ՄԶԳ-ն (USAID) նախատեսում է շարունակել իր գործունեությունը շուկայի ազատականացման աջակցության ոլորտում, այս ՄԿՑ-ին առնչվող միջոցառումները հաղորդակցության և իրազեկության բարձրացման առումով ներառված չեն Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգի գնահատման (ESSA) գործողությունների ծրագրում, քանի որ դրանք կամ արդեն իսկ ներառված են կամ կներառվեն ԱՄՆ ՄԶԳ ծրագրում: Միևնույն ժամանակ, ԱՄՆ ՄԶԳ ներկայացուցիչները, ովքեր մասնակցում են էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և առևտրի ծրագրին, կիրավիրվեն խորհրդակցությունների Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության շահագրգիռ կողմերի հետ՝ կարծիք և դիտարկումներ տրամադրելու հնարավոր հաղորդակցության և իրազեկման բացերի վերաբերյալ, որոնք Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատումը (ESSA) կարող է լուծել:

## 5 ՇԱՅԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎՈՒՄ

Այս բաժինը ներկայացնում է Էներգետիկ անցման Արդյունքահեն ծրագրի և հատկապես Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) շրջանակներում իրականացված ներգրավման գործողությունների ամփոփագիրը, ինչպես նաև Շրջակա միջավայրի և սոցիալական գնահատման (ESSA) հաշվետվության հրապարակման համար ներգրավվածության հետագա գործողությունները:

Արդյունքահեն ծրագրի (PforR) և Շրջակա միջավայրի և սոցիալական համակարգերի գնահատման (ESSA) համար խորհրդատվություն ստացած շահագրգիռ կողմերը ներառում են՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ), Ֆինանսների նախարարությունը (ՖՆ), Շրջակա միջավայրի նախարարությունը, «Հայաստանի բարձրավոլտ Էլեկտրական ցանցեր» ԲԲԸ-ն (ԲԷՑ), «Հայաստանի վերականգնվող Էներգետիկայի և Էներգախնայող հիմնադրամը» (R2E2), Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ), Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը (EPCO) և Էլեկտրաէներգիայի շուկայի օպերատորը (EPMO): Ծրագրի նախագծման, ինչպես նաև դրա հետ կապված գնահատումների մասին իրազեկումը նախաձեռնվել է 2022 թվականի մարտից մինչև 2024 թվականի փետրվարը՝ անհատական/առանձին հանդիպումների, պաշտոնական ներկայացումների, աշխատաժողովների, կլոր սեղանի քննարկումների և ծրագրային փաստաթղթերի փոխանակման միջոցով:

2023թ-ի փետրվարի և 2024թ-ի փետրվարի միջև ընկած ժամանակահատվածում նախաձեռնվել են խորհրդակցություններ՝ Ծրագրի աջակցությամբ ենթակայանների հիմնարրոգման մասին տեղեկատվություն համար:

Կենտրոնական կառավարության հետ խորհրդակցությունները նպատակ ունեն նույնականացնել ծրագիրը և ներդնել Արդյունքահեն ծրագրի գործիքը: Արդյունքահեն ծրագրի շուրջ Շրջակա միջավայրի նախարարության հետ խորհրդակցությունը կենտրոնանում էր վտանգավոր թափոնների քաղաքականության և կառավարման քննարկման, հարցերի և բացերի որոշելու և նոր զարգացումների և երկրում առկա կարողությունների նոր զարգացումների ընկալման վրա:

ԲԷՑ-ի հետ խորհրդակցությունների նպատակն էր նույնականացնել, ներդնել Արդյունքահեն ծրագրային գործիքը, Շրջակա միջավայր և սոցիալական համակարգերի գնահատումը (ESSA) ներկայացնել, այդ թվում նաև ՇՄ և Ս ռիսկերը և ազդեցությունները և գնահատել ԲԷՑ-ի ՇՄ և Ս կառավարման համակարգերը: ԱՄՆ ՄՁԳ-ի հետ խորհրդակցություններ տեղի ունեցան՝ շուկայի ազատականացման հաղորդակցության շրջանակներում ներգրավվելու համար:

Շահագրգիռ խմբերը, որոնց հետ պետք է խորհրդակցեն, կներառեն թե՛ պետական և թե՛ ոչ պետական շահագրգիռ կողմերին ազգային և ենթազգային մակարդակներում: Էներգետիկայի համար արդյունքահեն ծրագրի **ազդակիր կողմերը** ներառում են պետական գերատեսչություններին, Էլեկտրաէներգիայի արտադրողներին, Էլեկտրահաղորդման և բաշխման ընկերություններին, տեխնոլոգիաներ տրամադրողներին, տեղական համայնքներին, սպառողներին, թե՛ մասնավոր հատվածից և թե՛ տնային տնտեսություններին: Մյուս **շահագրգիռ կողմերը** ներառում են վերականգնվող Էներգիա արտադրողներին, զարգացման գործընկերներին և քաղհասարակության կազմակերպություններին:

Ծրագրի շրջանակներում **կենտրոնական կառավարության ազդակիր մարմինները** ներառում են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ), որը

պատասխանատու է քաղաքականության մշակման համար, այդ թվում՝ նաև Էներգետիկ հատվածի համար և մասնավորապես, նախարարության Էներգետիկայի վարչությունը, որը պատասխանատու է Էներգետիկայի ռազմավարական ծրագրերի մշակման համար, այդ թվում՝ նաև վերականգնվող Էներգիայի և Էներգաարդյունավետության համար: Պետական այլ մարմինների թվում են Ֆինանսների նախարարությունը և Շրջակա միջավայրի նախարարությունը: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) նաև այն իրականացնող մարմիններից է, որը պատասխանատու է ծրագրի մի քանի ՄԿՑ-ներին հասնելու համար:

**Իրականացնող գերատեսչություններ և ոլորտային օպերատորներ:** Բարձրավոլտ Էլեկտրական ցանցեր ընկերությունը հանդիսանում է Ծրագրի իրականացման հիմնական գերատեսչությունը, մինչդեռ ԷլեկտրաԷներգետիկական համակարգի օպերատորը ներգրավված կլինի երկու ՄԿՑ-ների ապահովման համար: Ազդակիր մյուս հիմնադրամները/ոլորտի օպերատորները ներառում են «Հայաստանի վերականգնվող Էներգիայի և Էներգախնայողության հիմնադրամին» (R2E2) և ԷլեկտրաԷներգետիկական շուկայի օպերատորին (EPMO):

**Տեղական համայնքներ:** Արդյունքահեն ծրագրի շրջանակներում լիարժեք վերանորոգման համար նախանշվում են երեք ենթակայաններ, որոնք տեղակայված են Երևանում և Վայոց Ձորի մարզում՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա և Նորք Մարաշ վարչական շրջաններում տեղակայվածները և մյուսը Եղեգնաձորում՝ Վայոց Ձորի մարզում:

Մալաթիա-Սեբաստիայի և Նորք-Մարաշի ենթակայանները գտնվում են սակավաբնակ բնակավայրերում, իսկ Եղեգնաձորի ենթակայանը գտնվում է բնակավայրերից հեռու՝ երկու բնակավայրերի՝ Եղեգնաձոր քաղաքի և Գետափ գյուղի միջև, որոնք երկուսն էլ Եղեգնաձոր խոշորացված համայնքի մաս են կազմում: Ըստ այդմ, վերանորոգման աշխատանքներ ազդակիր տեղական համայնքները ներառում են Երևանը՝ Մալաթիա-Սեբաստիա և Նորք-Մարաշ թաղամասերը, ինչպես նաև Եղեգնաձոր խոշորացված համայնքը, մասնավորապես՝ երկու բնակավայրերը՝ Եղեգնաձոր քաղաքը և Գետափ գյուղը:

**Մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերը ներառում են** Էներգաարտադրողներին, հաղորդման և բաշխիչ ընկերություններին, տեխնոլոգիաներ տրամադրողներին, ինչպես օրինակ՝ Հայաստանի ատոմային Էլեկտրակայանին (ՀԱԷԿ), Հայաստանի Էլեկտրական ցանցեր (ՀԷՏ) ՓԲԸ-ին, և այլն:

**Քաղհասարակության կազմակերպությունները** ներառում են նրանք, որոնք ներկայացնում են Էներգիայի սպառողների շահերը, ապահովելով արդարացի գնագոյացում, հասանելիություն և Էներգետիկ ծառայությունների թափանցիկություն, ինչպես օրինակ՝ Սպառողների ասոցիացիա ՀԿ-ն, Սպառողների խորհրդատվական կենտրոն ՀԿ-ն, Սպառողների աջակցության կենտրոն ՀԿ-ն և այլն: Քաղհասարակության կազմակերպությունները, որոնք ներգրավվում են այնպիսի թեմաներում, ինչպիսիք են կայուն զարգացումը, շրջակա միջավայրի պահպանումը, թափանցիկության և հաշվետվողականության խթանումը ևս շահագրգիռ կողմեր են, ինչպես օրինակ՝ «Թրանսփարենսի ինթերնեյշնալ հակակոռուպցիոն կենտրոնը» (TIAC), Հայաստանի բնապահպանական ցանցը (AEN), Եղեգնաձորի Օրիոսի կենտրոն ՀԿ-ն և այլն:

Հայաստանի Էներգետիկ ոլորտում ակտիվ **գարգացման գործընկերները** ներառում են Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկը (EBRD), KfW- Kreditanstalt für Wiederaufbau, ԱՄՆ ՄՉԳ-ն, Էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիան (ERRA), Հանրային

Ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամների ազգային ասոցիացիան (NARUC), Ասիական Չարգացման Բանկը (ADB) և այլն:

ՇՄՍՀԳ-ի նախագծային տարբերակի վերաբերյալ խորհրդակցական աշխատաժողով կնախաձեռնվի: ՇՄՍՀԳ-ի զեկույցի նախագծային տարբերակը՝ հայերեն և անգլերեն լեզվով, կշրջանառվի պաշտոնական խորհրդակցություններից առաջ: Աշխատաժողովից ստացված դիտարկումները կներառվեն ՇՄՍՀԳ զեկույցում և մասնակիցների ամբողջական ցանկը և վերջիններիս դիտարկումների ամփոփագիրը ևս կներառվի Հավելված 3-ում:

ՇՄՍՀԳ զեկույցի վերջնական նախագծային տարբերակը կիրապարակվի Համաշխարհային Բանկի արտաքին կայք-էջի միջոցով և խնդրելով հանրային դիտարկումները ներկայացնել սահմանված ժամկետում:

**Բողոքարկում:** Համայնքները և անհատները, ովքեր գտնում են, որ Բանկի աջակցությամբ Արդյունքահեն ծրագրի գործառնության շրջանակներում կունենան բացասական ազդեցություն՝ կիրառվող քաղաքականության և ընթացակարգերի համաձայն, կարող են բողոք ներկայացնել Ծրագրի համար առկա բողոքարկման մեխանիզմի միջոցով կամ Բանկի բողոքարկման ծառայության (GRS) միջոցով: Բանկի բողոքարկման ծառայությունն (GRS) ապահովում է, որպեսզի ստացված բողոքները հավուր պատշաճի քննության առնվեն՝ համապատասխան մտահոգությունները լուծելու նպատակով: Ծրագրի ազդակիր համայնքները և անհատները կարող են իրենց բողոքները ներկայացնել Բանկի անկախ հաշվետվողականության մեխանիզմին (AM): Անկախ հաշվետվողականության մեխանիզմը (AM) ներառում է Տեսչական խումբ, որը որոշում է, թե արդյոք վնասը տեղի է ունեցել կամ կարող է առաջանալ Բանկի կողմից իր քաղաքականության և ընթացակարգերի չկատարման հետևանքով, և Վեճերի լուծման ծառայություն, որը համայնքներին և վարկատուներին հնարավորություն է տալիս լուծել բողոքները: Բողոքները կարող են ներկայացվել ցանկացած պահի այն բանից հետո, երբ մտահոգություններն ուղղակիորեն հաղորդվել են Բանկին, և Բանկի ղեկավարությանը արձագանքելու հնարավորություն է տրվել: Բանկի Վեճերի լուծման ծառայությանը (GRS) բողոքներ ներկայացնելու մասին տեղեկությունների համար անհրաժեշտ է այցելել <http://www.worldbank.org/GRS>: Բանկի հաշվետվողականության մեխանիզմին բողոքներ ներկայացնելու մասին տեղեկությունների համար անհրաժեշտ է այցելել <https://accountability.worldbank.org>:



# 6 ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ակնկալվում է, որ Ծրագրի ընդհանուր ՇՄ և Ս ազդեցությունները կլինեն դրական, այնուամենայնիվ, ՄԿՑ 1-ի և 2-ի շրջանակներում կլինեն ՇՄ և Ս պոտենցիալ ռիսկեր և ազդեցություններ, որոնք կապված են ենթակայանների հիմնանորոգման հետ: Դրանք են՝ ենթակայանների հիմնանորոգումից վտանգավոր թափոնների առաջացում, թափոնների վերամշակման և վերջնական թափելու համար ազգային կարողություններ և գրունտի ու ստորգետնյա ջրի պոտենցիալ աղտոտում տրանսֆորմատորներից վտանգավոր հեղուկի պատահատական արտահոսքի արդյունքում, աշխատակիցների և համայնքի առողջության և անվտանգության հարցեր՝ պայմանավորված շինհրապարակի վատ կառավարմամբ:

ՄԿՑ-ներ 6-ին և 7-ին աջակցելու միջոցով, մասնավորապես ՄԿՑ 6-ի դեպքում, որը վերաբերում է ԲԵՑ-ի կորպորատիվ կառավարման համակարգերի արդիականացմանը, Ծրագիրը հնարավորություն է ընձեռում ուժեղացնել ԲԵՑ-ի ՇՄՍՀԳ-ն, այդ թվում նաև լրացնել բացերը՝ իրենց գործող ՇՄՍՀԳ-ի և միջազգային լավագույն պրակտիկայի միջև, որը որոշվում է այս ՇՄՍՀԳ-ի միջոցով:

Այս միջոցառումները կիրականացվեն հետևյալ աղյուսակում ներկայացվող միջոցառումների միջոցով:

## Աղյուսակ 2: Ծրջակա միջավայրի և սոցիալական գործողությունների ծրագիր

No	Գործողություն	Ժամկետ
<b>Գործողություններ, որոնք առնչվում են Նոր վերականգնման ենթակա ենթակայաններին («Մարաշ», «Շահումյան-2», «Եղեգնաձոր»)</b>		
1	ԲԵՑ-ը կիրականացնի ենթակայանների վերականգնմանն առնչվող աշխատանքների ՇՄ և Ս ազդեցությունների սքրինինգ:	Մինչև աշխատանքների մեկնարկը:
2	Սքրինինգ ընթացքում հայտնաբերված ռիսկերի համաձայն ԲԵՑ-ը կմշակի Ծրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլան (ՇՄՍԿՊ) յուրաքանչյուր օբյեկտի համար, կիրառարակի և կխորհրդակցի, որից հետո կընդունի և կիրականացնի:	Մշակումը և ընդունումը մինչև աշխատանքների մեկնարկը, որից հետո իրականացումը Ծրագրի իրականացման ողջ ընթացքում:
3	ԲԵՑ-ը կստեղծի և՛ հաստիքային, և՛ պայմանագրային աշխատակիցների համար բողոքների լուծման մեխանիզմ:	Մշակումը և ընդունումը մինչև աշխատանքների մեկնարկը, որից հետո իրականացումը Ծրագրի ողջ ընթացքում:
4	ԲԵՑ-ը կմշակի վերապատրաստման ծրագիր աշխատանքի և համայնքի առողջության և անվտանգության, այդ թվում նաև վտանգավոր թափոնների հետ անվտանգ վարվելու վերաբերյալ և կապահովի բոլոր հաստիքային և պայմանագրային աշխատողների վերապատաստումը:	Մշակումը և ընդունումը մինչև աշխատանքների մեկնարկը, որից հետո իրականացումը Ծրագրի ողջ ընթացքում:
5	ԲԵՑ-ը կապահովի հանրային բողոքների լուծման մեխանիզմի ստեղծումը, կիրազեկի այդ մասին հանրությանը և կգործարկի այն:	Մշակումը և ընդունումը մինչև աշխատանքների մեկնարկը, որից հետո իրականացումը Ծրագրի ողջ ընթացքում:
<b>Գործողություններ, որոնք առնչվում են այն ենթակայաններին, որոնց վերականգնումն սկսվել է Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող Ներդրումային ծրագրերի շրջանակներում («Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր» և «Էլեկտրաէներգիայի մատակարարման հուսալիության ծրագիր»), բայց չի ավարտվել Ներդրումային ծրագրի ֆինանսավորման ժամանակահատվածում («Արարատ-2», «Չարենցավան-3» և «Չովունի»)</b>		
6	Այն դեպքերում, երբ հիմնանորոգման աշխատանքները դադարեցվել են և դեռևս չեն վերսկսվել, ԲԵՑ-ը համապատասխան փոփոխություններ կկատարի Ծրջակա միջավայրի և սոցիալական կառավարման	ՇՄՍԿՊ-ի թարմացում և հաստատում, որից հետո իրականացում Ծրագրի ողջ ընթացքում:

No	Գործողություն	Ժամկետ
	պլաններում (ՇՄՍԿՊ), այնուհետև կհաստատի և կիրականացնի այն:	
7	Վերականգնողական աշխատանքների շարունակման դեպքում ԲԵՏ-ն կշարունակի իրականացնել ՇՄՍԿՊ-ները առանց փոփոխությունների:	Ենթակայանների ՇՄՍԿՊ-ների իրականացում Ծրագրի ողջ ընթացքում:
<b>Գործողություններ, որոնք վերաբերում են այն ենթակայաններին, որոնց հիմնանորոգման աշխատանքները նախաձեռնվել են ինքնաֆինանսավորմամբ կամ այլ ՄՖՅ-ների ֆինանսավորմամբ («Շինուհայր», «Ազարակ-2» և «Լիճք»):</b>		
8	ԲԵՏ-ն կկիրառի ուժեղացված ՇՄՍԿՅ:	Միջոցառումները և վերջնաժամկետները համաձայն ՇՄՍԿՅ-ի ստորև նշված 9-20 գործողությունների:
<b>Գործողություններ, որոնք ուղղված են ԲԵՏ-ի կորպորատիվ ՇՄՍԿՅ-ի ուժեղացմանը և ISO 14001: 2015-ի Շրջակա միջավայրի կառավարման համակարգերին համապատասխանության հավաստագիր ստանալուն:</b>		
9	ԲԵՏ-ը կմշակի և կընդունի ՇՄ և Ս բաղաբաղկանության մասին հայտարարություն և գործադիր տնօրենի ստորագրությամբ կարգադրություն՝ այդ կանոնների մասին ամբողջ աշխատակազմին իրազեկելով:	1-ին տարի
10	ԲԵՏ-ը կներկայացնի շրջակա միջավայրի, սոցիալական և կառավարման (ՇՄՍԿ) արժեքների լայն համակարգի սահմանում, որը համաաշխարհային կորպորատիվ կառավարման ասպարեզում ընդունված գործելակերպ Է և հատկապես կարևոր է այն ընկերությունների համար, որոնք ձգտում են ֆինանսավորում ներգրավել միջազգային բանկերից և կապիտալի շուկաներից:	1-ին տարի
11	ԲԵՏ-ն կմշակի և կընդունի աշխատավայրում խտրականության և սեռական ոտնձգությունների դեմ կանոններ և կհաղորդի դրանք ղեկավարներին, վերահսկիչներին և աշխատակիցներին՝ ցուցաբերելով զրոյական հանդուրժողականություն սեռական ոտնձգությունների և խտրականության ցանկացած ձևի (բանավոր կամ ֆիզիկական) նկատմամբ:	1-ին տարի
12	ԲԵՏ-ն կմշակի և կիրառի ընթացակարգեր՝ բացահայտելու ՇՄ և Ս ռիսկերը և ազդեցությունները իր գործունեության բոլոր հիմնական ոլորտներում: Ռիսկերի գնահատման գործընթացի շրջանակներում ԲԵՏ-ն կխորհրդակցի բոլոր ազդակիր խմբերի հետ՝ արձանագրելով այդ ուղղությամբ իրականացված քայլերը և քննարկումների հիմնական արդյունքները, և հետամուտ կլինի դրանց:	1-ին տարի
13	ԲԵՏ-ն կմշակի հիմնական շահակիցների/շահագրգիռ կողմերի քարտեզը, ներառյալ բոլոր ազդակիր խմբերին, և կմշակի շահակիցների կարիքներին արձագանքելու կանոններ և ընթացակարգ:	1-րդ տարի
14	ԲԵՏ-ն կմշակի և կիրականացնի ՇՄ և Ս պլանների և ընթացակարգերի իրականացման գործողությունների պլան և համապատասխան ստորաբաժանումներին կհանձնարարի բացահայտել և մեղմել ՇՄ և Ս ռիսկերն ու ազդեցությունները իր գործունեության բոլոր հիմնական ոլորտներում:	2-րդ տարի
15	ԲԵՏ-ն կմշակի և կիրականացնի վերապատրաստման ծրագիր՝ նորաստեղծ վարչության և այլ հիմնական աշխատակազմի կարողությունները բարձրացնելու՝ արդյունավետ Շրջակա միջավայրի և սոցիալական	2-րդ տարի

No	Գործողություն	Ժամկետ
	կառավարման համակարգի կանոններ և ընթացակարգեր ներդնելու համար:	
16	ԲԵՑ-ն կմշակի ընթացակարգ և կնշանակի պատասխանատուների՝ ազդակիր համայնքներին հիմնական ռիսկերի և գործողությունների ծրագրերի մասին իրազեկելու համար:	1-ին տարի
17	Արտակարգ իրավիճակների պատրաստության և արձագանքման համար ԲԵՑ-ը պարբերաբար խորհրդակցություններ կանցկացնի համայնքի հետ՝ տեղամասում (on-site) և դրա սահմաններից դուրս (off-site) արտակարգ իրավիճակների սցենարներ կազմելու համար:	2-րդ տարի
18	Աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման (OHS) ոլորտում ԲԵՑ-ն պայմանագրային աշխատողների համար կապահովի անվտանգության նույնպիսի մակարդակ, ինչ որ հաստիքային աշխատողների, այդ թվում՝ ծրագրերի և ընթացակարգերի վերանայման և պայմանագրային և ենթակապալով ներգրավված աշխատողների վերապատրաստման միջոցով:	2-րդ տարի
19	ԲԵՑ-ը կապահովի բոլոր աշխատակիցների կողմից բողոքների ներկայացման արդյունավետ մեխանիզմի ներդրումը և գործարկումը:	2-րդ տարի
20	ԲԵՑ-ը կմշակի բոլոր զգալի ՇՄ և Ս ռիսկերի, ինչպես նաև առավել հավանական ռիսկերի մշտադիտարկման ընթացակարգ և համապատասխան աշխատակիցների կնշանակի, որոնք վերջինիս գործառնությունների շրջանակներում պատասխանատու կլինեն այդ ռիսկերի մշտադիտարկման համար:	3-րդ տարի

Արդյունքահեն ծրագրի շրջանակներում աջակցություն կտրամադրվի բոլոր գործողությունների համար, որոնց համար կամ արդեն իսկ կան միջոցառումներ, կամ հետագա լավագույն պրակտիկան առաջարկելու պոտենցիալ կա: Դրանք բերված են ստորև.

**Սակագներ** - Չնայած սոցիալապես անապահով խմբերն արդեն իսկ օգտվում են սակագների նվազեցումից, ցանկացած ավելացում կարող է ոչ համամասնորեն ազդել նրանց վրա, կամ այլ տնային տնտեսություններին մղել, այս կատեգորիա: Ակնկալվում է, որ իջեցված սակագների համակարգը կշարունակի մնալ՝ անապահով խմբերին աջակցելու համար, և ակնկալվում է, որ սակագների բարեփոխումների արդյունքում կլինեն սակագների հարաբերականորեն միայն փոքր բարձրացումներ (գնաճի մակարդակներից ներքև):

**Օրենսդրական և կարգավորող փոփոխություններ** - Ակնկալվում է, որ վերականգնվող էներգիայի օգտագործումը կավելանա՝ այդ թվում նաև սոցիալական և հողմային էներգիայի ոլորտում ներդրումների միջոցով: Խորհուրդ է տրվում, որպեսզի օրենքների ուժի մեջ մտնելուց հետո կիրառվող ցանկացած կանոնակարգ կամ ուղեցույց ներառի առաջարկություններ նյութերի պատասխանատու աղբյուրի և ժամկետի ավարտին պատասխանատու հեռացման վերաբերյալ:

**Շուկայի ազատականացում** – Սոցիալական ռիսկերը ներառում են մասնավոր և հանրային հատվածի վատ իրազեկումը և ընկալումը ընթացող շուկայի ազատականացման բարեփոխումների մասին: ԱՄՆ ՄՉԳ-ն արդեն իսկ ներառում է իրազեկման բարձրացումը և հաղորդակցությունը շուկայի

ազատականացման մասին, ինչպես նաև իրազեկման և հաղորդակցության պոտենցիալ բացերը մոնիթորինգի կենթարկվեն և կլուծվեն ԱՄՆ ՄՁԳ-ի հետ սերտ համագործակցության համատեքստում:

**Բացառումներ** – Արդյունքահեն ֆինանսավորման քաղաքականության համաձայն կբացառվի աջակցությունը ցանկացած այնպիսի ներդրումներին, որոնք դատողությունների համաձայն, կարող են հավանական զգալի բացասական ազդեցություններ ունենալ շրջակա միջավայրի և/կամ ազդակիր անձանց վրա, ազդեցություններ, որոնք զգայուն են, բացասական են, կամ աննախադեպ են:

**Հավելված 1: Ծրագրի արդյունքային շրջանակ**

**Ծրագրի զարգացման նպատակ (-ներ)**

Էլեկտրահաղորդման ցանց վերականգնվող էներգետիկ ավելացված կարողությունների ինտեգրման ապահովում և էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակության բարելավում:

**Մասհանումների հետ կապված ցուցանիշեր (ՄԿՑ-ներ)**

**Աղյուսակ 3. ՄԿՑ-ներ, ՄԿԱ-ներ, հատկացումներ և ՄԿՑ-ների ապահովման ինդիկատիվ ժամանակացույց**

Մասհանումների հետ կապված ցուցանիշներ (ՄԿՑ-ներ)	Մասհանումների հետ կապված արդյունքներ (ՄԿԱ) և դրանց ձեռքբերման ուղենշային ժամանակացույց					
	Ելակետային / Նախնական արդյունքներ (ՆԱ)	Տարի 1 (Դեկտեմբեր, 2024թ.)	Տարի 2 (Դեկտեմբեր, 2025թ.)	Տարի 3 (Դեկտեմբեր, 2026թ.)	Տարի 4 (Դեկտեմբեր, 2027թ.)	Տարի 5 (Դեկտեմբեր, 2028թ.)
<b>Արդյունքային ոլորտ 1: Էլեկտրահաղորդման ցանց վերականգնվող էներգետիկ ավելացված կարողությունների ինտեգրման ապահովում</b>						
<b>ՄԿՑ #1:</b> Ավտոմատացված վերահսկման և թվային պաշտպանության համակարգերով հագեցած հաղորդման ենթակայանների հզորության տոկոսային ավելացում  (Մասշտաբը փոփոխվող (scalable) ՄԿՑ, 12 մլն ԱՄՆ դոլար)	<b>Բանաձև</b> - Ելակետային 43%-ից 211,000 ԱՄՆ դոլար կվճարվի ավտոմատացված վերահսկման և թվային պաշտպանության համակարգերով հագեցած հաղորդման ենթակայանների կարողությունների ավելացող յուրաքանչյուր տոկոսային կետի համար, մինչև 12,000,000 ԱՄՆ դոլարի բաշխումը:					
	<b>Ելակետ #1 (2022):</b> 43 տոկոս  <b>ՆԱ #1:</b> 50 տոկոս	<b>ՄԿԱ #1.1:</b> 70 տոկոս	<b>ՄԿԱ #1.2:</b> 75 տոկոս	<b>ՄԿԱ #1.3:</b> 76 տոկոս	Կիրառելի չէ:	<b>ՄԿԱ #1.4:</b> 100 տոկոս
	<b>1.477 մլն ԱՄՆ դոլար</b>	<b>4.220 մլն ԱՄՆ դոլար</b>	<b>1.055 մլն ԱՄՆ դոլար</b>	<b>0.211 մլն ԱՄՆ դոլար</b>	<b>0</b>	<b>5.037 մլն ԱՄՆ դոլար</b>
<b>ՄԿՑ #2:</b> Հաղորդման	<b>Բանաձև`</b> Ելակետային 2,711 ՄԿԱ-ից 31 հազար ԱՄՆ դոլար հաղորդման ենթակայանի կարողության յուրաքանչյուր ՄԿԱ-ի ավելացման համար` ընդհուպ մինչև հատկացված 12 մլն ԱՄՆ դոլար:					

Մասհանումների հետ կապված ցուցանիշներ (ՄԿՑ-ներ)	Մասհանումների հետ կապված արդյունքներ (ՄԿԱ) և դրանց ձեռքբերման ուղենշային ժամակացույց					
	Ելակետային / Նախնական արդյունքներ (ՆԱ)	Տարի 1 (Դեկտեմբեր, 2024թ.)	Տարի 2 (Դեկտեմբեր, 2025թ.)	Տարի 3 (Դեկտեմբեր, 2026թ.)	Տարի 4 (Դեկտեմբեր, 2027թ.)	Տարի 5 (Դեկտեմբեր, 2028թ.)
Ենթակայանների ընդհանուր կարողություններ ի ավելացում (Շարունակական ՄԿՑ, 12 մլն ԱՄՆ դոլար)	Ելակետ #2 (2022): 2,711 ՄԿԱ  ՆԱ #2: 2,835 ՄԿԱ	ՄԿԱ #2.1: 2,960 ՄԿԱ	ՄԿԱ #2.2: 3,084 ՄԿԱ	ՄԿԱ #2.3: 3,109 ՄԿԱ	Կիրառելի չէ:	Կիրառելի չէ:
	<b>3.844 մլն ԱՄՆ դոլար</b>	<b>3.875 մլն ԱՄՆ դոլար</b>	<b>3.844 մլն ԱՄՆ դոլար</b>	<b>0.437 մլն ԱՄՆ դոլար</b>	<b>0</b>	<b>0</b>
<b>ՄԿՑ #3:</b> Էներգահամակարգի պլանավորման, գործարկման և կարգավորման բարելավում (Դիսկրետ ՄԿԱ, 2 մլն ԱՄՆ դոլար)	Ելակետ #3 (2022): Էլեկտրաէներգետիկ ական համակարգի օպերատորը (EPSO) հրապարակել է ցանցի զարգացման տասնամյա ծրագրի առաջին թարմացումը:	ՄԿԱ #3.1: Էլեկտրաէներգետիկ ական համակարգի օպերատորը (EPSO) հրապարակել է ցանցի զարգացման տասնամյա ծրագրի երկրորդ թարմացումը:	Կիրառելի չէ:	ՄԿԱ #3.2: Էլեկտրաէներգետիկ ական համակարգի օպերատորը (EPSO) հրապարակել է ցանցի զարգացման տասնամյա ծրագրի երրորդ թարմացումը:	ՄԿԱ #3.3: Ազգային ժողով են ներկայացվել Էլեկտրաէներգիայի և Էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի մասին Նոր օրենքների Նախագծերը՝ CEPA-ի համաձայնագրին համապատասխանեցված, որոնցով սահմանվում են հաղորդման ցանցի օպերատորի և էներգիայի կուտակիչների ներդրումային գործունեության գործառույթները՝ ԵՄ չափանիշներին համապատասխան:	ՄԿԱ #3.4: ՀԵԿՀ-ն ունի. (i) հաստատված նվազագույն օպերատիվ կանոններ և պարտավորություններ ցանցային անվտանգության վերաբերյալ, որոնք համապատասխանում են 2005/89/EC դիրեկտիվին և (ii) հրապարակել են արտակարգ իրավիճակներում ԲԷՑ-ի կողմից անհամաչափությունների կառավարման հետ կապված չափանիշները:
	<b>0</b>	<b>0.3 մլն ԱՄՆ դոլար</b>	<b>0</b>	<b>0.3 մլն ԱՄՆ դոլար</b>	<b>0.9 մլն ԱՄՆ դոլար</b>	<b>0.5 մլն ԱՄՆ դոլար</b>

Մասհանումների հետ կապված ցուցանիշներ (ՄԿՑ-ներ)	Մասհանումների հետ կապված արդյունքներ (ՄԿԱ) և դրանց ձեռքբերման ուղենշային ժամակացույց					
	Ելակետային / Նախնական արդյունքներ (ՆԱ)	Տարի 1 (Դեկտեմբեր, 2024թ.)	Տարի 2 (Դեկտեմբեր, 2025թ.)	Տարի 3 (Դեկտեմբեր, 2026թ.)	Տարի 4 (Դեկտեմբեր, 2027թ.)	Տարի 5 (Դեկտեմբեր, 2028թ.)
<b>ՄԿՑ #4:</b> Էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման ուղղությամբ գրանցված առաջընթաց: (Դիսկրետ ՄԿԱ, 3 մլն ԱՄՆ դոլար)	<b>Ելակետ #4 (2021):</b> Հայաստանը 2021-ից առաջ չունեւ էլեկտրաէներգիայի ազատականացված մեծածախ շուկա:	<b>ՄԿԱ#4.1:</b> ՀԾԿՀ-ն սահմանել է, որ 35 կՎ և ավելի բարձր լարման էլեկտրաէներգիայի խոշոր <sup>8</sup> սպառողները պետք է ազատականացված մեծածախ շուկայում դառնան որակավորված սպառողներ կամ ընտրեն մատակարար:	<b>ՄԿԱ #4.2:</b> (i) ՀԾԿՀ-ն սահմանել է, որ 6/10կՎ և ավելի բարձր լարման էլեկտրաէներգիայի խոշոր սպառողները պետք է ազատականացված մեծածախ շուկայում դառնան որակավորված սպառողներ կամ ընտրեն մատակարար: (ii) ՀԾԿՀ-ն ունի բավարար անձնակազմով համալրված և լիովին գործող շուկայի մոնիթորինգի գործառույթ:	<b>ՄԿԱ #4.3:</b> ՀԾԿՀ-ն սահմանել է, որ Էլեկտրաէներգիայի բոլոր խոշոր սպառողները պետք է ազատականացված մեծածախ շուկայում դառնան որակավորված սպառողներ կամ ընտրեն մատակարար՝ անկախ լարման մակարդակից:	<b>ՄԿԱ #4.4:</b> ԲԷՑ-ը թարմացրել է հաղորդման ցանցի կորուստների չափման ենթակառուցվածքը, որպեսզի թույլ տա Էլեկտրաէներգիայի հաղորդման բոլոր կորուստների ճշգրիտ հաշվառում՝ ժամային կտրվածքով:	<b>ՄԿԱ #4.5:</b> ՀԿԾՀ-ն Էականորեն կրճատել է սպառման շեմը, որից բարձր էլեկտրականության մեծածախ սպառողները պետք է դառնան որակավորված սպառողներ կամ ընտրեն մատակարար:
	0	0.5 մլն ԱՄՆ դոլար	1.0 մլն ԱՄՆ դոլար	0.5 մլն ԱՄՆ դոլար	0.5 մլն ԱՄՆ դոլար	0.5 մլն ԱՄՆ դոլար

**Արդյունքային ոլորտ 2: Էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակության բարելավում**

<sup>8</sup> Այս պահին սահմանվել է տարեկան 1 ԳՎտժից ավել սպառում ունեցող սպառողներ:

Մասհանումների հետ կապված ցուցանիշներ (ՄԿՑ-ներ)	Մասհանումների հետ կապված արդյունքներ (ՄԿԱ) և դրանց ձեռքբերման ուղենշային ժամակացույց					
	Ելակետային / Նախնական արդյունքներ (ՆԱ)	Տարի 1 (Դեկտեմբեր, 2024թ.)	Տարի 2 (Դեկտեմբեր, 2025թ.)	Տարի 3 (Դեկտեմբեր, 2026թ.)	Տարի 4 (Դեկտեմբեր, 2027թ.)	Տարի 5 (Դեկտեմբեր, 2028թ.)
<b>ՄԿՑ #5:</b> Էլեկտրահաղորդման ցանցի ենթակառուցվածքների համար առևտրային կապիտալի հավաքագրման ավելացում: <i>(Դիսկրետ ՄԿԱ, 5 մլն ԱՄՆ դոլար)</i>	<b>Ելակետ #5 (2022):</b> ԲԷՑ-ի ներդրումային ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվում է հանրային կամ պետական երաշխիքով փոխառությունների հաշվին և սակագների մեթոդաբանությունը չի նախատեսում արտարժույթով առևտրային փոխառության ռիսկերի ստանձնում:	<b>ՄԿԱ #5.1:</b> ԲԷՑ-ի խորհուրդը հաստատել է 2024-2030թթ. ֆինանսավորման ռազմավարությունը և ճանապարհային քարտեզը:	Կիրառելի չէ:	<b>ՄԿԱ #5.2:</b> (i) ԲԷՑ-ը սակագնի հայտ է ներկայացրել՝ համաձայն վերանայված մեթոդաբանության, <sup>9</sup> որը նաև արտացոլում է կադրային ապահովումը՝ ներառյալ տեխնիկական, ֆիզուցիար և շրջակա միջավայրի ու սոցիալական գործառույթները, (ii) ՀԿԾՀ-ն ընդունել է ԲԷՑ-ի ԷլեկտրաԷներգիայի Նոր սակագինը՝ վերանայված մեթոդաբանության համաձայն:	<b>ՄԿԱ #5.3:</b> ԲԷՑ-ի կորպորատիվ կանոնակարգը թարմացվել է, որպեսզի հնարավորություն տրվի պարտք թողարկել՝ վարկավորման համապատասխան կարգավորման բարելավմամբ, և ԲԷՑ-ը վարկանիշ է ձեռք բերել կամ ընկերության համար, կամ որոշակի ապահովված պարտատոմսերի թողարկման համար:	<b>ՄԿԱ #5.4:</b> ԲԷՑ-ը պիլոտավորել է առաջին առևտրային ֆինանսավորման գործարքը:
	0	1 մլն ԱՄՆ դոլար	0	2 մլն ԱՄՆ դոլար	1 մլն ԱՄՆ դոլար	1 մլն ԱՄՆ դոլար

<sup>9</sup> Սակագնի վերանայված մեթոդաբանությունը հիմնված կլինի՝ Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորված և KPMG-ի կողմից վերջերս կատարված հետազոտության արդյունքների վրա, որը գնահատել է ԲԷՑ-ի ֆինանսական վիճակը և կատարողականը և առաջարկություններ ներկայացրել ԲԷՑ-ին առևտրային ֆինանսավորման անցնելու համար: Վերանայված սակագինը պետք է ապահովի կարգավորվող վճարների բազմամյա կանխատեսելիություն և բավարար չափով հատույց՝ արտարժույթով առևտրային ֆինանսավորման համար: Հետազոտության արդյունքները մանրամասն քննարկվում են կից բերված Հավելված 3-ում:



Մասհանումների հետ կապված ցուցանիշներ (ՄԿՑ-ներ)	Մասհանումների հետ կապված արդյունքներ (ՄԿԱ) և դրանց ձեռքբերման ուղենշային ժամկացույց					
	Ելակետային / Նախնական արդյունքներ (ՆԱ)	Տարի 1 (Դեկտեմբեր, 2024թ.)	Տարի 2 (Դեկտեմբեր, 2025թ.)	Տարի 3 (Դեկտեմբեր, 2026թ.)	Տարի 4 (Դեկտեմբեր, 2027թ.)	Տարի 5 (Դեկտեմբեր, 2028թ.)
<b>ՄԿՑ #6:</b> Առաջընթաց ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման համակարգերի արդիականացման ուղղությամբ: (Դիսկրետ ՄԿԱ, 2 մլն ԱՄՆ դոլար)	<b>Ելակետ #6 (2023):</b> ԲԷՑ-ը չի իրականացրել էներգետիկ բնագավառի ռազմավարական ծրագրով (մինչև 2040 թվականը) նախատեսված կառավարման արդիականացման թիրախներից որևէ մեկը:	Կիրառելի չէ:	<b>ՄԿԱ #6.1:</b> ԲԷՑ-ը ստացել է Որակի կառավարման համապատասխանության ISO 9001: 2015 սերտիֆիկացում:	<b>ՄԿԱ #6.2:</b> ԲԷՑ-ը ստացել է Կառավարման հակակոռուպցիոն համակարգերի (Anti-Bribery Management Systems) համապատասխանության սերտիֆիկացում ISO 37001:	<b>ՄԿԱ #6.3:</b> ԲԷՑ-ը ստացել է ISO 27001: Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերին համապատասխանության սերտիֆիկացում:	<b>ՄԿԱ #6.4:</b> ԲԷՑ-ը ստացել է Բնապահպանական կառավարման համակարգերի համապատասխանության ISO 14001: 2015 սերտիֆիկացում:
	0	0	0.5 մլն ԱՄՆ դոլար	0.5 մլն ԱՄՆ դոլար	0.5 մլն ԱՄՆ դոլար	0.5 մլն ԱՄՆ դոլար

Մասհանումների հետ կապված ցուցանիշներ (ՄԿՑ-ներ)	Մասհանումների հետ կապված արդյունքներ (ՄԿԱ) և դրանց ձեռքբերման ուղենշային ժամակացույց					
	Ելակետային / Նախնական արդյունքներ (ՆԱ)	Տարի 1 (Դեկտեմբեր, 2024թ.)	Տարի 2 (Դեկտեմբեր, 2025թ.)	Տարի 3 (Դեկտեմբեր, 2026թ.)	Տարի 4 (Դեկտեմբեր, 2027թ.)	Տարի 5 (Դեկտեմբեր, 2028թ.)
<b>ՄԿՑ #7:</b> ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման արդիականացման առաջընթաց: (Դիսկրետ ՄԿՑ, 4 մլն ԱՄՆ դոլար)	<b>Ելակետ #7 (2023):</b> ԲԷՑ-ի խորհրդի դերը հստակ սահմանված չէ, չկան խորհրդի՝ բավարար չափով համալրված հանձնաժողովներ, և չկան իգական սեռի ներկայացուցիչներ, չկան խորհրդի անկախ անդամներ:	<b>ՄԿԱ #7.1:</b> Խորհրդի դերը ռազմավարության հաստատման, կատարողականի նպատակների և մոնիթորինգի, ղեկավարման հսկողության և վերահսկողության դերը ԲԷՑ-ի կանոնադրական փաստաթղթերում բավարարում է Հայաստանի կորպորատիվ կառավարման կանոնագրքին:	<b>ՄԿԱ #7.2:</b> Ստեղծվել է Խորհրդի առևտրի կամ առևտրի և ռիսկերի միավորված հանձնաժողով՝ համալրված համապատասխան հմտություններ և փորձ ունեցող աշխատակիցներով և Հայաստանի կորպորատիվ կառավարման կանոնագրքին համապատասխան տեխնիկական առաջադրանքով:	<b>ՄԿԱ #7.3:</b> Ստեղծվել է Հայաստանի կորպորատիվ կառավարման կանոնագրքի տեսակետից ընդունելի տեխնիկական առաջադրանքով Խորհրդի աշխատակիցների թեկնածությունների ներկայացման և վարձատրության հանձնաժողով՝ համալրված համապատասխան հմտություններ և փորձ ունեցող աշխատակիցներով:	<b>ՄԿԱ #7.4:</b> Ստեղծվել է Հայաստանի կորպորատիվ կառավարման կանոնագրքի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքով Խորհրդի ներդրումային հանձնաժողով՝ համալրված համապատասխան հմտություններ և փորձ ունեցող աշխատակիցներով:	<b>ՄԿԱ #7.5:</b> ԲԷՑ-ի խորհրդում առնվազն երկու պաշտոն զբաղեցնում են խորհրդի անկախ անդամներ, և խորհրդի անդամների առնվազն [30] տոկոսը իգական սեռի ներկայացուցիչներ են:
	0	0.5 մլն ԱՄՆ դոլար	0.5 մլն ԱՄՆ դոլար	0.5 մլն ԱՄՆ դոլար	0.5 մլն ԱՄՆ դոլար	2 մլն ԱՄՆ դոլար

**Հավելված 2: Ծրջակա միջավայրի և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների սքրինինգ**

**Առաջարկվող Ծրագրի շրջակա միջավայրի և սոցիալական ասպեկտների նախնական վերլուծությունը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:**

**Ծրագրի զարգացման նպատակ (ԾՆՆ)** – Էլեկտրահաղորդման ցանց վերականգնվող Էներգետիկ ավելացված կարողությունների ինտեգրման ապահովում և Էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակության բարելավում:

**Ծախսեր** – Գնահատականի համաձայն պետական ծրագրի ընդհանուր արժեքը գերազանցում է 2.1 մլրդ ԱՄՆ դոլար, 2022-2040թթ-ի համար: Առաջարկվող Արդյունքահեն ծրագիրը կիրականացվի 2024թ-ից 2029թ-ի ընթացքում և գնահատված արժեքը կկազմի 70 մլն ԱՄՆ դոլար, որից 40 մլն ԱՄՆ դոլարը կվճարվի ՎՋՄՔ վարկից, իսկ մնացած մասը՝ ԲԵՑ-ի սեփական ռեսուրսներ հաշվին:

Արդյունքային ցուցանիշեր	ՇՄ և Ս ազդեցություններ և ռիսկեր	ՇՄՄԳ շրջանակը
<b>Արդյունքային ոլորտ 1: Էլեկտրահաղորդման ցանց վերականգնվող Էներգետիկ ավելացված կարողությունների ինտեգրման ապահովում</b>		
<p>ՄԿՑ 1: Ավտոմատացված վերահսկման և թվային պաշտպանության համակարգերով հագեցած հաղորդման ենթակայանների հզորության տոկոսային ավելացում (Ավելացող ՄԿՑ, 12 մլն ԱՄՆ դոլար)</p> <p>ՄԿՑ 2: Հաղորդման ենթակայանների ընդհանուր կարողությունների ավելացում (Ավելացող ՄԿՑ, 12 մլն ԱՄՆ դոլար)</p>	<p>Հիմնանորոգման աշխատանքների համար չկան ՇՄ և Ս գնահատումներ: Իրականացվող ծրագրերի շրջանակներում, որոնք մշակվել և իրականացվել են երաշխիքների քաղաքականությունների շրջանակներում, ԲԵՑ-ը մշակել է Ծրջակա միջավայրի կառավարման պլաններ (ՇՄԿ-ներ), որոնք անցել են հանրային քննարկումներ մոտակա համայնքներում: Խորհրդատվական միջոցառումների ընթացքում Կապալառու Մոնիթորինգային բնապահպանական հաշվետվություններ (MER) է ներկայացրել ԲԵՑ-ին: Գոյություն ունեցող ենթակայաններում սարքավորումների վերջնական նախագծման, գնումների, տեղադրման, փորձարկման և շահագործման հանձնելու համար ԲԵՑ-ը վարձում է գլխավոր կապալառու (turnkey contractor): Կապալառուի՝ Ծրջակա միջավայրի հարցերով թիմերը պատասխանատու են Ծրջակա միջավայրի կառավարման պլանների իրականացման համար և ԲԵՑ-ի ՇՄ և Ս թիմը պատասխանատու էր</p>	<p>Էլեկտրահաղորդման ենթակայանների հիմնանորոգումը սովորաբար ներառում է գոյություն ունեցող տրանսֆորմատորների կատարելագործումը և/կամ փոխարինումը:</p> <p>- Երեք ենթակայանները, որոնք ամբողջական հիմնանորոգման կարիք ունեն, ներառում են “Շահումյան-2” (220/110/10 կՎ, մասնակի հիմնանորոգված 2003-2004թթ.), “Մարաշի” (220/110/10 կՎ, մասամբ վերանորոգված 2004թ.) և “Եղեգնաձորի” ենթակայանները (220/110/35 կՎ, որը չի վերանորոգվել 1966թ-ից ի վեր շահագործման հանձնելուց հետո):</p> <p>- «Արարատ-2», «Չարենցավան-3» և « Չովունի» ենթակայանների հիմնանորոգումը սկսվել է Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ ներդրումային ծրագրի ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում (Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր (ETNIP) և</p>

Արդյունքային ցուցանիշեր	ՇՄ և Ս ազդեցություններ և ռիսկեր	ՇՄՄՀԳ շրջանակը
	<p>Բնապահպանական մոնիթորինգային, կիսամյակային հաշվետվությունները Բանկին ներկայացնելու Կառավարության և Բանկի պահանջներին կապալառուի համապատասխանության ապահովումը վերահսկելու համար:</p> <p>Ենթակայանների հիմնանորոգման արդյունքում ակնկալվող սոցիալական ազդեցությունները նախ և առաջ վերաբերում է աշխատանքի և աշխատանքային պայմաններին և հիմնանորոգման միջոցառումների ընթացքում վերջնական օգտագործողներին Էլեկտրամատակարարման խաթարումներին, որոնք փոքր են և լավ կառավարվող: Չնայած ենթակայանները ցանկապատված են և չի ազդրված անձանց մուտքը խստիվ արգելվում է, շինհրապարակի վատ կառավարման արդյունքում առկա է համայնքի առողջության և անվտանգության վտանգ:</p> <p>Հիմնանորոգման աշխատանքները տեղի կունենան ենթակայանների տարածքում, ուստի հողի օտարման ազդեցություններ չեն սպասվում և կստուգվեն նախապատրաստման ընթացքում: SEA/SH ռիսկերը, շինարարական աշխատանքների հետ կապված համայնք-աշխատակիցներ փոխգործակցությամբ, ցածր են համարվում:</p> <p>Ենթակայաններում հիմնանորոգման աշխատանքները կունենան բնապահպանական մի շարք ազդեցություններ, որոնք բնորոշ են ֆիզիկական աշխատանքների և ենթակայաններում նոր սարքավորումների բարելավման/տեղադրման համար: Բնապահպանական բոլոր ազդեցությունների շրջանում թափոնների կառավարումը կլինի ամենախնդրահարույցը՝ պայմանավորված երկրի թեզարգացած կանոնակարգող և ենթակառուցվածքային համակարգերով:</p> <p>Ենթակայանների հիմնանորոգման արդյունքում վտանգավոր թափոններ կգեներացվեն, ինչպես</p>	<p>Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագիր (ESRP), սակայն չի ավարտվել ենթակառուցվածքային ծրագրի ֆինանսավորման (IPF) ժամանակահատվածում («Արարատ-2» «Չարենցավան-3» և «Չովունի» ենթակայաններ) – ՇՄՍԿՊ-ները այս ենթակայանների համար կան: «Էլեկտրահաղորդման ցանցի ծրագրի» և Ծրագրի շրջանակներում Էլեկտրահաղորդման ենթակայանների հիմնանորոգման ԲԷՑ-ի ՇՄ և Ս համակարգերի ուսումնասիրություն: Արդյունքահեն ֆինանսավորման քաղաքականության համաձայն կբացառվի ազդեցությունը ցանկացած այնպիսի ներդրումներին, որոնք Էական բացասական, աննախադեպ ազդեցություն կունենան շրջակա միջավայրի և/կամ մարդկանց վրա:</p>

Արդյունքային ցուցանիշեր	ՇՄ և Ս ազդեցություններ և ռիսկեր	ՇՄՄԳ շրջանակը
	<p>օրինակ՝ կապարե թթվով մարտկոցները, տրանսֆորմատորների յուղը, մնդիկի լամպերը և այլն, որոնց համար պահանջվում են պահուստավորման սպեցիֆիկ միջոցառումներ: Օգտագործված յուղի և քսայուղերը թափվելու և արտահոսքի հետ կապված պոտենցիալ ռիսկերը և ազդեցություններն ակնկալվում են մարդածին և բնական աղետների արդյունքում:</p>	
<p>ՄԿՑ 3: Էներգահամակարգի պլանավորման, գործարկման և կարգավորման բարելավում (Դիսկրետ ՄԿՑ, 2 մլն ԱՄՆ դոլար)</p>	<p>Ցանցի զարգացման տասնամյա ծրագիր կմշակվի և Էլեկտրաէներգիայի մասին օրենքը և Էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի մասին օրենքը կներկայացվի Խորհրդարան:</p> <p>Հիմնական սոցիալական ռիսկերը նաև վերաբերում են Էներգիայի ռեակտիվ գնագոյացումը սակագնի կառուցվածքում ներառելու արդյունքում սակագների պոտենցիալ ավելացմանը:</p>	<p>Տեխնիկատնտեսական իրագործելիության ուսումնասիրություններ կնախաձեռնվեն ներդրումներից յուրաքանչյուրի համար, սակայն ոչ ծրագրի ամփոփումից առաջ: Ազգային պահանջների համաձայն օրենսդրական փոփոխությունները ենթակա են կանոնակարգային ազդեցության գնահատման:</p> <p>Արևային մարտկոցների կայուն և պատասխանատու աղբյուրների ստացման և կենսացիկլի վերջում վերամշակման վերաբերյալ ուղղորդում տրամադրելու հնարավորությունների գնահատում:</p> <p>ՄԿՑ 5-ի շրջանակներում քննարկվում է սակագների համար ՇՄՄԳ-ի շրջանակը:</p>
<p>ՄԿՑ 4: Էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման ուղղությամբ գրանցված առաջընթաց: (Դիսկրետ ՄԿՑ, 3 մլն ԱՄՆ դոլար)</p>	<p>Սոցիալական ռիսկերը ներառում են շուկայի ազատականացման ընթացող բարեփոխումների մասին մասնավոր հատվածի և ընդհանուր հասարակության վատ իրազեկումը և ընկալումը:</p>	<p>ԱՄՆ ՄՉԳ-ն արդեն իսկ օժանդակում է շուկայի ազատականացման բարեփոխումների մասին իրազեկման բարձրացմանը և հաղորդակցությանը, իրազեկման և հաղորդակցության հետ կապված պոտենցիալ բացերը մոնիթորինգի կենթարկվեն և կլուծվեն ԱՄՆ ՄՉԳ-ի հետ սերտ համագործակցության պայմաններում:</p>
<p><b>Արդյունքային ոլորտ 2: Էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակության բարձրացում</b></p>		
<p>ՄԿՑ 5: Էլեկտրահաղորդման ցանցի ենթակառուցվածքների համար առևտրային կապիտալի</p>	<p>Հիմնական սոցիալական ռիսկերը վերաբերում են սակագների պոտենցիալ բարձրացմանը: Չնայած սոցիալապես խոցելի խմբերն արդեն իսկ շահում են</p>	<p>Գործող սոցիալական պաշտպանության համակարգեր, որոնք կապահովեն, որպեսզի սոցիալակապես խոցելի խմբերն իրականում օգտվեն</p>

Արդյունքային ցուցանիշեր	ՇՄ և Ս ազդեցություններ և ռիսկեր	ՇՄՄԳ շրջանակը
<p>հավաքագրման ավելացում: (Դիսկրետ ՄԿՑ, 5 մլն ԱՄՆ դոլար)</p>	<p>սակագների իջեցումից, ցանկացած ավելացում կարող է անհամամասնորեն ազդել դրանց վրա և այլ տնային տնտեսություններին մղել այդ խումբ: ՀՀ ՀԾԿՀ-ն պատասխանատու է կոմունալ ծառայությունների համար կանոնակարգված սակագներ սահմանելու համար, այդ թվում նաև էլեկտրաէներգիայի համար:</p> <p>Սոցիալապես անապահով ընտանիքները սահմանվում են Կառավարության որոշումով՝ անապահովության մասշտաբի հիման վրա, որը հաշվարկվում է ընտանիքի անապահովության համակարգում (որը հայտնի է նաև որպես ընտանեկան նպաստի համակարգ): Որոշման համաձայն Հանձնաժողովը որպես առանձին խումբ պետք է դիտարկի սոցիալապես անապահով ընտանիքներին և նրանց համար սահմանի հնարավոր նվազագույն սակագները (էլեկտրաէներգիայի և գազի սպառման համար): Որոշումը չի սահմանում սակագները, դրանք հաշվարկվում և սահմանվում են Հանձնաժողովի կողմից:</p>	<p>սակագների իջեցումից, և համակարգերից, որոնք կիստազծեն առաջացող սոցիալապես անապահով խմբերին/տնային տնտեսություններին, որպեսզի վերջիններս օգտվեն դրանից:</p>
<p>ՄԿՑ 6: ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման համակարգերի արդիականացման ուղղությամբ առաջընթաց: (Դիսկրետ ՄԿՑ, 2 մլն ԱՄՆ դոլար)</p> <p>ՄԿՑ 7: ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման արդիականացման առաջընթաց: (Դիսկրետ ՄԿՑ, 4 մլն ԱՄՆ դոլար)</p>	<p>ԲԷՑ-ի կորպորատիվ կառավարման և կորպորատիվ կառավարման համակարգերի ուժեղացումը ունեն դրական ՇՄ և Ս վերջնարդյունքներ ապահովելու պոտենցիալ:</p>	<p>ԲԷՑ-ի կորպորատիվ ՇՄՄԳ-ի ուսումնասիրություն</p>

**Չավելված 3. Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների և ՇՄՍԳ նախագծային տարբերակի հետ կապված աշխատաժողովի ամփոփագիր**

[Պետք է լրացվի խորհրդակցություններից հետո:]